1569

9(47.924)
Г-35

~~301~~ ց 922

9(47.924)
Բ-35 → Բ-37

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՂՈՒԱՆԻՑ

Ա. ՀԱՏՈՐ

2004

Ի ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ

2012

ԹԻՖԼԻՍ.
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի
ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՓՈՂՈՑ № 81.
1900

42426-Ա-Հ

Дозволено Цензурою. Тифлисъ 12 Апрѣля 1900 года.

2012

26009-ԱՔ

՚Ի Հայրապետութեան Տ.Տ. ՄԿՐՏՉԻ Ա.-ոյ

Վեհափառ կաթողիկոսի ամենայն Հայոց:

՚Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ՍՐԲՈՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆԻ

ԵՒ

՚Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՄԱՂԱՔԻԱ ՍՐԲԱԶԱՆԻ

26009-Ա

ՅԱՆՄՈՌԱՑ ՅԻՇԱՏԱԿ

ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ

ԳՐԻԳՈՐԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ

ԵՒ

ԵՂԻՍԱԲԵԹԻ ԱՒԵՏԻՍԵԱՆ

ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ

ՆՈՒԻՐԵՄ

ՄԱԿԱՐ ԵՊԻՍ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ ԽԱՆԱԾԱԽՑԻ

ՈՐ 'Ի ԽԱՉԵՆ ԳԱՒԱՌԻ

ՅԱՐՑԱԽ ՆԱՀԱՆԳԻ

Բագուի Հայոց
Հռիփսիմեան Դպրոց
եկեղ.-ծխակ. (օրիորդաց)

Առ Ամենապատիւ

Տ. Մ. Ս. արքեպիս. Մուրատեանց

*Շատ վաղուց ստացած եմ Ձեր պատուական նամակը, որով պատուիրում էիք ինձ գրել «**Պատմութիւն Աղուանից**»։ Ձեր այս պատուէրն շատ եւ շատ բարձր էր իմ կարողութիւնից. իսկ այդ պատուէրից խոյս տալն եւս աւելի ծանր եւ մինչեւ անգամ անպատուութիւն ինձ համար։ Այս պատճառաւ խնդրած էի Ձերդ Բարձր Սրբազնութիւնից ժամանակ տալ ինձ, որ նախ անձամբ հետազօտեմ Աղուանից ամբողջ երկիրը, աչքովս տեսնեմ երկրի դիրքը, ձեռքովս շօշափեմ ողջ հնութիւնները, ուշի ուշով ականեմ արձանագրութիւնները, յիշատակարանները, խօսուն ու անխօս քարերը, կանգուն ու աւերակ շինութիւնները եւ կոթողները. ծանօթանամ ազգաբնակութեանց եւ լեզուներին եւ ապա գրեմ «Պատմութիւն Աղուանից»։*

Արհամարհելով արիւնարբու աւազակաց վտանգները եւ գիշատիչ գազանների երկիւղները, որք անպակաս են Կովկասեան եւ Անդր-Կովկասեան երկիրներում, մանաւանդ անմարդաբնակ եւ մեծ-մեծ անտառներում, աւերակ քերդերում, ամայի վանքերում, խոր-խոր ձորերում եւ մութ-մութ քարայ-

րերում, ամբողջ 7 ամիս հետախուզեցի Դաղստանի, Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ, Ճառի եւ Բաղասականի ամբողջ գաւառները լեռներով եւ դաշտերով միասին: Հետախուզութեանս արդիւնքն եղաւ «Աղուանից երկ. եւ Դրացիք» գիրքն։ Յետոյ մօտ 7 ամիս խուզարկեցի Գարգարացւոց եւ Ուտեաց, Մուղանի եւ Գագայ դաշտերը եւ Արցախի բոլոր գաւառները, որի արդիւնքն էր «Արցախ»: Այս երկու տպուած գրքերից, որք արժանացած են **իզմիրեան մրցանակին**, իւր ժամանակին արդէն մի մի օրինակ փոշտով յղած եմ Ձերդ Բարձր Սրբազնութեան:

Չբաւականացայ միայն հետազօտութեամբս, Սրբազան Եղբայր, այլ զգուշութեամբ ականեցի հետեւեալ մատեանները, յորոց եւ քաղեցի ինձ կարեւոր եղածները.

Քսենոփոնի խրատ Կիւրոսի	տպ.	Վենետիկ	
Ագաթանգեղոս	«	«	ՌՄՁԴ
Եղիշէ	«	յԵրուսաղ.	1865.
Ղազար Փար.	«	Վենետ.	1891.
Փաւստոս Բուզ.	«	Ս. Պետեր.	1883.
Սեբէոս	«	Կ. Պոլիս	1851.
Մատենագ. Խորենացու . . .	«	Վենետիկ	1843.
Պատմութ. Աղուան. Կաղանկ .	«	Մոսկվա	1860.
« « « .	«	Փարիզ	1860.
« Ղեւոնդեայ	«	Մոսկվ.	1887.
« Յով. Կաթուղիկոսի	«	յԵրուսաղ.	1867.
« Ուխտանիսի . . .	«	Ս. Էջմիած.	1871.
« Ասողկան	«	Ս. Պետեր.	1885.
« Թովմայի Արծր. . .	«	«	1887.
« Ս. Օրբէլեան . . .	«	Փարիզ	1859.
« Մխիթարայ Այրիվան.	«	Մոսկ.	1860.
« Սամուէլի Անեցւոյ .	«	Ս. Էջմի.	1893.
« Մաղաքիայ աբեղայի	«	Ս. Պետեր.	1870.
« Կիրակոսի Գանձակ.	«	Մոսկվ.	1858.
« Վարդան Բարձրբերդ.	«	«	1861.
« Մատթ. Ուռհայեցու	«	յԵրուսաղ.	1869.
« « «	«	Ս. Էջմիած.	1898.
« Սմբատայ Սպարապ.	«	Մոսկվ.	1856.

Պատմութ. Արիստ. Լաստիվերտ.	տպ.	Վենետիկ	1844.
« Թովմայի Մեծոպ. . .	«	Փարիզ	1869.
« Առաքել վարդապ. . .	«	Ս. Էջմիած.	1884.
« Զաքարիա Սարկ. . .	«	«	1870.
« Օսման. Գ. եպ. Այվազ. .	«	Վենետիկ	1841.
« Ժողով. Աբէլ եպիս. .	«	Ս Էջմիած.	1874.
« Հայոց Պալասանեան .	«	Թիֆլիս	1890.
Եկեղ. պատմ. Մ. վ. Մուրատ. .	«	յԵրուսղ.	1872.
Հնախ. Ղուկ. վ. Ինճիճ.	«	Վենետ.	
Ստոր. Հին-Հայ. «	«	«	1822.
« Շահխաթ. «	«	Ս. Էջմիած.	1842.
Հիւսուածք Կ. Կ. հատ. Գ. . . .	«	Վիեննա	1877.
Հնախօսական Տեղեկ. Հաղբատայ	«	Վաղարշպ.	1886.
Քաղ. աշխարհ. Ղ. վ. Ալիշ. . .	«	Վենետիկ	1841.
Այրարատ « « «	«	«	
Սիսական « « «	«	«	
Դատաս. Գօշ Մխիթարայ . . .	«	Ս. Էջմիած.	
Գաղտ. Ղարաբաղի	«	Պետերբ.	1886
Աղուան. երկ. եւ Դրացիք . . .	«	Թիֆլիս	1893.
Արցախ	«	Բագու	1895.

Բաց յայսցանէ աչքից անցուցած եմ Ս. Էջմիածնի Մատենադարանի ձեռագիրներից մի քանիսը, յորոց եւ քաղած այն օգուտը՝ որ վերաբերում է Աղուանից երկրին:

Գրաւոր խնդրեցի Գեր. Հ. Գարեգին Զարբանալեանից, որ բարեհաճի կամ արտագրել տալ եւ ինձ յղել Գօշ Մխիթարից յօրինուած «Տարք հայրապետացն Աղուանից, որք կացին զկնի տեառն Եղիշայի, որ եկն յԵրուսաղէմէ» եւ կամ մատնանիշ անէ թէ ո՞ր թիւ գրչագրի մէջ է գտնուում այն: Բայց որովհետեւ հիւանդ եղած է Հ. Գ. Զարբանալեան, իմ յանձնարարութիւնը կատարած է Բարեշնորհ Եսայի վարդապետ Տայեցին. արտագրութիւնը ընդունեցի մեծ շնորհակալութեամբ:

Աշխարհագրութեան քարտէզը—բնագիրը ձրիաբար գծած է բնիկ Շուշեցի իմ հայրենակից սիրելի Գեղամ Գանջեցեանցն, որ ուսանում է Գէորգեան ճեմարանիս Բ. լսարանումն:

Այդ բոլորը պատրաստելուց յետոյ՝ այժմ ապաւինելով

յառատաձեռ շնորհս Հոգւոյն Սրբոյ՝ ահա սկսեցի իմովսամն կատարել Ձեր պատուէրը, որ յաւէտ օգտակար է Հայոց մատենագրութեան. օգտակար է ներկայ եւ ապագայ հայ բանասիրաց, որք կըհետաքրքրուին Աղուանից երկրով եւ նորա անցեալ պատմութեամբ։

Կաղաչեմ, Սրբազան Ողբայր, թեթեւ աչքով չնայել գործիս վերայ. քանզի երկար տարիների դառնաքիրտն վաստակ է այս եւ դժուարածին երկանց ծնունդ, բայց համառօտ։

Կարեւոր համարեցի յայտնել եւ հետեւեալ կէտերը.

Ա. Որովհետեւ «Աղուան. երկիր եւ Դրացիք» եւ «Արցախ» գրքերում միանգամ մանրամասնաբար նկարագրած եմ Աղուանից երկրի լեռները եւ դաշտերը, հովիտները եւ դաշտակները, գետերը եւ գետակները, ծովը եւ լճակները, մեծ աղբիւրները եւ հանքային ջրերը, ոսկու եւ արծաթի, պղնձի եւ երկաթի, շիպի եւ պողպատի, երկանաքարի եւ նաւթահանքերի տեղերը, բոլոր ծառերի եւ մացառների, թփերի եւ ծաղիկների տեսակների անունները, սուրբ եւ անսուրբ կենդանեաց եւ գազանաց, թռչնոց եւ զեռնոց, եւայլն, եւայլն տեսակները եւ անունները, վասն որոյ ծերութեանս եւ հիւանդութեանս պատճառաւ անկարող եղայ կրկնել այստեղ:

Բ. Պատմութիւնս բաժանուած է երկու մասի, Ա. Հատորս սկսուած է նահապետական օրերից մինչեւ Մէլիքութեան ծագումն. իսկ Բ. Հատորն լինելու է Մէլիքութեան ծնած օրից մինչեւ Աղուանից կաթուղիկոսութեան մահն:

Գ. Հակառակ մեր անխոնջ ջանից՝ անհնարին եղաւ գտնել Աղուանից շատ թագաւորների եւ կաթուղիկոսների եւ իշխանների գահակալած եւ վախճանած տարեթիւերը եւ ամբողջ գործերը: Այս պատճառաւ, որոց տարեթուերն ճշտիւ գտնուեցան, նոյնութեամբ գրուեցան, որոց տարեթիւերը հնարաւոր եղաւ ուղղել, ուղղեցինք, իսկ որոցն անհնարին, նշանակեցինք գտնուածին պէս:

Դ. Պատմութեանս ընթացքում կային այնպիսի հատուածներ, որ կապուած էին թէ՛ Հայոց եւ թէ՛ այլ ազգաց պատմութեանց հետ, հարկ եղաւ շարունակել անքաժան. որպէս զի անջատելով չխլատուի պատմութեան անանջատ միութիւնն եւ թերի չմնայ գործողութեան ամբողջութիւնն։ Կային

եւ այնպիսի դէպքեր, որք թէեւ կապ չունէին Աղուանից բնակչաց հետ, սակայն կապ ունէին երկրի հետ, այդպիսիները եւս կարեւոր համարեցինք գրել շարունակութեան մէջ, բայց համառօտ գրելով:

Ե. Համարեա թէ ինքնաբերաբար յիշատակուեցան համառօտակի Հայոց մի քանի թագաւորների գործերն, որպէս զի աւելի լաւ պարզաբանուի Հայոց եւ Աղուանից ժողովրդոց, թագաւորաց եւ հոգեւորականութեան մէջ եղած սերտ յարաբերութիւններն, ազգակցական եւ կրօնական եւ միանգամայն միացեալ քաղաքականութեան ամուր կապն եւ շահերն:

Զ. Գրքիս վերջում զետեղեցի Ազգաբանութիւն իշխանաց:

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ [1])

Աղուանից երկրի՝ պատմութեան ծանօթ՝ սահմաններն էին Հայոց Վաղարշակ թագաւորի ժամանակ արևելքից Կասպից ծովն և Երասխ գետն, հիւսիսից Դարբանդեան երկարաձիգ պարիսպն և Կովկասեան Մեծ-լեռնաշղթայի գագաթնագիծն, արևմուտքից՝ Ալազան գետն, Հնարակերտ ամրոցն և Ձորագետն և հարաւից՝ Արցախեան բարձր սարերի գագաթնագիծն և Հակարի գետն մինչև Երասխի խառնուրդն։ Բայց երբ ծնում է և Աղուանից Արշակունի թագաւորութիւնն, այն ժամանակ Կուր գետն լինում է հարաւային սահման։ Ե. դարում Աղուանից թագաւորութեան միանում է իւր նախկին սահմանն հարաւային կողմից—այս է ամբողջ Արցախ և Ուտի նահանգներն։

Սոյն սահմանների մէջ տարածուած երկիրն Հայերից կոչուած է *Աղուանք*, *Աշխարհ Առանայ*, Վրացիներից՝ *Ռանի*, Ձէնդերից՝ *Այերիանո* (Առ երի Հայոց), Պարսիկներից՝ *Առան* կամ *Առան-Շահ*, Արաբացիներից՝ *Ռան* և Եւրոպացիներից՝ *Ալբանիա*։

Հ Ո Ղ

Իւր տեսակին մէջ նշանաւոր, բարեբեր և բազմարդիւն է Աղուանից երկրի հողն։ Դաշտային և ջրարբի հողերն աճեցնում

---

[1]) Սահմաններիս մասին ընդարձակօրէն գրուածը տես «Արցախ» երես 1—2։

են մի հացահատիկը 50—100 ըստ տեղւոյն, իսկ լեռնային և անջրդի հողերն՝ 15—25. պատուական ամարանոցներ են մեծ մեծ սարերի վերնամասերն, որ դալարագեղ և ծաղկազարդ ասպնջական են անասնոց համար. մեծամեծ և գեղեցիկ անտառներ են միջնամասերն, որք տալիս են շինութեանց ատաղձ, որոց մէջ լի են որսալու երէներով, գազաններով և թռչուններով. մացառուտ են ստորին մասերն, որ մատակարարում են ժողովրդեան այրելու և ածուխ անելու փայտեր։ Գետեզերքներն, մանաւանդ Կուրի և Երասխի և Վատնեան դաշտի ստորին մասերն գրեթէ մշտադալար են։ Դաշտերն և դաշտակներն ոչ միայն հացատու են, այլ և սիզաւէտ և ասպնջական են իբրև ճարակ անասնոց։ Գարգարացւոց և Ուտեաց անջուր դաշտերում ամառ, ձմեռ, աշուն և գարուն հօտերով շրջում են այծեամներն։ Իսկ աշնան, ձմրան և գարնան ամիսներում լի են դաշտերս ոչխարի և այծի հօտերով, տաւարի և գոմէշի նախիրներով, ձիերի և ջորիների ջոկերով և ուղտերի երամակներով և միանգամայն զանազան թռչնոց երամներով։

Կասպից ծովն, Կուր և Երասխ, Մեծ-Սամուր և Հակարի գետերն լի են կարմրախայտ, երկարաքիթ և բազմատեսակ ձկներով, որք մատակարարում են պատուական ձկնհաւկիթ, միս, սոսինձ և կերակրեղէնների համար համադամ նիւթեր։ Աւշարան թերակղզուց և ուրիշ տեղերից հեղեղանման արտավիժում են առատօրէն սև նաւթ, որք զտուելով արտահանւում են Ասիա և Եւրոպա վաճառելու համար։ Մեծաւ մասամբ բարեխառն է երկիրն, պատուական օդն, առողջարար կլիման, ախորժելի ջուրն և առատ պտղաբերութիւնն, բայց ամրան եղանակներում ջերմագին՝ դաշտերի օդն։ Այժմ չկան Կաղանկատուացու յիշած ձիթենի ծառերն։

ԲՆԱԿԻՉՆԵՐ

Երկրիս նոյն իսկ պատմական դարերի անցեալն գրեթէ ծածկուած է խորին մթութեան թանձր քողով։ *Գիրն* և *մատենագրութիւնն*, որք անզուգական հարստութիւններ են մարդկութեան ցեղերի համար և հաւատարիմ աւանդապահ՝ քաղաքական և կրօնական անցեալ յիշատակները ապագայ սերնդոց յանձնելու համար, շատ ուշ ծնած են այս երկրում։ Դժբախտաբար այս *յետածին գիրն* և *մատենագրութիւնն* ևս իսպառ կեր եղած են հրկիզման՝ Պտղոմեանց հարուստ մատենադարանի նման. քանզի «Յետ այսորիկ գերեցաւ 'ի Խազրաց աշխարհս Աղուանից, հրկէզ եղեն եկեղեցիք և *կտակարանք*» (Կաղան. Բ. Հատ. Դ. Գլ.)։ Ահա այս պատճառաւ շուարած է մնում գրողն, անբաւական հետաքրքիր ընթերցողն և դժգոհ խստապահանջ բանասէրն և քննադատ կրիտիկոսն։

Ոչ մի երկիր այնքան խճողուած չէ եղել բազմատեսակ ցեղերով և այլազան բարբառներով, ինչպէս Աղուանից երկիրն։ Պատճառն այն է որ նախ՝ բարեբեր է երկիրս և առատաջուր և սննդատու, երկրորդ՝ միակ կարճ և յարմար անցքն է հարաւից հիւսիս և հիւսիսից հարաւ կամ թէ Ասիայից Եւրոպա և Եւրոպայից Ասիա ազատ անցուդարձ անելու ճանապարհն։ Հետքերից երևում է որ, Աշտարակաշինութիւնից յետոյ երբ օրըստօրէ աճում է մարդկութիւնն, բազմանում են ցեղերն, անբաւական են լինում իւրաքանչիւր ցեղի կամ նահապետի բնակութեան նախկին տեղին, անջատւում են Յաբեթական և Սեմական ցեղերից խումբ-խումբ հատուածներ և յաճախակի տեղափոխւում այս և այն կողմերն *Դարբանդի* և *Բահլ-Դրան* մուտքերն փակուելուց շատ առաջ։ Այս հանգամանքին վերագրելու է այն բազմացեղ բնակիչները, որք տեսնուած են Աղուանից երկրում, ինչպէս են *Գարդմանցիք*, *Խաչեանք*

կամ Խաչէնեանք, Ուտէացիք, Ծովղէացիք, Գարգարացիք, Աղուանք, Տակք կամ Սագք, Կազպք, Մազքութք, Ճիղբք, Լփնիք, Թաւասպարանք, Գղուարք, Հեճմատակք, Բաղասականք, Խազիրք, Սեւորդիք, Հրէայք և Պարսիկք:

Պատմութեան անխուսափելի օրէնքն պահանջում է փաստերով ապացուցանել այդ ամեն ցեղերի ծագումը, հատուած արտադրող արմատը, հատուածեալների բնակութեանց տեղերը, նոյն տեղերից ևս հեռանալը, մնացորդ թողնել կամ չը թողնելը:—Ահաւասիկ դժուարալոյծ խնդիրներ:

Ա. ԳԱՐԴՄԱՆՑՈՑ ԾԱԳՈՒՄՆ. Պարտք եմ համարում կանխաւ յայտնել որ Աղուանից երկրում կայ երկու *Գարդման* գաւառ և երկու *Գարդման* բերդ: Առաջին համանուն գաւառն և բերդն գտնւում են Արցախի նահանգում (տես «Արցախ» եր. 258—304 իւր 47 ծանօթութեամբ միասին): Երկրորդն է Ճամխու գաւառներից մին, որ այժմ կոչւում է *Գիրդիման* (տես «Աղուան. երկ. և Դրացիք» եր. 180—190):

Նոյն երկու գաւառներումն ևս բնակած են Գարդմանցիք. իսկ երկու բերդերումն ևս բնակած և իշխած են Առանի նախնիքն և հետականերն: Վերջիններս կոչուած են *Առան-շահիկ* կամ *Եռան-շահիկ* իշխաններ: Հայոց և Աղուանից պատմիչներն, առանց որոշելու Արցախի Գարդմանը Ճամխու Գարդմանից և անխտիր գործ դնելով *Գարդման* անունը, պատճառած են ընթերցողներին մեծ տարակուսութիւն և չփոթեալ մտատանջութիւն. այնպէս՝ որ որոշակի պարզ չէ իմացւում թէ այս ինչ գործողութիւնն Առաջնոյն մէջ կատարուած է թէ Երկրորդին: Այս չփոթութեանց միանգամ ընդմիշտ վերջ տալու համար՝ այսուհետև գործ կածենք *Արցախի Գարդման* և *Ճամխու Գարդման*:

Աղուանից երկիրն բոլոր երկիրներից աւելի մօտ լինելով մարդկութեան օրրանին—Արարատեան նահանգին, բնական էր, որ ամեն ցեղերից առաջ հայկական ցեղեր բնակութիւն

հաստատէին Աղուանից երկրում: Հետևապէս պէտք է ճշմարիտ ընդունել բազմաշխատ Խորենացու այս խօսքը. «*զգունդն Սիսական, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի 'ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն՝ որ ասի Հնարակերտ* [1])»: Բնականաբար հետևում է որ Գարդմանցոց նահապետն՝ հատուածելով Սիսական ցեղից՝ իւրայիններով եկած և բնակութիւն հաստատած է սոյն երկրում—Արցախի Գարդմանում: «'Ի սորա (Առանայ) զաւակէն ասեն սերեալ զազգ Ուտէացւոց և Գարդմանցւոց և Ծովդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն»: Խորենացու այս խօսքերը ոմանք բառացի այնպէս ընդունած են, իբր թէ Առանից սերած են այդ 4 ցեղերն: Բայց 'ի նկատի ունենալով պատմութիւնը, աւանդութիւնը, Արցախի և Ճամխու Գարդման բերդերում կատարուած իշխանական իրողութիւնները, համոզուած ենք, որ նախ Առան սերած է Գարդմանցւոց նահապետի հետականերից. երկրորդ՝ որ արդէն կային Գարդմանցւոց, Ուտէացւոց, Ծովդէացւոց և Գարգարացւոց ցեղերն: Սակայն որովհետև Առան *կուսակալ* կարգուած էր Հայոց Վաղարշակ թագաւորից այդ երկրի վերայ, վասն որոյ այնուհետև՝ ըստ նահապետական սովորութեանց՝ Առանի տոհմն եղաւ *իշխանական զերդաստան* և *իշխող զարմ*: Հետևապէս վերոյգրեալ 4 ցեղերի վերայ շարունակաբար իշխում էին Առանի հետականերն որդւոց որդի: Այս իրողութիւնը հաստատում է Կաղան. Բ. Հատ. ԺԷ. Գլ. գրելով թէ Սասանեան Միհրանի ցեղից քաջն Վարդան Ճամխու Գարդման բերդում հրաւիրում է ճաշի *Առանշահիկ* տոհմից 60 իշխան և ամենը կոտորում և յետոյ ինքն տիրում Աղուանից իբրև մեծ իշխան: Այսու ամենայնիւ չպակասեց իշխողն Առանի ցեղից թէ Արցախի Գարդման բերդում և թէ Ծար գիւղաքաղաքում. վասն զի Վարազ-Պերոժ իշխում էր

---

1) Ամրոցիս մասին տես «Արցախ» եր. 398—399:

Гос. Библиотека ՀՍՍՌ - Арм.ССР

Շաքի գաւառում, Եռան-շահիկ Սմբատն իշխում էր Վերին-Խաչենում, Հասան Մեծ-կողմանց վերայ և միւս իշխաններն Արցախի Գարդմանում։ Գարդմանցւոց ցեղն ոչ միայն պատուաւոր տեղ գրաւած է Աղուանից ամբողջ հասարակութեան մէջ, այլ և Հայոց և Պարսից պալատներում, Մեծին-Ներսէսի վաւերացուցած իշխանական և զինուորական տախտակում «Թ. Գարդմանցի 1000 զինուոր», Սահակ Պարթև հայրապետի և Պարսից Վռամ արքայի ժամանակ (Առան-Շահ) Գարդմանաց Տէր» գահական նամակում [1]։ Իւրաքանչիւր ցեղ՝ 'ի պահանջել հարկին պարտաւոր էր պատերազմի ժամանակ՝ օժանդակ զօրք տալ Հայոց թագաւորին՝ բացի իւր գաւառը կամ երկիրը պահպանող զինուորներից։ Գարդմանցիք տալիս էին 1000 զինուոր։

Այժմեան ամբողջ Գարդմանցիք թէ Արցախի, թէ Շամախու Գարդման գաւառներում և թէ Շաքուայ գաւառներում խօսում են հայերէն։

Բ. ԽԱՉԵԱՆՔ. Այս բառով պէտք է հասկանալ Վերին և Ներքին-Խաչէն, Ըռստակ, Ջրաբերդ, Վարանդայ, Դիզակ, Բերդաձոր, Հարճլանք և Վակունիք գաւառների հայերը, որք սերած են Սիսական-Հայկական ցեղից, որոց բարբառն յայտնի է այժմեան գրականութեան։ Բայց որովհետև յիշեալ գաւառների իշխող Առան-Շահիկ տոհմն բնակում էր Սիսական-Ոստանում, որ գտնուում է Վերին-Խաչենում, վասնորոյ գաւառիս անուամբ Խաչենանք նշանակուած է յիշեալ տախտակներում։

Գ. ՈՒՏԵԱՑԻՔ. Ստոյգ է որ այս տոհմն ունի Յաբեթական ծագում. ստոյգ է նա և որ խօսում է Ուտիերէն։ [2] Սակայն

[1] Գահական թղթերիս պատճէններն ամբողջութեամբ կան Արարատ-ում եր. 419—433 բացատրութեամբ հանդերձ. Յով. եպիս. Շահխաթունեանցի Ստոր. Բ. Հատ. եր. 58 պակասաւոր և Կ. Կոստանեանցի Հիւս. Գ. Հատ. եր. 32։

[2] Սոցա լեզուի համեմատութիւնը հայերէնի հետ տես «Աղ. երկ. և Դրաց.» եր. 93—96։

հարկ է յայտնել որ հայկական են իւրեանց ծագման աւանդութիւնն, դիմագծերն, սովորութիւններն և ամենայն ինչ, որոց շատերն բացի իւրեանց լեզուից գիտեն և հայերէն։ Ուտիներն, որ սկզբում կենտրոնացած են եղել Կուր գետի աջ ափերում և գրաւած հոմանուն դաշտը, այս է Աղուէ, Տուչքատակ-Տիգրանակերտ, Ուտի-առանձնակ, Շակաշէն և Կողթ գաւառները, Քրիստոսի ծննդենից շատ առաջ ամենամեծ մասամբ անցնում են Կուր գետի ձախ կողմերն և բնակութիւն հաստատում Արաշի, Աղդաշի, Շաքուայ, Կապաշակայ (Ղապալայ) և այլ գաւառներում։ Ստուգուում է այս տեղափոխութիւն այն հանգամանքով, որ երբ գալիս է Շակաց կամ Սակաց հատուածն և գրաւում Ուտի նահանգի Արշակաշէն և Կողթ գաւառները և Քուստի գաւառի ստորին մասերը, այն ժամանակ Ուտեաց մեծ մասն ստիպուած է լինում տեղի նեղութեան պատճառաւ տեղափոխուիլ Կուր գետի ձախ կողմն։ Հռովմայեցւոց և Յունաց հեղինակներն անուանում են Ուտեաց նահանգը Օդինէ, Օդինի, և Ուտեաց ցեղը՝ Օդիք։ Ագաթանգեղոս, եր. 593, 'ի շարս իշխանաց յիշած է. «Երեքտասաներորդ իշխանն Ուտիացւոց աշխարհին», նոյնպէս Մեծն-Ներսէսի տախտակում «Դ. Ուտէացիք 1000 զինուոր»։ Կարևոր է յայտնել որ թէ բազմամարդ եղած է Ուտեաց տոհմն և թէ զօրեղ ու տոկուն։ Այսու ամենայնիւ Արաբացւոց, Պարսից և Սև Հոնաց բռնութիւնից ստիպեալ՝ Ուտիներից 15,480 ծուխ դարձած է Մահմետական Սուննու և Շիա աղանդներին (տես «Աղ. երկ. և Դր.» եր. 291—292)։ Բաց յայսցանէ 1820 թուականներին 117 ընտանիք ևս ընդունած են յունադաւանութիւն։ Այժմ Ուտիներից անխախտ մնացած են 'ի ծոց Հայաստանեայց Առաքելական եկեղեցու 12,102 անհատ, որք բնակում են Նիժ, Վարդաշէն, Սուլթան-Նուխի գիւղաքաղաքներում և Ջոլու, Միրզաբէկլու, Փադառ, Վարդանլու, Քանդակ, Արաշ, Հաւարիկ, Սարով, Մարալեան-Սարով, Հասան-Ղայա, Ղահրիլար

կամ Խորոզլու, Ղարամանլու, Եարմ-ջան, Սէյախլան, Գանձակի Սարով և Կաղէն գիւղերում։

Դ. ԳԱՐԳԱՐԱՑԻՔ. Ժամանակաւ աւելի մօտ հայ պատմիչներն տոհմիս մասին ասում են թէ Գարգարացիք ծագած են *Սիսական ցեղից*, սակայն ցեղիս լեզուի զգալի տարբերութիւնն առիթ տուած է ոմանց բանասիրաց՝ կարծել թէ գարգարացիք չեն ծագած Հայկական սերնդից. մինչև անգամ փաստ են բերում ասելով. Եթէ արդարև Գարգարացիք սերած լինէին Հայերից, ինչ հարկ կար որ սուրբն Մեսրոպ ստեղծէր Գարգարացւոց *կոկորդախօս, աղխազուր, խժական և խեցբեկագոյն լեզուի համար յատուկ գիր*։—Բարի է. մենք ևս մէջ բերենք փաստեր։

Նախ՝ ամեն ազգերից ծագած ցեղերի մէջ ևս ակներև երևում է միևնոյն զգալի տարբերութիւնն լեզուի նկատմամբ։

Երկրորդ՝ Զոկերն էլ հայ են, Չէյթունցիք էլ. բայց ոչ սոքա են հասկանում նոցա աշխարհաբար լեզուն և ոչ նոքա՝ սոցա բարբառը։ Կեսարացիք էլ հայ են, Նոր-Արմաւիրցիք էլ, սակայն երկուքն ևս ո՛չ խօսում են հայերէն և ո՛չ հասկանում միմեանց ասածը, քանզի մին խօսում է տաճկերէն և միւսն՝ չերքեզերէն։ Հայեր կան *վրախօս*, հայեր կան *լեհախօս*, հայեր կան *թրքախօս*. յոյներ կան *հայախօս*, թիւրքեր կան *վրախօս*, վրացիք կան *հայախօս*, *ուտիախօս* և *պարսկախօս*։ Այսպէս հայերէնը մոռացած էին և այն հայերն. «Իսկ Սմբատայ (Բագրատունւոյ) երթեալ հասեալ յաշխարհն այն, գտանէ անդ ազգս գերեալս 'ի Հայաստանեայցս և բնակեցուցեալս 'ի Թուրքեստան 'ի կողմանէ մեծի անապատին, որ Սագաստան անուանի. զլեզու իւրեանց մոռացեալ և զպրութիւնն նուազեալ յոյժ» (Յով. Կաթուղ. եր. 90—91)։ Մեր համեստ եզրակացութեամբ այս հանգամանքները վերագրելու է միմիայն անցեալ ժամանակի քաղաքական բուռն հոսանաց։ Հետևապէս զօր օրինակ կեսարացին երկար ժամանակ ապրելով շրջապատող տաճ-

կաց մէջ, տակաւ առ տակաւ մոռացած է հայերէնը և հիմնովին ընդունած տաճկերէնը, լեհաբնակ հայն՝ լեհերէնը, չերքեզաբնակ հայն՝ չերքեզերէնը, նմանապէս Ուտիացի և Գարգարացի հայերն ևս երկար ապրելով *Աղուանների* և *Ճակերի* հետ, բնականաբար ընդունած են նոցա բարբառները և հետզհետէ մոռացած իսպառ հայերէնը։

Հետքերից ակներև է, որ Գարգարացւոց նահապետն, Սիսական ցեղից հատուածելով Մեծ-Սիւնիքից Գարգարացւոց դաշտն իջնելու միջոցին, բաւական ժամանակ մնացած լինելու է Գարգար գետի ակունքների և եզերքների մօտերքում. ըստ որում գետն Գարգար է կոչւում մինչև ցայսօր, և ապա իջած դաշտն, որ անուանուած է *դաշտ Գարգարացւոց*։ Կարևոր է յայտնել որ դաշտիս ստորին մասն հայ պատմիչներից կոչուած է *Մուղան* [1], Գարգարացւոց բնակութեան տեղին՝ *Գարգարացւոց դաշտ* [2], Գարգար և Աղստև գետերի մէջ ընկած մասն՝ *Ուտիացւոց դաշտ* [3], Կուր, Զօրագետ և Աղստև գետերի մէջ ընկած մասն՝ *Գագայ դաշտ* [4]։ Գարգարացւոց էին պատկանում Բեղուկան, Վարդանակերտ, և Լամբարան [5] քաղաքներն. Ուտիացւոց էին պատկանում, Պարտաւ, Բօրոմ, Գանձակ և Շամքոր քաղաքներն։

Գարգարացւոց անունն յիշուած է նախ՝ Ագաթ. եր. 593. «Ութերորդ իշխանն Գարգարացւոց աշխարհին». ապա Այրարատում եր. 432. «Գարգարացիք»։

Համարեա թէ մի դար սորանից առաջ Գարգարացւոց տոհմի մնացորդներն Բեղուկան և Սիլ քաղաքներից [6] տեղա-

---

[1] Կիր. եր. 154. Վարդ. Բարձր. եր. 198։

[2] Խորեն. Բ. գիրք Զե. գլ. Թով. Արծ. եր. 177։

[3] Ագաթ. եր. 33. Ուխտ. եր. 96, են։

[4] Վարդ. Բարձր. եր. 161։

[5] Այժմ ևս Լամբարան-Լամբարավառ հուն Կուր գետի։

[6] Տես «Արցախ» եր. 68—69 և 127—129։

փոխուած են Դիզակի և Վարանդայի գիւղերն [1]) և այժմ խօսում են Արցախի յատուկ բարբառով։

Ե. ԾՈՎԴԷԱՑԻՔ. Աւանդութեամբ ասում են որ հատուածս բաժանուելով Սև-Հոններից անյայտ ժամանակ առաջ, եկած և բնակած են նախ՝ Գեղամայ լճի արևելեան ափերում, այս պատճառաւ Ծովք մնացած է նոյն գաւառի անունն։ Բայց թէ ինչպէս Ծովքն փոխուած է Սօթ, չգիտենք։ Որպէս թէ յետոյ Սօթի կողմերից Ծովդէացիք տեղափոխուած են այժմեան Կախաւան և Ճառ գաւառներն։ Սօդեցի անունն կայ երեք տախտակներումն ևս։ Հատուածիս անունն յիշուած է Ագաթ. եր. 593. «Երկոտասաններորդ իշխանն Ծովդէացւոց»։ Մեծին-Ներսէսի գահական տախտակում. «Ե. Ծովդէացի 1000 զինուոր»։ Խորենացին ևս յիշում է տոհմիս անունը. Եղիշէ, եր. 15 և 93, յիշատակած է որ Ծովդէացիք ընդունած էին քրիստոնէութիւնը։ Ծովդէացիներից մի մասն մնացած է [2]) Կախաւանի և Ճառի կողմերում և ընդունած մահմետականութիւն, Իսկ մեծ մասն անցած է Կովկաս Մեծ-սարի հիւսիսային կողմն մեզ անյայտ ժամանակաւ և խառնուած Սև-Հոնաց հետ։

Զ. ԱՂՈՒԱՆՔ. Տոհմիս մասին հաւանութիւն գտած ենթադրութիւնն այս է.—Քրիստոսի ծննդենից մօտ 600 տարի առաջ արևելեան կողմից գալիս են երկու հատուածներ ծագմամբ Յաբեթական ցեղից, յորոց առաջինն լինելով Հայկական ցեղից՝ մտնում է Հայաստան և բնակւում Հայոց հետ, իսկ երկրորդ հատուածն բնակւում է Աղուանքում [3]) և իւր անուամբ *Ալբանիա* անուանում երկիրը։ *Ալբանիա* են անուանում միևնոյն երկիրը

[1]) Տես «Արցախ» եր. 27։

[2]) Համարեմ թէ հոնական են մնացելոց տիպերն, դէմքերն և աւանդութիւններն։ Այսու ամենայնիւ շատ գիւղերում դեռ կանգուն կամ կիսաւեր մնում են եկեղեցիք. «Աղ. եր. և դր.» եր. 272—273։

[3]) Մինչև սոցա գալն թէ ինչ էր կոչւում երկիրս.—չգիտենք։

և Եւրոպացիք։ Իւր աշխարհագրութեան մէջ *Ալբանիա* է կոչում և Խորենացին։

Մովսէս Կաղանկատուացին, Ա. Հատ. Բ. գլ. թուելով Յաբեթական ցեղերը, ասում է. «Իսկ որ 'ի կողմանս հիւսիսոյ են՝ ազգակից են Կեռուրացւոց (Կելտաց), ուստի և Աղուանք»։ Կարապետ վ. Ջահնազարեան, իմանալով որ Աղուանք առանց մնացորդ թողնելու, Քրիստոսի ծննդենից 180 տարի առաջ տեղափոխուած են Եւրոպա, *Ալբա* անունից հետևացնում է թէ *Ալբա, Ալբիօն, Ալբին, Ալբանիա* և այլն տեղերում բնակող Եւրոպացիք, այսինքն նոցա նախնիք եկած են Աղուանքից։ *Ներածութիւն Սուրբ գրոց ուսման* հեղինակն Տօքթոր Անկըսէ, *մասն երկրորդ* եր. 38, ասում է. «Արդ Յաբեթի սերունդին գալով... Գոմերէ սերեցան Կիմմերացիք, նախնի բնակիչք Խրիմու, ինչպէս նաև Կիմբերացիք և Կեղտք (Կելտք) որ գրաւեցին Գերմանիա և Մեծն Բրիտանիա»։

Ալբանիացւոց այս բացակայութիւնն է պատճառն, որ սոցա ցեղի անունն բնաւ յիշուած չէ ոչ Ագաթանգեղոսում, ոչ երեք տախտակներում և ոչ Հայոց պատմութեանց մէջ 'ի շարս իշխանացն Աղուանից, որպէս յիշուած են. «Իշխանն Գարդմանցւոց» «Իշխանն Ուտէացւոց» «Իշխանն Գարգարացւոց» և այլն։ Կարևոր է յայտնել որ 137 տարի նախ քան Քրիստոս, երբ Առան Հայոց Վաղարշակ թագաւորից կուսակալ է կարգուում Աղուանից երկրի վերայ, այնուհետև Ասիաբնակ ցեղերն առհասարակ յանուն *Առանայ* են դրոշմում երկիրս, իսկ Եւրոպացիք պահում են *Ալբանիա* անունը. զոր օրինակ Հայք՝ *Աղու* անունից՝ կոչում են *Աղուանք*, Վրացիք՝ Առան անունից՝ *Ռանի*, Պարսիկներն՝ *Առան-Տահ*, Արաբացիք՝ *Ռանի*, Թաթարներն՝ *Առան* կամ *Առան-Տահ*։

Է. ՇԱԿ կամ **ՍԱԳ** և կամ **ՍԱԿ.** Հատուածս սերած է Սագաստանի Սկիւթացիներից։ Սագաստան մի դաշտային և ամ-

րան ջերմագին և վնասակար օդ և կլիմա [1]) ունեցող երկիր է, որ գտնւում է Պարսկաստանի հիւսիս-արևելեան կողմում։ Ձակերն կամ Սագերն բազմանալով և հետզհետէ զօրանալով տիրում են Բագտրիային, ապա հառուածելով շրջում են Կասպից ծովի հարաւային եզերքներով գալիս և բնակւում Փայտակարան նահանգում. այս ըստ Ստրաբոնի ԺԱ. գիրք եր. 511—512։

Քսենոփոն, Խրատ Կիւրոսի եր. 160, Հայկազեան Մեծն-Տիգրանի մասին խօսելով ասում թէ Տիգրան եկաւ իւր զօրքով և միացաւ Պարսից Կիւրոս թագաւորի հետ (Ասորոց և Մարաց թագաւորութիւնները կործանելու)։ «Տիգրանէս եկեալ հասեալ կայր պնդակազմ և 4000 հեծեալք գումարեալ էին, և բիւր (10,000) աղեղնաւորք և այլ ևս չերտաւորք նոյնչափ»։ Ընդամենն Հայոց զօրք 24000։ Իսկ Ձակաց մասին ասում է եր. 270—285, Ձակերն և Վրկանցիք, որ իբրև հպատակ ազգեր եկած էին Մարաց օգնելու ընդդէմ Կիւրոսին, միաբանում են Կիւրոսի և Հայոց հետ։ «Ի Ձակաց աղեղնաւորք բիւր մի և աղեղնաւորք հեծեալք 2000. (եր. 288—289)։ Մարաց և Ասորւոց թագաւորութիւնները կործանելուց վերջն՝ Մարաց երկիրն բաժանւում է Պարսից և Հայոց մէջ. Փայտակարան նահանգն միանում է Հայաստանին։ Բաւական ժամանակ անցնելուց յետոյ Ձակերն անցնում են Երասխի ձախ ափն, ապա հետզհետէ Գարգարացւոց դաշտով մտնում են Ուտեաց դաշտն, բնակութիւն հաստատում այժմեան Գանձակի գաւառում, որը և յանուն իւրեանց անուանում *Շակաշէն* [2]), «զոր յիւրեանց անուն կոչեցին *Սակասինի* (Ստրաբոն եր. 511—516)։ Ձա-

---

[1]) Պարսից Յազկերտ Բ. երդմամբ սպառնում էր Սագաստան աքսորել Հայոց հոգևոր և մարմնաւոր իշխանները, ինչպէս և աքսորեց յետոյ. (Եղիշ. եր. 85—86)։

[2]) Խորենացին իւր աշխար. մէջ եր. 606 և Կաղանկ. եր. 141 *Շակաշէն*. վերջինս եր. 265 *Արշակաշէն* է անուանում։

կերն իւրացնում են և Կողթ գաւառը և Քաւս կամ Քուստի գաւառի ստորին մասը։ Այդ ժամանակ Ուտիք նեղուելով տեղի նեղութեան պատճառաւ՝ մեծաւ մասամբ անցնում են Կուր գետի ձախ կողմերն, որպէս գրած ենք կանխաւ։ Ապա պատմում է Ստրաբոն թէ այս թափառական Ձակերն արշաւեցին ամբողջովին Կապադովկացւոց և Պոնդացւոց կողմերն և դիզեցին կապուտ և կողոպուտ. այն ինչ կատարում էին իւրեանց յաղթութեան տօնը, գիշերով յարձակուեցին Սակերի վերայ Պարսից (Հայոց) նախարարներն և կոտորեցին ամբողջապէս։

Ը. ԿԱԶՔ, ԿԱՍՊ, ԿԱՍՊԻՔ. Ձակերն անյայտանալուց յետոյ գալիս է Կասպից հառուածն, որ նոյնպէս սերուած է Սկիւթական ցեղից, շրջելով Կասպից ծովի հարաւային ափերով գալիս է և բնակւում Փայտակարան նահանգի ծովեզերեայ մասումն և ծովը իւրեանց անուամբ անուանում *ծով Կասպից*. «Երատոսթենէս առ Ստրաւոնի գիրք ԺԱ. թուղթ 514... յետ Աղուանից յիշէ... զԿազպս իբր սահմանակիցս, որ էր Փայտակարան նահանգ և նոյն ինքն Ստրաւոն գիրք ԺԱ. թուղթ 528, պատմէ թէ Կազքք, կամ որպէս կոչէ անդէն նա ինքն. Գասբոնիք (Փայտակարան նահանգ)՚ի Մարաց առաւ և գրաւեցաւ ՚ի սահմանս Հայաստանեայց»... իսկ թուղթ 502... «ի Գասբից ազգէն զանունն ընկալեալ, ուստի կոչի և ծովն» (Ղ. վ. Ինճիճ. Հին Հայ. եր. 320—321)։ Կասպից ցեղն մնում է հպատակ Հայոց Հայկազն Տիգրան Ա. թագաւորից մինչև Արշակունի Տիգրան միջին թագաւորն, բայց ապստամբում է Արտաշէս Բ.-ի ժամանակ. «Իսկ Սմբատայ (զօրավարին Հայոց) երթեալ հնազանդէ զամենեսեան, բայց երկիրն Կասպից աւերեալ, առաւել քան զարտաղեան գերին ածէ ՚ի Հայս, ընդ որս և Զարդմանոս անուն թագաւոր նոցին» (Խոր. Բ. Գիրք ԾԹ. գլ.). Կասպից անունն յիշուած է Գ. դարում Ագաթ. եր. 27, Մեծին-Ներսեհի տախտակում «Գ. *Կասպեցի* 3000» զինուոր. Դ. դարում, *Կազք*, *Կազքունիք*. Ե. դարում՝ *Կասպից* տէր։

Այնուհետեւ չգիտենք ո՞ր դարում ցեղիս մնացորդն՝ շրջելով Կասպից ծովի արեւմտեան ափերով՝ հասնում է Կազբէկ սարի հիւսիսային ստորոտն, ուր մնում է ցարդ։ Ասում են որ Կազբէկ սարն իր անունը ստացած է նոյնպէս Կասպից ցեղիցն։

Թ. ԲԱՂԱՍԱԿԱՆ. Տոհմիս ծագման մասին խօսելուց առաջ՝ հարկ ենք համարում յայտնել որ Հոներն գլխաւորապէս բաժանուած են երկու ցեղերի—*Սպիտակ Հոներ*, և *Սեւ-Հոներ*։ *Սպիտակ-Հոներն* բնակում էին Կասպից ծովի արեւելեան կողմերում, որոց մասին ասում է Եղիշէն, եր. 18, «Խաղաց գնաց (արքայն Պարսից) միանգամայն 'ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն»։ Արեւելեան Հոներս կոչուած են և *Հեփթաղ*, *Թետաղք*, *Թետալացիք*, Փար. եր. 506։ Սոյն Հեփթաղներից սպանուեց Պարսից Պերոզ թագաւորն։ Իսկ նոյն ծովի արեւմտեան կողմում բնակուածներն կոչուած են *Սեւ-,Հոնք* որք տարածուած են ծովին ափերից մինչեւ Դոն գետն՝ Կովկաս մեծ սարի հիւսիսահայեաց լանջերով, բայց բաժանուած են բազմաթիւ ցեղերի և լեզուների, որք ամենքն միասին թէ հայ և թէ օտարազգի հին պատմագիրներից առհասարակ անուանուած են *Սարմատացիք* և սոցա բնակավայրն՝ *Սարմատիա*։ Դառնանք բուն խնդրին։

Բաղասական տոհմի ծագումն ճշտիւ յայտնի չէ մեզ. յայտնի է միայն որ եկամուտ ցեղերից էր։ Ցեղիս անունն յաճախակի յիշուած է միայն Ե. և Զ. դարում. երեւի թէ յետոյ մուտ գործած է Աղուանից երկիրն, բայց բոլորովին հաստատ է, որ այս ցեղն բնակում է *Բաղասական* գաւառում, տես «Աղ. եր. և Դր.» եր. 103 և 277։ Եղիշէն, եր. 142—143 ասում է թէ Բաղասական թագաւորազններից ոմանք սպանեցին Հայոց Մուշը և վիրաւորեցին Գազրիկը։ Իսկ եր. 257 ասում է. «Ինքն իսկ թագաւորն (Պարսից) սպան զԲաղասական արքայ» որովհետեւ սպանուած թագաւորն Սև-Հոնաց Հեռան թագաւորին հետ գաղտնի բարեկամանալով կոտորել տուած էր

Պարսից զօրքը Հեռանի ձեռնով։ Խորենացին, Գ. գիրք Կ. գլ. ասում է՝ թէ Ս. Մեսրոպ տեղեկանալով որ հեթանոսական աղանդի դառն արմատն և չար վարդապետութիւնն գտնուում է Բաղասականի կողմերում. Սրբոյն Մեսրովպայ «երթեալ 'ի Բաղասական զբազումս յուղղութիւն ածէ և զսակաւս անդարձ յիշխանութիւն (Սեաւ Հոնաց) հալածականս առնէ»։

Բազմիցս յիշուած Ե. և Զ. դարու տախտակներում նշանակուած են յատկապէս *Բաղասականք* անունն։ Ցեղիս մեծ մասն Արաբացւոց ժամանակ միանալով Սև-Հոնաց հետ՝ ընդունած է մահմետականութիւն (Սուննու աղանդին), նոյնպէս և իւր տեղում մնացած մասն։ Այդ բոլոր եղելութիւններն առիթ են տալիս մեզ ենթադրել որ Բաղասական ցեղն ծագած է *Սեւ-Հոներից*։

Ժ. ՄԱԶՔԹԱՑ ՑԵՂ.—Այս հատուածն սերած է Կասպից ծովի արեւելեան կողմում եղած Մազքթաց արմատից։ Պլինիոս, Զ. Հատ. եր. 17, գրում է. «Ցայնկոյս են (Կասպից ծովի արեւելեան կողմում) Սկիւթացւոց ժողովուրդ... բազմութիւն ժողովրդեան անհամար... հռչակաւորք են 'ի նոսա Սակք և Մասաժէտք (Մազքութք)»։ Այս մասին տես և Քաղաք. աշխարհ. Ղ. վ. Ալիշ. եր. 26-ի քար. և Ղ. վ. Ինճիճ. Հնախ. Հայաս. Ա. Հատ. 331։ Որ Մազքթաց ցեղի մայր-արմատն բնակում էր Կասպից ծովի արեւելեան կողմում, հիմնաւոր ապացոյց են Սեբ. եր. 53—54 և Ասողիկ եր. 112—113. «Էր Վահրամ ոմն Մեհեւանդ (Սեբ. Մեհեանդակ) իշխան Արեւելից կողման աշխարհին Պարսից, որ հարկանէր քաջութեամբ զզօրսն Թետալաց և բռնութեամբ ունէր զԲահղ և զամենայն երկիրն Քուշանաց մինչ յանկոյս գետոյն մեծի, որ կոչի Գաւբուն (Սեբ. Վեհռոտ), պատերազմեալ ընդ արքային Մազքթաց՝ եհար զբազմութիւն զօրացն և սպան զթագաւորն և յափշտակեաց զգանձս թագաւորութեանն»։

Աղուանք եկած *Մազքութ* հատուածն բնակում է Դար-

բանդի մօտ եղած գաւառում, որ այժմ կոչւում է Մուսկուր[1]) (Մազքթաց գաւառ)։ Տոհմիս անունն ամենևին յիշուած չէ երեք տախտակներումն. պատճառն այն է, որ երբ ծնում է Աղուանից Արշակունի թագաւորութիւնն, որի մայրաքաղաքն լինում է Չողա քաղաքն[2]), Մազքութք անցնում են Դարբանդեան պարսպի հիւսիսային արտաքին կողմն, ինչպէս Եղիշէ եր. 387 և Խորեն. Մատ. եր. 605 մատնացոյց են անում սոյն ցեղի բնակութեան տեղին յիշեալ պարսպի արտաքին կողմում։ Մազքթաց հեռանալուց յետոյ՝ տախտակներումն նշանակուած են Դարբանդեանք անունն։

ԺԱ. ԼՓՆԻՔ. Հատուածս ծագած է Պարսկական հին-սերընդից, ապացոյց իւրեանց բարբառն, դէմքերն, աւանդութիւնն, սովորութիւններն և կրօնն, որք յատուկ են Պարսից ազգին։ Լփնաց անունն յիշուած է Ագաթ. եր. 27. Եղիշ. եր. 15, 93 և 143, և Կաղան. եր. 189։ Լփնիք այժմ ևս բնակում են իւրեանց նախկին տեղում[3]) այսինքն Դաւաչի և Սուղայիդ գետերի, Կովկասեան Մեծ-լեռնաշղթայի գագաթնագծի և Կասպից ծովի արևմտեան ափերի մէջ ընկած տարածութեան վերայ։ Լփնաց բարբառի մասին տես «Աղ. երկ և Դր.» եր. 91—92։

ԺԲ. ՃՂԲԱՑ ՑԵՂԻ ԾԱԳՈՒՄՆ. Այս հատուածն ևս ունի Լփնաց բարբառը, աւանդութիւնը և ծագումը և համարւում է եկամուտ ցեղ։ Ճղբաց անունն յիշուած է Ագաթ. եր. 27, Եղիշ. եր. 178 և 246, Կաղան. եր. 189, և տախտակներումն Ճիղբ անուամբ։ Հատուածիս ամենամեծ մասն, պինդ գրկած լինելով Քրիստոնէութեան կրօնը և պատկանելով Հայաստանի Ս. Լուսաւորչի դաւանութեան, ստիպեալ Լեկզիների անընդհատ աւերմունքներից, կոտորածներից և բռնութիւններից, վերջապէս

---

[1]) Տես «Աղ. երկ. և Դր.», եր. 105—110 և 124։

[2]) և [3]) Տես «Աղ. երկ. և Դր.» եր. 145—148։

ակամայ ընդունում է Սուննը աղանդի դաւանութիւնը և մնում իւր բնակավայրում (տես «Աղ. երկ. և Դր.» եր. 126—145)։ Հայադաւան մնացածների ամենամեծ մասն ԺԸ. դարի վերջում Ռուսաց Զուբով զօրավարի հետ տեղափոխուած է Ռուսաստան և բնակութիւն հաստատած Մոզդոկի Մաջառ և Ղուրա և Ղզլարի Սարաֆան գիւղերում, որք մինչև ցայսօր հայերէն լեզուի հետ պահպանած են և իւրեանց յատուկ բարբառը։ Իսկ փոքր մասն, որ մնացած է իւր տեղում, Ղուբա քաղաքի Քիլուար և Խաչ-մաս գիւղերում, մաքառելով ամեն տեսակ բռնութեանց դէմ՝ մարտիրոսաբար պահպանած է իւր հայադաւան եկեղեցին և կրօնը։

ԺԳ. ԹԱՒԱՍՊԱՐԱՆ. Այս ցեղն՝ որ առաջ բնակում էր Դարբանդեան պարսպի ներսում, վաղուց անցած է նոյն պարսպի արտաքին կողմն։ Ցեղիս այժմեան բնակած գաւառն, որ կից է նոյն պատուարին՝ հիւսիսային կողմից, կոչւում է Տապասարան, բայց տոհմիս ծագումն ճշտիւ յայտնի չէ մեզ, միայն թէ եկամուտ ցեղերից է։ Եղիշէն, եր. 178, յայտնում է թէ Ուրացեալ Վասակն, տեսնելով որ բացի Դարբանդեան դռնից ներս խուժած Սև-Հոններից՝ ոչ ոք օգնական չգտնուեցաւ Վարդանեան Հայոց և Աղուանից գնդին, փակեց պատուարի դռները, կուտեց Պարսից այրուձին, գումարում էր (պատուարի ներսում եղած) «զզօրսն Լփնաց և զՃղբաց և զՎատն, զԳաւն և զԳղուարն և զԽրսանն և զՀեճմատակն, զՓասխն և զՓոսխն և զՓիքաւնան և զամենայն զօրսն Թաւասպարան, զլեռնային և զդաշտային և զամենայն ամրականման լերանցն»։ Խօսքերից պարզ երևում է որ այս ամեն ցեղերն Վասակի ժամանակ բնակում էին պարսպին ներսի կողմումն։

ԺԴ. ԳԱՒ. Անյայտ է մեզ ցեղիս ծագումն և անորոշ բնակութեան տեղին։ Այն գաւառն, որ ընկած է նոյն պատուարի ներսի կողմի շարունակութեան և Փոքր-Սամուր գետի մէջ, այժմ կոչւում է Գուրի գաւառ։ Թերևս այս եղած լինի Եղի-

չէի Գաւն։ Գաւառիս գաւառագլուխն է Ղասմ-քենդս, որի մօտ է Գուր անուն մի գիւղ։

ԺԵ. ԳՂՈՒԱՐ. Նմանապէս անյայտ է մեզ և ցեղիս ծագումն։ Գուրի և Ղուբա գաւառների մէջ ընկած է *Գուսար* գաւառն և *Գուսար* գետն։ Երկու անուններիս հնչիւնից հեռի չէ *Գղուարն*, հետևապէս կարծում ենք թէ այս է Գղուարն, որ Այրարատի և պ. Կ. Կոստանեանցի տախտակներում նշանակուած են *Գորողուայք*, *Գորուղեայք* [1]։

ԺԶ. ՀԵՃՄԱՏԱԿ. Համոզուած ենք թէ յետածին է *Սամուր* անուն, որ մի ընդարձակ գաւառ է եռանկիւնաձև մտած Կովկաս մեծ սարի և Դարբանդեան պատուարի մէջ։ Գաւառիս գաւառագլուխն է այժմ Ախտի քաղաքն, որ նոյնպէս նոր անուն է։ Բայց գաւառումս կայ *Մաժալ* անուն մի գիւղ, որն գուցէ կրճատեալն է կամ փոփոխեալն Հեճմատակ անուան։ *Հեճմատակ* անուն կայ վերոյիշեալ 2 տախտակներում ևս։

Հարկ է յայտնել թէ բացի վերև գրուածներից կան նաև հետևեալ անուններն. Խուրցիկ, որ հեռի չէ *Խորսանց* անունից, Խիբ, թերևս կրճատեալն *Խիբուլնայ*-ին [2]). Փլյ, *Փախն՞* Փուր —*Փուխն՞* Հեթում—*Հեփթաղ՞* [3])։ Մեր համեստ կարծիքով Հեփթաղական ցեղի ծագում ունին այդ գիւղերի այժմեան բնակիչներն։ Մեր կարծիքն հիմնուած է սոցա բարբառի, դիմագծերի և սովորութեանց վերայ և միանգամայն Կաղանկատուացու Ա. Հատ. ԻԶ գլ. հատուածիս, (Սուրբն Մեսրովպ) «Նորոգեալ եկեղեցւոյ հաւատս հաստատէր, և ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց և յԱղուանս և 'ի

[1]) «Տեառն Վաչագանայ Գորողուայ իշխանին և տեառն Գուրգենայ Արևելեան իշխանի» (Անանիա կաթ. Մոկացի «Արարատ» 1897 ամի Մարտ ամիս եր. 144)։

[2]) Գտնուում են Գուրի գաւառում։

[3]) Սոյն անուններն գտնուում են Սամուր գաւառի վերնամասերում։

Լփնիս և ի Կասպս և 'ի դուռն Չորա և յայլ ազգի ազգիսն, զորս գերութեամբն էր ածեալ Աղէքսանդրի Մակեդոնացւոյ և նստուցեալ զմեծ լերամբն Կովկասու, զԳարգարսն (սխալ է գրչագրի, պէտք է լինէր զԳղուարսն) և զԿամիճիկ Հեփթաղսն դարձուցեալ 'ի հաւատս՝ զկարգ Աստուածպաշտութեանն ուսուցանէր, զոր 'ի վաղնջուց ուսեալն էին և մոռացեալ»։

ԺԷ. ՍԵՒՈՐԴԻՔ. Ցեղս սերած է Հայկական զարմից։ Բայց որովհետև *Թխադէմ* եղած է տոհմիս նախնի նահապետն, այս պատճառաւ կոչուած է *Սեւ*, *Սեւուկ*, *Սեւիկ*. հետևապէս և իւր յետականերն յորջորջուած են *Սեւորդիք* (Յով. կաթող. եր. 162 և 275։ Հայկազ. Բառգիրք Բ. Հատ. եր. 711. Ղ. վ. Ինճ. եր. 335)։ Սևորդիք սկզբում բնակում էին Ջաւէ (այժմեան Ղազախ) գաւառում. բայց յետոյ մեզ անյայտ ժամանակում բարձրանում են Չորագետի վերնամասերն։ Այնուհետև կոչուած են *Չորաբնակք* և *Չորագետացիք*, որոց հետականներից դեռ այժմ բնակում են Ղազախ գաւառի (Աղստև գետի ձախ կողմում) Սալի գեղ (Նորագիւղ կամ Ղլիջ-քենդ) Մէլիք-գիւղ, Նոր-Պիպիս, Նոր-Ոսկեպար, Բաղանիս, Ղոշղոթան, Ճչեվանք և այլն գիւղերում «Արցախ» եր. 376—392։ Նոյն տախտակներում յիշուած են *Չորաբնակք*։

ԺԸ. ՀՐԷԱՅՔ. Հանրածանօթ է ցեղիս ծագումն. բայց թէ երբ մուտ գործած են սոքա այս երկիրն, գոնէ մեզ յայտնի չէ ստուգիւ։ Հրէայք այժմ ամփոփ չեն մի տեղում, այլ Դարբանդում, Ղուբայում, Բաքուում, Վարդաշէնում, Ճառում և Շամախու Գարդման գաւառի Միւժի գիւղում, և այլն, սակայն առանձին առանձին թաղերում։

ԺԹ. ԴԱՐԲԱՆԴԵԱՆՔ. Որ յիշուած են Դ. դարում Հ. Ալիշանի և պ. Կ. Կոստանեանի տախտակներում, Աղուանից *Արշակունի* *թագաւորազներ* և *իշխաններ* և *իշխանազուններ* էին. վասն զի այդ դարում Աղուանից թագաւորներն տակաւին նստում էին Դարբանդում և Չողայում։

Ի. ՊԱՐՍԻԿՆԵՐ. Է. դարում Սասանեան Միհրանն բերում է իւր հետ Աղուանից երկիրն 30,000 ծուխ պարսիկ ժողովուրդ և բնակեցնում Աղուանից ցեղի (որ արդէն հեռացած էր—տեղափոխուած էր դէպի Եւրոպա և այլ կողմեր) բնակած տեղում, այս է Կասպից ծովի, Կուր գետի և Բօղ-դաղի և Գոկխուն գետի մէջ տարածուած դաշտի վրայ։ Այժմ էս կան նոյն ցեղի յետականերն, միևնոյն տեղում։

Ի վերջոյ պարտք եմ համարում յայտնել հետևեալ ամենակարևոր տեղեկութիւնները.

Ա. Բացի Հրէաներից վերոգրեալ ամեն ցեղերն Դ. դարու սկզբում ամբողջապէս ընդունում են Քրիստոնէութեան կրօնը[1]. իսկ կարի մասնաւորք նոյն կրօնը ընդունած են եղել Ս. Եղիշ առաքեալի ձեռնով Ա. դարում։

Բ. Այդ ցեղերից ոմանք ունեցած են եղել մասնաւոր թագաւորութիւն, որ ունեցած է խիստ կարճատև կեանք. ինչպէս են Մաղքութք, Լփնիք, Կասպք, Աղուանք և Բաղասականք։ Սակայն ամենից զօրեղ թագաւորութիւնն լինում է Աղուանից-Ալբանիացւոցն և ապա Աղուանից Արշակունի թագաւորութիւնն, որք իշխում էին միւս ողջ ցեղերի վերայ։

Գ. Աղուանից երկրի քրիստոնեայ ժողովուրդն սկզբից մինչև ցայսօր թէ կրօնական և թէ քաղաքական խնդիրներում միշտ հպատակ և անբաժան եղած է Հայոց ընդհանրական կաթուղիկոսներին և թագաւորներին և գործած են համամիտ և համակամ, բացի մի քանի ինքնակոչ կաթուղիկոսներից։

---

[1]) Որք էին ամենևքեան հաւատացեալ ի մի կաթուղիկէ առաքելական եկեղեցի (Հայոց), Եղիշէ եր. 15, 32, 33, 93 և 246—247,։

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ[1])

Պատմագիրս ինքն զինքը անուանում է Կաղանկատուացի և իւր ծննդավայրը մատնացոյց անելու համար պատմում է հետևեալ ցաւալի դէպքերը. «Իսկ իբրև եկն եհաս զօրն Հռովմայեցւոց (Յունաց Հերակլ կայսեր) անթիւ բազմութիւն յոյժ բնակեցան յՈւտի գաւառի առ հեղեղատովն, որ ի մէջ սահմանայ գեղջն Կաղանկատուոց. և կոխեցին քանդեցին զգեղեցիկ ստացուածս այգեստանեայց և գեօղաստանեայց՝ ընդ որս անցանէին. և անտի չուեալ բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ (Թարթառ գետի) մօտ ի գիւղն Դիւզական» (Կաղան. Բ. Հատ. եր. 103)։ Իսկ եր. 104—107 ասում է. Հերակլի հրամանաւ մեր աշխարհն թափուեցան Խազիրք, ամեն ոք սկսաւ փախչել Պարտաւից դէպի Արցախեան ամրութիւններն. «Խազիրք պնդեցան զհետ փախստէից և հասեալ ի մասն ինչ նոցա առ ստորոտով լերինն, որ է յանդիման գեղջն մեծի Կաղանկատուաց՝ որ ի նմին յՈւտի (առանձնակ) գաւառի, յորմէ և ես»։

Կաղանկատ գիւղի աւերակում, որ պտնւում է Դիւտական աւերակ գիւղի և Մատաղիս չէն գիւղի միջև Թարթառ գետի ձախ կողմում Պառաւի կամրջի (Ղառը քեօրփի) մօտ, ոչ ոք չէ բնակում։ Աւելի պարզ խօսելով՝ Ուտի-առանձնակ, Չարաբերդ կամ Ջրաբերդ և Մեծ-կողմանք կամ Մեծ-Կուէնից, այժմ Կիւլիստան, գաւառների մէջ սահմանագլուխ է կազմում Կաղանկատ գիւղի աւերակն, որի արևելեան կողմն է Թարթառ գետն, հարաւայինն՝ Վարնկաթաղի կամ Լիւլասազի սարն և Մատաղիս գիւղն և հիւսիս-արևմտեան կողմում Դիւզականի աւերակն։

Ինչպէս երևում է՝ Մովսէս Կաղանկատուացին ծագմամբ

---

[1]) Տպագրուած է Մոսկովում պրոփ. Էմինի և Փարիզում Կար. վարդ. Զաքնազարեանի ձեռնով 1860 թուին։

Ուտի ցեղից էր և ոչ թէ Աղուան ցեղից։ Սուրբ գրքից յաճախակի օրինակներ և վկայութիւններ գործ ածելուց իւր պատմութեան մէջ և երկրի դրից, հանքերի և բերքերի մասին արած նկարագրութիւններից երևում է, որ Կաղանկատուացին ոչ միայն տեղեակ եղած է Ս. Գրքին, այլև վարդապետ եղած և իւր երկրի տեղագրութիւնները իմաստասիրած լինելու է։ Անյայտ են պատմագրիս ծննդեան և մահուան տարեթիւերն. բայց սորա անունը և պատմութիւնը յիշած են Մխիթար Այրիվանեցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփաննոս Օրբելեան, ևն։

Արդի բանասէրներից ոմանք Ժ. դարու պատմիչ են համարում Մովսէս Կաղանկատուացին և ոչ թէ Է. դարու, հիմնուելով Մ. Այրիվանեցու այս հակիրճ խօսքի վերայ, եր. 57 «Աստ Աղուանից պատմագիր Մովսէս Կաղանկատուացի և Գրիգոր Նարեկացի» ժամանակամիջոցը սահմանելով ամք Տեառն 981։ Սակայն միևնոյն Այրիվանեցին, եր. 23 ի շարս պատմագրաց դասաւորած է այսպէս. «Եղիշէ վարդապետ, Ձապուհ Բագրատունի, Եւսէբի ի Հերակլի, Մովսէս Աղուանից, Ղևոնդ երէց, ևն»։

Ի նկատի ունենալով Կաղանկատուացու պատմագրութեան ժամանակամիջոցը, համարեա թէ սկսած է այն մօտաւորապէս 625-ին և դադարեցուցած Աղուանից Եղիազար և Հայոց Սահակ Գ. կաթուղիկոսների և Վարազ-Տրդատ իշխանի կենդանութեանց ժամանակ 684—685 թուականին Քրիստոսի։

Աղուանից պատմութիւնն բաղկացած է երեք հատորից, Ա. և Բ. Հատորներն պատկանում են Մովսէս Կաղանկատուացու յատուկ գրչին. իսկ Գ. Հատորն, զորօրինակ մեզնից առաջ շատերն ստուգած են, պատկանում է Մովսէս Դասխուրանցու գրչին։ Կաղանկատուացու մասին՝ իբրև ականատես պատմիչ՝ կան այնպիսի փաստեր, զորս դժուարին կըլինի չըրջել կամ խեղաթիւրել՝ առանց ճշմարտութեան դէմ մեղանչելու։ Օրինակ Բ. Հատոր ԺԹ. գլ. Աղուանից Վիրոյ կաթուղի-

կոսին հետ Մ. Կաղանկատուացին ևս գնում է Խազրաց Ջաթ արքայորդուն մօտ, որպէս գրում է ինքն Աղուանից պատմիչն, «Անդ տեսաք զբազմոցս նոցա ՚ի գուճս ՚ի վերայ ծնգաց.... և զընծայս ողջունին բարձեալ ՚ի վերայ բազկաց մերոց զկնի կաթուղիկոսին»։ Տողերս աւիթ են տալիս մեզ համարել, որ Կաղանկատուացին կամ Վիրոյ կաթուղիկոսի ձեռնասուն սարկաւագն եղած է և կամ Աբեղան։

Երկրորդ՝ իբրև ականատես է նկարագրում Ջիւանշիր իշխանի շքեղ և արքայավայել զգեստները, պարգևները սիրամարգը, փիղը, և այլն ասելով. «Յայնժամ լինէր անդ (՚ի Պարտաւ առաջի պալատան իշխանին) համաշխարհական ժողով. ուր տեսանէաք զնա (զՋիւանշիր)... արքայական շքով պճնեալ, պերևետեալ, տեսանէաք ևս զարքայական հաւ... Ձի ի զրօսանս խաղուց տեսանէաք... արտաքոյ պարսպին... վիմահատակն փիղ» (Բ. Հատ. ԻԸ. գլ.)։

Երրորդ՝ Աղուանից Եղիազար կաթուղիկոսի օրով Գիսվանքում յայտնուած կենաց փայտի հրաշալի սքանչելեաց մասին, որը Սուրբն Մեսրոպ ծածկել էր, ականատես լինելով գրած է. «Լուսոյ խաչիս երևումն... ամենեցուն տեսեալ զաստկութիւն լուսոյն բոցաճաճանչ փայլմամբ եկեալ ընդ ամպս երկնից... զել և զէջ շնորհացն ի վերայ ամենասուրբ խաչին... զոր ոչ մեք (միայն), այլ աշխարհ ամենայն եղեն տեսողք մեծապայծառ ճառագայթից» (Բ. Հատ. ԼԳ. գլ.)։

Մոկացի Անանիա կաթուղիկոսն գրած է թէ գնացի Խաչէն Գրիգոր փառաւոր իշխանի տունն որ յուղղութիւն ածեմ թէ նոցա իշխանակ Թագաւորը, թէ իշխանները և թէ Գագիկ Աղուանից կաթուղիկոսը. և խնդրում էինք Աղուանից պատմութիւնը. «Եւ ոչ ետուն մեզ տեսանել, քանզի ցուցանէր զտունն Աղուանից՝ արքեպիսկոպոս և զտունս Հայոց՝ պատրիարգ, և զսա ինքեանս գիտելով զմասն խոնարհութեան՝ գրաւեալ պահէին զպատմութիւնն Աղուանից» (Արար. ամս. 1897

մարտ ամ. եր. 133—135)։ Այս եղելութիւնն պատահած է հայկական ՑՂԸ. և Փրկչ. 941 թուականին։

Ակներև երևում է որ մինչև այդ ժամանակ մի օրինակ միայն եղած է *Աղուանից Պատմութիւնն*, որ անկարող եղած է ձեռք բերել կաթուղիկոսն գէթ մի օրինակ նոյնից։ Ակներև է նաև որ դարերով թագցրած, պահած են բնագիրը մի քանի *ինքնակոչ* Աղուանից կաթուղիկոսներ, որպէս զի թոյլ չտան որ ընդօրինակելով տարածուի և իմացուի, որ Կաղանկատուացին Թադէոս առաքեալի Հայաստանում քարոզելը առաջ դրած է, իսկ Եղիշէ առաքեալի Աղուանքում քարոզելը շատ տարիներ յետոյ, այս է Հայք կանխաւ հաւատացած են Քրիստոսին, Աղուանցիք յետոյ։ Պատահմամբ անգիտակցաբար Անանիա կաթուղիկոսի ձեռքն է ընկնում նոյն իսկ գաղած բնագիրն[1]) Աղուանից պատմութիւնն Խաչէն գաւառում (նոյն ամսաթերթի եր. 135—137)։ Այժմ պարզուեցաւ այն հարցն, որով պնդում էին ոմանք բանասէրք թէ «Կաղանկատուացին Ժ. դարու պատմիչ է և ոչ թէ Է. դարու». քանզի տեսանք թէ մինչև Ժ. դարն թանդարկուած էր բնագիրն, որից այնուհետև սկսան ընդօրինակել և ինչպէս երևում է շատ սակաւ օրինակներ։ Մինչև Փրկչ. 941 թուականն երևի թէ լսելով միայն իմացած էին Կաղանկատուացու պատմութեան գոյութիւնը, բայց տեսած չէին աչքով։ Թերևս այս է պատճառն, որ Այրիվանեցին գրած է. «Ըստ Աղուանից պատմագիր Մովսէս Կաղանկատուացի և Գրիգոր Նարեկացի»։

Բաց յայդցանէ կարևոր է յայտնել նաև որ Դասխուրանցին նոյն պատմութեան Գ. Հատորը գրած է Ժ. դարում և Աղուանից պատմութեան թելը հասուցած մինչև Քրիստոսի 1000 թուականն։ Սակայն ով որ ուշադրութեամբ կարդացած

---

[1]) Նոյն եղելութիւնը նոյնութեամբ պատմում է և Ս. Օրբելեան Բ. Հատ. եր. 17—23։

է Աղուանից պատմութիւնը և զգուշութեամբ համեմատած է Ա. և Բ. Հատորները Գ.-ի հետ, նա ինքնին համոզուած է որ Դասխուրանցին չարայարած է Կաղանկատուացու կտրած տեղից պատմութեան թելը. կը համոզուի որ Գ. Հատորն ամբողջապէս պատկանում է Դասխուրանցու գրչին, քանզի ամենամեծ և զգալի տարբերութիւն կայ երկոցունց *ոճի, լեզուի, նկարագրութեանց, դարձուածների, նմանութեանց* և *առանձնայատկութեանց* մէջ. վասն զի մինչդեռ վառվռուն, յստակ, երկարապատում և գեղեցիկ գրաբար և ճոխ է Կաղանկատուացու գրածներն, ընդհակառակն համառօտաբան, աղքատացոյն և օտարազգի բառերով խառն է Դասխուրանցու գրածներն։ Որովհետև մեր նպատակից դուրս է այս մասին երկար խօսիլն, վասն որոյ բաւականանում ենք մատնացոյց անելով վերև յիշուած մի քանի կէտերը։ Որ Գ. Հատորի չարայարողն է Դասխուրանցին, ժամանակաւ աւելի մօտ Գօշ-Մխիթար վարդապետն վկայում է գրելով, «Համարեցաք և զայս ես հարկաւոր լինել, զի զչար կարգի հայրապետացն գիցուք զԱղուանից.... զի եթէ ոք յօժարեսցի գրել պատմութիւն զկնի գրեցելոյն պատմութեանն Մովսեսի Դասխուրանցւոյն, որ զբովանդակ պատմէ զտանս Աղուանից, դիւրին լիցի յայսմանէ զչար հայրապետացն առնուլ» (Հայ. Հին. Դպ. պատմ. եր. 696)։

Մասամբ Աղուանից պատմիչներ համարուած են նաև Ղևոնդ երէցն, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Բարձրբերդցին, Յովհաննէս-Սարկաւագ-վարդ. Փառխոսցին, Վանական վարդ. Տաւուշեցին, Գօշ-Մխիթար Գանձակեցին, Յովհաննէս վարդ. Ծարեցին, Եսայի կաթուղիկոս Ջալալեան։

Մակար եպիս. Բարխուդարեանց

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ա. ԳԼ.

Մտքի ձգտումն.—Անյայտ է Աղուանից պատմութիւնն Արամ Նահապետի օրից մինչև Տիգրան Երուանդեան Թագաւորի օրերն.—Լռութիւն.—Շամիրամ անուն ամրոցի առթիւ.—Մամ կին.—Շամիրամ Թագուհի Ասորոց։

Հետաքըքիր է միտքն. այո՛, չափազանց հետաքըքիր է ինչպէս գրողի, նոյնպէս և ընթերցողի միտքն, որ ձգտում է իմանալ թէ Արամ Նահապետն՝ որ բարեկարգ վիճակի մէջ դրաւ ամբողջ Հայաստանը, չբարեկարգե՞ց Աղուանից երկիրը. արդեօք Արամ Նահապետի օրից մինչև Տիգրան Երուանդեան Հայկազուն Թագաւորի օրերն 1300—558 թուականն Քրիստոսից առաջ, միթէ՞ չեղան պատմագրութեան արժանի անցքեր, եթէ եղան և գրուեցան, ո՞ւր են։ Այդ 742 տարիների ընթացքում քանի՞ նահապետներ յաջորդեցին Աղուանքում իւրեանց հարց. իւրաքանչիւր նահապետ ի՞նչ նշանաւոր գործ թողեց և ի՞նչ պատերազմներ մղեց. Աղուանքում բնակող ցե-

ղերն մասնակցեցան արդեօք Արամ, Արայ-Գեղեցիկ և այլ Նահապետաց մղած պատերազմներին։

—Ափսոս, հազար ափսոս որ բոլորովին լռում են այդ հարցերի մասին ազգային պատմիչք, յիշատակարանք և ժամանակագրութիւնք։ Թէև ստուգիւ ոչինչ չգիտենք, սակայն կարծում ենք որ Աղուանից երկրի գէթ հայկական ծագում ունեցող ցեղերն մասնակցած լինելու են Արամ և Արայ-Գեղեցիկ և այլ Նահապետաց պատերազմական գործերում։

Արցախի Փառիսոս գաւառում կայ Շամիրամ անուն մի հնագոյն ամրոց, որի մասին ասում է Վարդան Բարձրբերդցին (եր. 134—135) «Կին մի Մամ անուն գայ 'ի Պարսից երեք որդւով 'ի գաւառն Փառիսոսոյ առ Գրիգոր փառաւոր իշխանն։ Եւ տան որդւքն պատանդ զմայրն և առնուն զՃօթ և զբերդն Ճամիրամայ [1])»։ Ճամիրամ անունս առիթ տուաւ մեզ ենթադրել թէ գուցէ Արցախն ևս Արարատեան նահանգին հետ ենթարկուած լինի Ասորոց գերիշխանութեան՝ Արայի ցաւալի մահուանից յետոյ, որ Ասորիք յանուն իւրեանց յաղթող թագուհւոյն կառուցին բերդը։ Ապա թէ ոչ Հայք և Աղուանցիք, որ անհաշտ թշնամի էին Ասորոց՝ Հայկ Նահապետի օրից սկսեալ, ինչպէս կը զիջանէին կառուցանել իւրեանց ազգովին ատելի վավաշոտ Ճամիրամայ անունով այնպիսի մի բերդ Արցախում։

---

[1]) Տես և «Արցախ» եր. 326—327 Դ. դղեակ իւր ծանօթութեամբ միասին։ Եւ Շամիրամաձոր ըստ Մխիթարայ-Գօշի, տես պատմութեանս ԾԴ. գլխում։

Բ. ԳԼ.

Աժդահակի նենգութիւնն Տիգրանի դէմ.—Տիգրանի պատերազմն Աժդահակի դէմ.—Աժդահակի յաղթուիլն, սպանուիլն և գերդաստանի գերուիլն՝ Հայոց, Աղուանից և Վրաց զինուորական ուժից.—Կիւրոսի դաշնակցութիւնն Տիգրանի հետ.—Մարաց և Ասորոց թագաւորութեանց կործանումն։

—∞—

Աժդահակ, որ Մարաց թագաւորն էր և Հայկազուն Երուանդեան Տիգրան թագաւորի Տիգրանուհու քրոջ ամուսինն, ձեռք է առնում գաղտնի միջոցներ Տիգրան թագաւորը սպանելու։

Տիգրան՝ Հայոց թագաւորն, իւր Տիգրանուհի քրոջ միջոցաւ իմանալով գաղտնիքը, հաւաքում է Հայոց զօրաց հետ և Աղուանից և Վրաց ընտիր զօրքերը ևս և անձամբ առաջնորդում դէպի Մարաց բանակն։ Պատերազմի սաստիկ խռնուած ժամանակ սպանում է Աժդահակ Տիգրանի նիզակի ուժգին հարուածից. Հայաստանի ազատութեան հետ ազատում է և իւր քոյր Տիգրանուհին, յաղթում է Մարաց զօրքն, և 558 թուին Քրիստոսից առաջ փոխադրում են Մասեացոտն գաւառն—Մասսի արևելահայեաց ստորոտն—Աժդահակի գերդաստանն 10,000 գերիներով միասին։

Պարսից Կիւրոս թագաւորն, որ Մարաց Աժդահակ թագաւորի թոռն էր, հետամուտ է լինում կործանել Մարաց և Ասորոց թագաւորութիւնը. տեսնելով Հայոց թագաւորի զօրեղ դիրքը՝ կապում է Տիգրանի հետ բարեկամական դաշն՝ օգտակար համարելով իւր նպատակին։ Տիգրան վերստին հաւաքում է Հայոց, Աղուանից և Վրաց—իբրև հպատակ ազգաց—ընտրելագոյն զօրքերը և Կիւրոսի զօրաց հետ միասին կործանում են Մարաց և Ասորոց թագաւորութիւնը, ըստ կանխաձայն

մարգարէութեան Երեմիայի (Գլ. ԾԱ. 24—27) որ ասում է Աստուծոյ կողմից «Եւ հատուցից Բաբելոնի և բնակչաց Քաղդէացւոցն ըստ ամենայնի չարեաց նոցա... զի յապականութիւն յաւիտենից եղիցիս, ասէ Տէր։ Առէք նշան ի վերայ երկրիդ. փող հարէք ընդ ազգս ամենայն. հրաւիրեցէք ի վերայ դորա (Բաբելոնի) գունդս։ Պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին» ևն։

Կիւրոս և Տիգրան այդ երկու թագաւորութիւնները կործանելուց վերջն բաժանում են Մարաց երկիրը, այն օրուանից-538-ից Քրիստոսից առաջ՝ Կասպից ծովի մօտ եղած Մարաց երկիրն Փայտակարան նահանգն միանում է Հայաստանին որպէս ասած ենք կանխաւ։

Գ. ԳԼ.

Պարսից և Հայոց դաշանց քակտումն.—Աղուանից և Վրաց զօրքերն Հայոց զօրաց մէջ իբրև օժանդակ.—Պարսից Դարեհ Ա-ի և Հայոց Վահագնի մէջ ծագած երկարատև պատերազմն.—Արբելայի պատերազմն. Հայկազեան և Կիւրոսեան թագաւորութեանց մահն. 590—33 Քրիստոսից առաջ։

Մեզ անյայտ պատճառաւ մշտատև չէ մնում Պարսից և Հայոց մէջ կապուած դաշն. գուցես քանդւում է Կիւրոսի և Տիգրանի մահուամբ և քաղաքական ինչ ինչ հանգամանքներից գոյանում է ընդհակառակն Դարեհ Ա–ի և Վահագն թագաւորի մէջ ոխերիմ թշնամութիւն։ Արդէն տեսանք որ սովորութիւն եղած էր — Հայոց թագաւորներն պատերազմների դէպքերում գումարում էին և Աղուանից ու Վրաց զօրքերը ևս իբրև օժանդակ հպատակների կողմից։

Ինքն Դարեհ Բիսութունի ժայռի սեպաձև արձանագրութեան [1]) մէջ նկարագրում է թէ պատերազմն երկարատև եղաւ, այնպէս որ վեց անգամ միմեանց ետևից յղուած պարսիկ զօրքն անկարող է լինում յաղթել Հայոց։ Թէև յաղթութիւնն անորոշ է մնում ըստ արձանագրութեան, բայց ի նկատի ունենալով որ Հայոց բանաստեղծներն և երգիչներն անմահացուցած են զՎահագն և Վրացիք աստուածացուցած և իբրև աստուած պաշտած [2]). երևում է այս հանգամանքից որ Վահագն յաղթող հանդիսացած լինի։

Հայոց թագաւորներն՝ հետևելով Տիգրան թագաւորի օրինակին՝ սովորութիւն արին պատերազմի տանել և Աղուանից և Վրաց զօրքերը ևս։ 330 թուին Քրիստոսից առաջ՝ Աղեքսանդր Մակեդոնացու արշաւանաց դէմը առնելու համար՝ Պարսից Դարէհ-Կոդոմանոս թագաւորի խնդրանօք՝ Հայկազանց վերջին թագաւորն Վահէ իւր հաւաքական զօրքով աճապարում է Արբելա, սակայն յաղթւում են Հայոց և Պարսից զօրքերն և կործանւում Հայկազանց և Կիւրոսի ստեղծած թագաւորութիւններն Վահէի և Դարէհի սպանուելովն։ Տիրում են Հռոմայեցիք։

---

[1]) Արձանագրութեանս պատճէնն բացատրութեամբ հանդերձ տես 1879 թուի Արարատ ամսագրում, իսկ համառօտեալը՝ Պատմութիւն Հայոց Ս. Պալասանեան եր. 44—47։

[2]) Թերևս Վրացիք՝ անձամբ տեսնելով Վահագն թագաւորիս դիւցազնական քաջագործութիւնները, կանգնեցին Վրաստանում յանուն Վահագնի արձան, որը և պաշտեցին իբրև աստուած երկար ժամանակ։

ԿՈՒՍԱԿԱԼԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դ. ԳԼ.

Արշակունեաց ծագումն և զօրանալն.—Սելևկացւոց դէմ կռուել և յաղթելն մասնակցութեամբ Հայոց և Աղուանից.—Արշակ հիմնադիր Արշակունի թագաւորութեան Պարսից և Հայոց.—Վաղարշակ Հայոց թագաւոր.—Իւր կարգադրութիւններն.—Առան Կուսակալ Աղուանից։

Խորենացու վկայութեամբ՝ Արշակունիք կամ որ նոյն է Պարթևք սերած են Աբրահամ նահապետի Քետուրա կնոջից։ «Իսկ օտար պատմիչների վկայութեան նայելով՝ Պարթևներն իւրեանց ծագումն առնում են այն բարբարոս ցեղերից, որոնց շատ հին ժամանակ Սկիւթացիք աքսորեցին Միջին-Ասիայից։ Նոցա անունը Սկիւթական լեզուով նշանակում է եղել *աքսորեալ*» (Պատ. Հայ. Ս. Պալաս. եր. 62)։

Պարթևներն իբրև աննշան հատուած երկար ժամանակ բնակում են Կասպից ծովի հարաւ-արևելեան լեռնային վայրերում և հպատակում էին տիրող կառավարութեանց. 255-ին Քրիստոսից առաջ ապստամբում են Սելևկացւոց դէմ, տիրում

Պարսկաստանին և Հայոց օգնութեամբ խալառ քշում թշնամին մինչև Ասորոց կողմերն։ Այս թագաւորութիւնն իւր հիմնադիր Արշակ Ա-ի անուամբ կոչեցաւ *Արշակունի*, սորա ազգակից թագաւորութիւնն, որ մնաց Բագտրիայում, կոչուեցաւ Պարթև կամ թագաւորութիւն Պարթևաց։

Արշակ Ա. Հայոց օժանդակութեան ծառայութիւնը վարձատրելու համար իւր եղբայր Վաղարշակը թագաւորեցնում է Հայոց և Աղուանից վերայ 149-ին Քրիստոսից առաջ։ Վաղարշակ Արշակունի Հայոց Ա. թագաւորն հաստատում է իւր աթոռը Մծբին քաղաքում. և 'ի չարս բարեկարգութեան Հայաստանի՝ բարեկարգում է և Աղուանից երկիրը։ Թագաւորն Աղուանից երկրին սահման է որոշում արևելեան կողմից Երասխ գետը և Կասպից ծովն, արևմուտքից՝ Հնարակերտ ամրոցը, հարաւից Արցախեան ամենաբարձր սարերի գագաթնագիծը և հիւսիսից՝ Կովկասեան սարերը։ Ապա «Վաղարշակ արքայ Հայոց կոչեաց զվայրենի եկամուտ ազգս, որ 'ի դաշտէն հիւսիսոյ կամ որ զստորոտովն Կովկասու, կամ որ 'ի հովիտս և խորաձորս զհարաւով մինչև ցմուտս դաշտին։ Պատուէր անէր՝ զաւազակութիւն և զմարդադաւութիւն թողուլ և հարկաց արքունի հնազանդ կալ»․ (Կաղ. Ա. Հատ. եր. 6—7)։ Յետոյ կարգում է Աղուանից բազմացեղ բնակչաց վերայ *առաջնորդներ* և վերակացուներ, իսկ սոցա վերայ կարգում է *Կուսակալ* ծագմամբ Յաբեթական տոհմից և Սիսական ցեղից Առանը, որ ամեն գործի մէջ խելացի, հանճարեղ, անուանի և առաջնակարգ մարդ էր։ Յետոյ Առանի քաղցր բարուց բնաւորութեան պատճառաւ *Աղուանք* կոչուեցաւ երկիրն «քանզի աղու ձայնէին զնա»։ Կասկած չկայ, որ *խելացի* և *հանճարեղ* Առան *Կուսակալն* արած լինելու է շատ օգտակար կարգադրութիւններ և հանրօգուտ գործեր, որոց մասին սակայն չունինք տեղեկութիւն։

Մինչև անգամ յայտնի չէ թէ քանի տարի իշխեց Առան

՝ որ թուին վախճանեցաւ։ Թէպէտ Հայոց պատմիչներն բնաւ չեն յիշում թէ յաջորդող կուսակալ ունեցաւ Առան. սակայն ենթադրում ենք, որ ունեցած է յաջորդող կուսակալներ։

Ե. ԳԼ.

127—31 Քրիստոսից առաջ.—Կաղանկատուացու վկայութիւնն.—Աղուանից զօրքի նոր կրթութիւնն.—Աղուանից զօրքն Արտաշէս Ա-ի և Տիգրան Բ.-ի բանակում.—Պոմպէոսի պատերազմն և Նոր-կրթութեան օգուտն.—Աղուանից զօրքն Արտաւազդ Ա-ի բանակում։

—∞—

Կաղանկատուացին, Ա. Հատ. Ջ. գլ. ասում է. «Պատմութիւն ճշմարիտ առաւել քան զնախագահին Առանայ 'ի Վաղարշակայ տանս Աղուանից այլ ոչ ինչ գտաք մինչև զՔաջն Վաչական, որ միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից»։

Ես ևս շատ և շատ աշխատեցի գտնել և ամբողջացնել 127—31 թուի, այս է 96-ամեայ կատարուած պատմութիւն Աղուանքում, սակայն գտայ միայն որ Աղուանից զօրքն ևս Նոր-կրթութիւն, Նոր-կարգ և Նոր-զինուորական կանոններ ստացած է Արտաշէս Ա-ից Հայոց զօրաց հետ. ապա մասնակցած է Արտաշէս Ա-ի և Տիգրան Բ-ի պատերազմներում Հայոց զօրաց. և ապա դիմադրելով Պոմպէոսի ահարկու բանակին՝ պաշտպանած է իւր սուրբ հայրենիքը։

Աղուանից երկրի համար փրկարար ազդեցութիւն են ունենում զինուորական նոր կարգերն, կանոններն և կրթութիւնն, այնպէս որ ոչ միայն բարձրացուցանում են Աղուանից զօրաց և զինուորականութեան անունը, քաջութեան փառքը և կրթութեան պատիւը, այլ և զարմացնում են զՊոմպէոս և իւր զօրաբանակը։ Կ. Վ. Ճահնազարեան Պատ. Աղուանից Ա.

Հատ. եր. 65—66 գրած է. «Պոմպէ(ոս) զօրավար Հռովմայեցւոց, ըստ Պլուտարքի, ետ նոցա (Աղուանից) ճակատ սաստիկ 60—70 ամօք նախ քան զՔրիստոս և ոչ կարացեալ յաղթել՝ կացոյց առ սահմանօք նոցա լէգէոնս 'ի պահպանութիւն սահմանաց հասարակապետութեանն Հռովմայ»։ Պատմում է և Ստրաբոն. «Ալբանիացիք [1]) պատերազմում են հետի և ձի հեծած՝ զինուած թեթևազէն և սպառազէն Հայոց ձևով. Նոցա զինուորներն թուով աւելի են քան Վրաց զինուորներն, որովհետև պատերազմելու համար Պոմպէոսի դէմ դուրս բերին վաթսուն հազար հետևակ, քսան հազար ձիաւոր» (Ստրաբ. Թ. գիրք եր. 481)։

Աղուանից զօրքն մասնակցում է և Արտաւազդ Ա-ին պատերազմներին 36—31 Քրիստոսից առաջ։

Ջ. ԳԼ.

Ստրաբոնի վկայութիւններն Աղուանից երկրի բնակչաց մասին և թագաւորի ու քրմապետի մասին և որոց պաշտամանց մասին։

—∞—

Ստրաբոն աշխարհագիրն, Թ. գիրք եր. 481, գրած է. «Աղուանններն [2]) սիրում են խաշնարածութիւն. վայրենի են բարքով. քաջ են և թափառական. Նոցա բնակութեան սահմաններն են արևելքից՝ Կասպից ծովն, արևմուտքից՝ Վրացիք, հիւսիսից՝ Կերաւնեան (Կովկասեան) լեռներն և հարաւից՝ հայերըն։ Աղուանից միջով հոսում են Կուր և ուրիշ գետեր՝ պտղա-

---

[1]) Այսինքն Աղուանցիք. քանզի հին Աղուաններն—Ալբանիացիք—վաղուց հեռացել էին։

[2]) Հատուածիս գրաբարն կայ և Կաղան. առաջաբանութեան մէջ (Կ. Վ. Ճահնազարեան)։

բեր գործելով երկիրը, որ առանց վարուցանքի տալիս է մէկին յիսուն։ Այնտեղ մշտադալար կանաչն մատակարարում է անասնոց առատ ճարակ. բարեխառն է երկրի օդն. բնաւ չէ թաղուում խաղողի որթն և հինգ տարին միանգամ յօտելով պտղաբերում է միշտ. իսկ այծերն ծնում են մի տարում երկու անգամ։ Բարձրահասակ են Աղուանցիք և գեղեցիկ, բնաւորութեամբ պարզ և անշահասէր, չգիտեն հարիւրից աւելի համարել, չունին գաղափար չափուց և կշռոց մասին, սակայն առանց բարւոք խելամուտ լինելու՝ բնաւ չեն մխել իւրեանց անձերը պատերազմական գործի, քաղաքական իրերի և անդոց հերկման։ Ատում են մարմնոյ հեշտասիրութիւնը. գնում և վաճառում են փոխանակութեամբ. պատերազմում են հետի և ձի հեծած՝ զինուած թեթևազէն և սպառազէն Հայոց ձևով։ Նոցա (Աղուանից) զինուորներն թւով աւելի են Վրացւոց զինուորներից, որովհետև Պոմպէոսի դէմ պատերազմի հանեցին վաթսուն հազար հետևակ և քսան հազար ձիաւոր։ Թեթև են իւրեանց զէնքերն, գեղարդն և աղեղի կոթն, զրահն, վահանն և գազանների մորթուց (շինուած) սաղաւարտն։ Աղուանից նման են Կազպերն, յորոց առաւ ծովն իւր անունը։ Որսորդութեան մէջ արագաշարժ և ճարտար են Աղուանցիք և իւրեանց շուներն։ Աղուանցիք այժմ ունին միայն մի թագաւոր (Քաջն Վաչական)։ Առաջ իւրաքանչիւր ցեղ ունէր իւր առանձին բարբառը և իւր առանձին թագաւորը։ Լեզուների թիւն հասնում է 26-ի. ուստի և չկայ նոցա մէջ սերտ միաբանութիւն։ Աղուանից աշխարհն սնուցանում է մահաբեր կենդանիներ, նաև կարիճ և մոր։ Աղուանք պաշտում են արեգակ, որից աւելի լուսինը։ Նոցա կռատան մէջ կայ քրմապետ, որ թագաւորից յետոյ ունի պատւոյ նախապատիւ բարձր և տիրում է շատ գաւառների։ Այնտեղ կռատան ներսում 'ի պատիւ իւրեանց չաստուածուհուն (լուսնին) զոհում են զմարդիկ մորթելով։ Մեծապէս պատուում են ծերունիները, ազգակից-

ները և օտարները. բայց անարժան են համարում պահել մեռելոց յիշատակները, որոց հետ թաղում են և նոցա ստացուածները. իւրեանց հարց ժառանգութիւնը չվայելելու պատճառաւ ապրում են չքաւորութեան մէջ»։

Ստրաբոն, որ ժամանակակից էր Հռովմայեցւոց Տիբերիոս Ա. կայսեր, վերևի տեղեկութիւնը գրած է մօտաւորապէս Քրիստոսի ծննդենից 30—33 տարի յետոյ։ Ստրաբոնի այս գրուածն բաւականին լոյս է սփռում այն ժամանակուայ ժողովրդոց նիստ ու կացի, կենցաղավարութեանց, կրօնի և պաշտամանց և զոհերի մասին։ Ստրաբոնի յիշած միակ թագաւորն է մեր համեստ կարծիքով Աղուանից Քաջն Վաչական Ա.։

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Է. ԳԼ.

Կաղանկատուացու և Ստրաբոնի գրածների համեմատութիւնն Բաջն Վաչականի մասին.—Վաչական Թագաւորն ծագմամբ Արշակունի է.— Անյայտ է սորա գահակալած տարեթիւն և Թագաւորելու պատճառն։

—∞—

Կաղանկատուացու այս խօսքը—«Պատմութիւն ճշմարիտ առաւել քան գնախագահիլն Առանայ 'ի Վաղարշակայ տանս Աղուանից այլ ինչ ոչ գտաք մինչև ցԲաջն Վաչական, որ միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից» եթէ համեմատենք Ստրաբոնի «Աղուանք ունին այժմ միայն մի Թագաւոր» խօսքի հետ, կըհակինք այն եզրակացութեան, որ միևնոյն անձն է երկոցունց Թագաւորն, անշուշտ 'ի նկատի ունելով ժամանակը և քաջ և միանգամայն տիրեաց բառերը։

Առաջի պատմիչն ասում է թէ Աղուանից առաջին Թագաւորն—Վաչական Ա. ծագմամբ Արշակունի է, բայց թէ Արշակունի ո՞ր ճիւղից է, Հայոց թէ Պարսից։ Սակայն մենք համոզուած ենք որ Հայոց Արշակունի Թագաւորական ճիւղին էր Բաջն Վաչական, որ հիմնադիր եղաւ Աղուանից Արշակունի Թագաւորութեան. քանզի ինչպէս տեսանք 'ի վաղուց հետէ արդէն կար Հայոց և Աղուանից մէջ ազգակցական, արենակցական և անանջատ միութեան սիրոյ կապ[1])։

Միայն մութ է մնում մեզ համար թէ ինչ հանգամանքների բերմամբ ծնած է Աղուանից Արշակունի Թագաւորութիւնն Բաջն Վաչականով։ Անյայտ է նաև Թագաւորիս գահակալած և վախճանուած իսկական տարեթիւերն. և բացի Պոմպէոսի դէմ մղած պատերազմից ուրիշ գործերն։

Ը. ԳԼ.

Եղիշէ կամ Եղիշ առաքեալն Աղուանքում Փրկչական 70 Թուին.— Սորա քարոզութիւններն.—Գիս առաջին եկեղեցի Աղուանից.—Սոյն առաքեալի նահատակութիւնն Հոմենքում.—Սորա նշխարաց փոխադրութիւնն Վաչական Գ.-ի ձեռնով։

—∞—

Յիսուս Քրիստոսից յետոյ 34 թուին Թադէոս առաքեալն յղւում է Հայաստան քարոզելու, որն իւր քարոզութեան սկիզբը սկսում է Աբգար թագաւորի պալատից։ Եղիշէն, որ սոյն առաքեալի աշակերտն էր, իւր վարդապետ Թադէոս Առաքեալի նահատակութիւնից յետոյ գնում է Ս. Երուսաղէմ, Տեառն եղբայր Յակոբոս Առաքեալից ձեռնադրւում եպիսկոպոս և Փրկչ. 70 թուին Պարսկաստանի կողմից մտնում Աղուանից երկիրն և իւր քարոզութեան սկիզբը սկսում է Չողայ քաղաքի թագաւորական պալատից, որ այն ժամանակի մայրաքաղաքն էր Աղուանից։ Սպա առաքեալս շարունակ քարոզելով և աշակեր-

---

[1]) *Մեր խօսքն բնիկների մասին է և ոչ թէ եկամուտների։ Կիրակոս, եր. 112, ասում է. Աղուանից Թագաւորներն ծագած են Առանի հետականներից։*

տելով Ճղբաց, Լփնաց և Բագուայ և Ճամախու գաւառներով հասնում է Ուտեաց Կապաղակ գաւառի Սրհաւն քաղաքն [1]) իւր երեք աշակերտներով միասին, որոց ետևից գալով ոմանք անօրէն մարդիկ, յորոց նահատակւում է աշակերտներից մին [2])։ Երկու աշակերտներն թողլով իւրեանց վարդապետը՝ գնում են նահատակողների ետևից. իսկ սուրբն Եղիշէ հասնում է Գիս [3]) կանգնում առաջին եկեղեցին Աղուանից, մատուցանում ս. պատարագ, ապա դառնալով Կապաղակ գաւառն շարունակ քարոզելով, անցնում է Զարդունի դաշտակով, հասնում Հոմենք [4]) կոչուած կռատունն, ուր և նահատակւում է ս. Եղիշէ առաքեալն և որի մարմինն ձգւում է մահապարտաց գուբն։ Անյայտ է նահատակութեան տարեթիւն. յայտնի է միայն որ շատ յետոյ Վաչական Գ. բարեպաշտ թագաւորն Ս. առաքեալիս մասունքները փոխադրում է Արցախ, կառուցանում Ջրվշտիկ [5]) կոչուած վանքը յանուն Եղիշ առաքեալի, որի մասունքները հանգուցանում նորա մէջ, իսկ պատուական գլուխը՝ Գլխոյ վանքում [6])։

Թ. ԳԼ.

Երուանդի սպանութիւններն և թագաւորելն.—Արմաւիր քաղաքի շինութիւնն.—Պատերազմ, Արտաշէս Բ. թագաւոր Հայոց.—Օժանդակութիւն Աղուանից.—Մահ Երուանդի։

—oo—

Երուանդ անուն ոմն նախարար Հայոց ջնջում է Սա-

[1]) «Աղ. երկ. և Դր.» եր. 254.
[2]) « « « « « 244.
[3]) « « « « « 269—270.
[4]) « « « « « 256.
[5]) «Արցախ» եր. 234, իւր 36 ծանօթ.։
[6]) » » 228 և 427։

նատրուկ թագաւորի ցեղը, որից ազատւում է միայն Արտաշէս անուն մի որդի, որը Սմբատ Բագրատունին փախցնում է Պարսից արքունիքն։ Երուանդ, որ մօր կողմից համարւում էր Արշակունի, ինքնակոչ թագաւորում է Հայոց վերայ և շինում Երուանդակերտ քաղաքը Երասխի վերայ։

Փրկչական 85 թուին Արտաշէս Բ. Պարսից Դարեհ թագաւորից թագազարդուած մտնում է Ուտի նահանգն պարսկական սակաւ զօրքով։ Թագադիր Սմբատ Բագրատունին, որ Արտաշէսին փախցնող, ազատող և դահեկի դեր կատարողն է լինում, հաւաքում է Աղուանից զօրքը ևս և յարձակւում գործում Երուանդի վերայ, որ իւր զօրքով բանակում էր Գեղամայ լճի եզերքում։

Յաղթւում է Երուանդեան բանակն, ինքն Երուանդ փախչում և մտնում է իւր շինած Երուանդակերտ քաղաքն, բայց սպանւում է։ Սմբատ Բագրատունին Սանատրկի թագը դնում է Արտաշէս Բ-ի գլխին և հրատարակում թագաւոր Հայոց։

Ժ. ԳԼ.

Արշաւանք Ալանաց.—Յաղթութիւն Արտաշէսի և ամուսնութիւն Սաթենիկ օրիորդի հետ.—Աղուանից Վաչէ Ա. թագաւորի մահն.—Մանր թագաւորներ։

—oo—

Վրացւոց դրդմամբ Ալանք հիւսիսային ցեղերով և Վրաց զօրքի մի մասով մտնում են Աղուանից երկիրն, անցնում Կուր գետի աջ ափն և բանակում և գործում աւերմունքներ։

Հասնում է իւր զօրքով Արտաշէս Բ. որին միանում է և Աղուանից զօրքն. սաստկանում է պատերազմն. յաղթւում է Ալանաց զօրաբանակն և աճապարանօք անցնում Կուր գետի

ձախ ափին, բայց գերի է ընկնում Ալանաց թագաւորի որդին Հայոց ձեռքն, որի հայրն իւր Սաթենիկ դուստրը Արտաշէս Բ-ին կնութեան տալով ազատում է իւր որդին և հեռանում Աղուանից երկրիցն։

Հայաստանի խառնակ դրութեան ժամանակ, այս է Սանատրկի սպանուելուց յետոյ վախճանում է Աղուանից Վաչէ Ա. թագաւորն, որ յաջորդած էր Քաջն Վաչական Ա-ի. և ընդհատուում է Վաչականեան թագաւորութեան շարունակութիւնն մեզ անյայտ պատճառաւ։

Կասպից, Լփնաց և Բաղասական ցեղերն յարմար առիթ համարելով՝ Թագաւոր են անուանում իւրեանց իշխանները։ Այս է պատճառն որ պատմութեանց մէջ սոյն ցեղերի անուամբ յիշուած են թագաւորներ, և թագաւորազուններ, որպէս տեսանք ցեղերի ծագման շարքում։ Ըստ վկայութեան Ստրաբոնի երևի թէ ցեղերս առաջ էլ ունեցած են թագաւորներ։

ԺԱ. ԳԼ.

Խազրաց և Բասլաց արշաւանքն.—Վաղարշակ Բ. թագաւորի ճակատամարտն Փրկչ. 213-ին, յաղթութիւնն և մահն.—Խոսրով Ա. թագաւորի վրէժխնդրութիւնն։

Դարբանդի դռնով հեղեղի նման թափուում են Աղուանից երկիրն Խազրաց և Բասլաց ցեղերն և սկսում են աւերելով, քանդելով և կողոպտելով անցնել Կուր գետից և ասպատակել Հայոց երկիրը։

Հասնում է Հայոց Վաղարշակ Բ. թագաւորն իւր զօրքով, անում մեծ կոտորած, հայ և աղուան զօրքով հալածում թըշ-

նամին, դուրս արտաքսում Դարբանդի դռնից [1]). բայց յաղթութեան վերջին յաղթանակի ըոպէին սպանուում է Վաղարշ նետահար խոցուելով թշնամուց։

213-ին հայ և աղուան միացեալ զօրքով գալիս է Մեծն-Խոսրով՝ Վաղարշի որդին, անցնում Դարբանդի նոյն դռնից, լուծում իւր հօր սպանման վրէժը, առնում հարիւրից մին պատանդ հիւսիսային ցեղերից, կանգնում յունարէն տառերով մի արձանագիր կոթող 'ի յիշատակ իւր փառաւոր յաղթութեան և ապա դառնում Հայաստան։

ԺԲ. ԳԼ.

Հայոց և Աղուանից երկիրներն Պարսից իշխանութեան տակ.—Տրդատ թագաւորի վերադարձն 'ի Հայաստան.—Ազատութիւն Հայաստանի և Աղուանքի Պարսիկներից.—Ուռնայր Աղուանից Թագաւոր։

Փրկչական 261-ին Խոսրով մեծի սպանուելով Պարսից իշխանութեան տակ է ընկնում և Հայաստանն և Աղուանքն։ 26 տարի մնալով ենթարկուած Պարսից տիրապետութեան՝ համարեա թէ աւերուում և քանդուում են երկու երկիրներս։

Թագով պսակուած Հռովմից դառնում է Տրդատ թագաւորն 287—289, շրջապատուած Հայոց և Հռովմայեցւոց զօրքով. հալածում է Հայաստանից և Աղուանքից վերջին պարսիկը։ Հայոց և Աղուանից զօրքով Տրդատ թագաւորն արշաւում է Պարսկաստանի վերայ, գոգցես հրաշքներ գործելով, հասնում Պարսկաստանի խորքերն, սարսափ տարածում շրջակայ ցեղերի վերայ, նորոգում է Հայաստանի և Աղուանից նախկին (և

[1]) Այս դուռնն զանազան ժամանակներում ստացած է զանազան անուններ—Դուռն ճորայ, Պահակ ճորայ, Չողայ, և այլն։

բարեփոխուած) կարգերը և կանոնները և ըստ աւանդութեան՝ թագաւորեցնում է Աղուանից վերայ Ուռնայրը, որ Վաչականեան ցեղից էր և Աղուանից Արշակունի Գ. թագաւորն։ Հարկ է յայտնել որ Կաղանկատուացին, Ա. Հատ. Ը. գլ. գրած է. «Ըստ կարգի գրոյց յՈռանայ մինչև ցՈւռնայր Աղուանից արքայ և ցՏրդատ Հայոց արքայ ոչ գտաք, այլ հարևանցի գրեցաւ»։

Ուռնայրս Պարսից Շապուհ Ա. թագաւորի քրոջ ամուսինն էր։ Ուռնայր գահակալած է երևում մօտաւորապէս Փրկչական 299—301։ Կաղանկատուացու (Ա. Հատ. Թ. գլ.) վկայութեամբ դեռ թագաւոր չնստած օգնած է Տրդատին պատերազմներում. «Եւ էր Ուռնայր արքայ Աղուանից քեռայր Շապհոյ (Ա.) Պարսից արքային, քաջազօր այր, որ 'ի մեծամեծ պատերազմունս զհոյակապ անուն ժառանգեաց, 'ի մէջ Հայաստանեայց նշան յաղթութեան կանգնեալ»։

ԺԳ. ԳԼ.

Հայոց և Աղուանից հոգևոր լուսաւորութիւնն 302—304։

Հայոց հոգևոր լուսաւորութիւնն սկսած էր Փրկչական 34-ին Թադէոս և Բարդուղիմէոս սրբազան առաքեալների ձեռնով—ս. Աւետարանի քարոզութեամբ։ Սոցա աշակերտներից մին հիմնարկում է Տաթևի վանքը Մեծ-Սիւնիքում և Դադի վանքը՝ Արցախի Ռաստակ գաւառում յանուն Թադէոս Առաքեալի և Դադի աշակերտի։ Իսկ միւս աշակերտն Եղիշէ 70 թ. քարոզում է Աղուանքում և հիմնում Գիս վանքը Շաքի գաւառումն։

Սակայն Աստուծոյ նախախնամութիւնն Հայաստանի և Աղուանից ընդհանուր լուսաւորութիւնը վերապահած էր աւե-

լի բազմաչարչար առաքեալի ս. Լուսաւորչի ձեռնով մատակարարելու։ Ինչպէս ձմրան ձիւներն՝ նստելով երկրի վերայ՝ փափկացնում և զօրացնում են հողը՝ գարնան ընդհանուր բուսականութիւնը աճեցնելու և ծաղկեցնելու համար, նոյնպէս Թադէոս և Բարդուղիմէոս ս. առաքեալների և սոցա աշակերտների Հայաստանում և Աղուանքում թափած ս. արիւն և ամփոփուած մարմիններն և կենդանի Աստուծոյ խօսքերն փափկացրած էին բնակչաց կարծր սրտերը՝ ընդունելու Քրիստոնէութեան հաւատը, խոնարհուելու Քրիստոսի քաղցր լծի տակ, ծաղկեցնելու և աճեցնելու ս. Աւետարանի սերմերը։

Ուռնայր թագաւորն, երբ լսում է ս. Գրիգորի Կեսարիայից դառնալը, առնում է իւր հետ Գարդմանեցւոց, Կասպից, Լփնաց, Ճղբաց և Գղուարաց իշխանները և զօրքը և դիմաւորում Տրդատ թագաւորի հետ Եփրատ գետի վերայ, որի մէջ մկրտուում են թագաւորներս իւրեանց գերդաստաններով և զօրքով, մկրտուում են 7 աւուր մէջ նաև միլիօնաւոր հայաստանցիք, որոց մէջ են լինում նաև Կեսարիայից դարձած Ուտիացւոց, Գարգարացւոց և Ծովդէացւոց իշխաններն։ Այնուհետև կործանուում են կռատուններն, շինուում են եկեղեցիներ, ձեռնադրուում քահանաներ, վարդապետներ և եպիսկոպոսներ և եկեղեցւոյ ստորին պաշտօնեաներ։

Հայաստանը լուսաւորելուց յետոյ Տրդատ և Ուռնայր թագաւորներն և իշխաններն մտնում են Աղուանից երկիրն ս. Լուսաւորչի հետ միասին։ Մարդազոհութիւնից զզուած, հեթանոսական խայտառակ պաշտամունքներից ձանձրացած ժողովուրդն աճապարում է լսել ս. Հայրապետի աստուածարան քարոզները, հեռանում է հեթանոսական սովորութիւններից, գրկում է Քրիստոնէութիւնը, ընդունում է ս. մկրտութիւնը, կործանում կռատունները և շինում եկեղեցիներ։ Ս. Լուսաւորիչ անձամբ հիմնում է Ամարաս եկեղեցին Արցախի Վարանդայ գաւառում և ումն եպիսկոպոս վերակացու կարգում Աղուանից

բնակչաց վերայ։ Ս. Լուսաւորիչ այսպէս լուսաւորում է նաև Վրաստանը և ապա դառնում ս. Էջմիածին։ «Էջ Թագաւորն (Ուռնայր) յամենասուրբ ջուրն և ամենայն զօրքն ընդ նմա։ Եւ կատարեաց զնոսա քահանայապետն (ս. Լուսաւորիչ) 'ի վերստին ծնունդն յերկնաւոր յորդեկրութիւն, և ելին ամենեքեան լցեալ Հոգւովն Սրբով։... Այսու երկնաւոր բարեօք լցեալ՝ եկն Ուռնայր արքայ եմուտ յաշխարհն Աղուանից, ուսոյց և կատարեաց զնոսա առաքելական կանոնօք, ընկալան ամենեքեան զդրոշմն երկնաւոր (Կաղանկ. Ա. Հատ. ԺԱ. գլ.)։ «Երթեալ (ս. Լուսաւորչի) լուսաւորել զՎրաց և զԱղուանից աշխարհն։ Երթեալ 'ի Հարանդ (Վարանդայ) գաւառ՝ ուսուցանէր և խրատէր պահել զպատուիրանս Աստուծոյ։ Եւ արկանէր հիմն եկեղեցւոյ և'ի գիւղաքաղաքին Ամարասայ...» (նոյն ԺԳ. գլ.)։

Աղուանից առաջին հայրապետն համարուած է՝

1 Եղիշ առաքեալ.

2 Ոմն օտարազգի ձեռնադրեալ ս. Լուսաւորչից [1]).

ԺԴ. ԳԼ.

Պարսից չար նախանձն.—Սև-Հոնաց արշաւանքն.—Տրդատ և Ուռնայր թագաւորաց յաղթութիւնն.—Շապուհ Բ-ի պատժուիլն։

—∞—

Չորս կամ հինգ և կամ մի քանի տարուան ընթացքում Քրիստոնէութեան արագ ծաւալումն ողջ Հայաստանում, Աղուանքում և Վրաստանում համարեա թէ մշտախայթ փուշ է

[1]) Ըստ Գօշ Մխիթարի՝ սուրբն Ձուփխաղիշոյ։ Իսկ ըստ Կիրակոսի «Եւ ձեռնադրէ ս. Գրիգոր զայր մի 'ի սպասաւորաց իւրոց եպիսկոպոս»։ Իսկ ըստ Գիւտ եպիսկոպոսի (Կաղան. Ա. Հատ. եր. 16)։ «'Ի Հռովմ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքայի»։

դառնում հրապաշտ Պարսից աչքին։ Ինչպէս Հռովմայեցւոց կայսերաց ժամանակ երկար պատերազմեց հեթանոսութիւնն Քրիստոնէութեան դէմ, խաչակրաց ժամանակ Ղուրանն Աւետարանի դէմ, նմանապէս Սասանեան թագաւորների ժամանակ Զրադաշտական կրակն երկար պատերազմում է Հայոց, Աղուանից և Վրաց Աստուածպաշտութեան դէմ։

Սասանեան Շապուհ Բ. ակնածելով Տրդատի հուժկու սրից՝ նախ սկսում է գրգռել Սև-Հոնաց ցեղերը Հայոց և Աղուանից դէմ։ Ուռնայր թագաւորն իմանալով ազդարարում է Տրդատ թագաւորին, որ իւր զօրքով միանում է Աղուանից զօրքին Գարգարացւոց դաշտում։ Այդ տեղ ճակատում են միմեանց բանակներն, խառնւում են երկուստեք զօրքերն, սաստկանում է կռիւն։ Այդ միջոցին Բասլաց Գեղեհոն թագաւորն, տեսնելով իւր զօրաց յաղթուիլը, ձգում է իւր կաշուէ պարանը՝ որ ըմբռնէ Հայոց թագաւորը։ Բայց Տրդատ զօրեղ ուժով քաշում է պարանը, մօտեցնում իրան հակառակորդը և թրի մի ուժգին հարուածով միջակտուր անում Բասլաց թագաւորը-ամբարտաւան Գեղեհոնը և կոտորելով հալածում նորա յաղթուած զօրքը մինչև Սև-Հոնաց երկիրն, առնում պատանդներ և դառնում։

Շապուհ Բ-ը խրատելու համար Տրդատ թագաւորն 319—320-ին Հայոց և Աղուանից զօրքով արշաւում է Պարսից վերայ և գրաւում ամբողջ Ատրպատականը։ Եւ այն ինչ պատրաստում էր արշաւել դէպի խորին Պարսկաստան, Շապուհ ստիպուած դիմում է Կոստանդիանոս կայսեր միջնորդութեանը և խնդրում հաշտութիւն։ Տրդատ յարգելով Կոստանդիանոսի միջնորդութիւնը, կատարում է հաշտութիւնը, թողում իւր զօրաց մի մասը Թաւրիզում և դառնում։

ԺԵ. ԳԼ.

Գրիգորիս կաթուղիկոս Աղուանից.—Գրիգորիսի քարոզութիւնն և նահատակութիւնն.—Տ. Մատթէոս Ա.—Սանեսան թագաւորի արշաւանքն, յաղթուիլն և սպանուիլն:

—oo—

Վախճանում է ս. Լուսաւորչից ձեռնադրուած Աղուանից կաթուղիկոսն. այս պատճառաւ «խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս 'ի կաթուղիկոսութիւն իւրեանց. զի Ուռնայր արքայն մեր խնդրեաց 'ի սրբոյն Գրիգորէ (Լուսաւորչէ) Նորին ձեռնադրութեամբ լինել եպիսկոպոս աշխարհին իւրոյ, որ և այսու կանոնաւ կացին աշխարհն Հայոց և Աղուանից համակամ եղբայրութեամբ և անքակ ուխտիւ մինչև ցայսօր» (Կաղ. Ա. Հատ. Թ. Գլ.):

3 Ս. Լուսաւորչի թոռն, ս. Վրդանիսի որդի Գրիգորիսն [1]) ձեռնադրուելով 340-ին կաթուղիկոս Աղուանից և Վրաց գնում է իւր վիճակն: Հայրապետիս մասին գրած է Կաղանկատուացին, Ա. Հատ. ԺԴ. Գլ. 'ի միջի այլոց, «Իւր վերայ փայլեցնում էր իւր պապ ս. Գրիգոր Լուսաւորչի երկու բարձր և գերազանց շնորհքները—քահանայապետութեան պատիւը և աթոռը և մարտիրոսութեան ամենապատիկ բարձր պսակը: Որովհետև Գրիգորիս պատանեկութեան հասակում ձեռնադրուելով Վրաց և Աղուանից երկիրների համար եպիսկոպոս, գնալով լուսաւո-

[1]) Մխիթար Գօշն գրած է. «Ա. Սուրբն Չուփխաղիշոյ, Բ. Մատթէ, Գ. Սահակ. Դ. Կարէն. Ե. Պանտ. Զ. Ղազար. Սա շինեաց դՂազարապատ գտեալ 'ի Բեղամէջս և զոր եկեղեցին Պանդալէովնի և շինէ ահաւոր տեսլեամբ: Եւ 'ի Սրբոյն Եղիշայէ մինչև ցՍուրբն Գրիգոր ամք Յ(300). և ապա խնդրեցին Աղուանք 'ի Հայոց կաթուղիկոս զսուրբն Գրիգորիս 'ի ԵԺ (15) ամի (հնգետասան ամաց) ձեռնադրեալ 'ի հայրապետութիւն»:

րում էր երկու աշխարհները ևս, հաստատում էր վարուկ քրիստոնէական հաւատով, շինում էր եկեղեցիներ կանոնաւոր կերպով քաղաքների համար և ձեռնադրում երէցներ...: Եւ վառուած առաքելական ուղղութեան բարի նախանձով կատարում էր մարմնացեալ Աստուածորդւոյն հրամանը, շրջելով ամեն հեթանոսաց մէջ մկրտում էր յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

Սուրբն Գրիգորիս, իւր խնամոց յանձնուած բանաւոր հօտը ամեն հոգևոր պէտքերով մխիթարելուց և գործերը կարգադրելուց վերջն, անցնում է Դարբանդի Դռնից Մազքթաց երկիրն, մտնում Սանէսան թագաւորի ապարանն և քարոզում անճառելի Ս. Երրորդութիւնը, Փրկչի մարմնանալը և փրկագործութիւնը և Հոգւոյն Սրբոյ գալուստը և այլն: Սկզբում սիրով ընդունում են Քրիստոնէական հաւատը, բայց յետոյ ասում են, «Հայոց թագաւորի կեղծաւորութիւնն է այդ, որ արգիլէ զմեզ Հայաստանի աւարառութիւնից»: Ցով. Կաթ. եր. 56 ասում է թէ Սանատրուկ ինքնակոչ և ապստամբ թագաւորի հրամանաւ նահատակած է սուրբն Գրիգորիս:

Յետոյ բռնում են Գրիգորիս հայրապետը, կապում մի ամեհի ձիու ագուից և արձակում Վատնեան դաշտում և նահատակում [1]): Աշակերտներն վերցնում են ս. Գրիգորիսի մարմինը և տանում Ամարաս և ամփոփում այն եկեղեցում, որը հիմնարկած էր ս. Լուսաւորիչն, որին յաջորդում է Տէր Մատ- 4
թէոս Ա. [2]):

---

[1]) Նահատակութեան տեղը տես «Աղ. երկ. և Դր.» եր. 105—107. իսկ Ամարասի մասին՝ «Արցախ» եր. 113—115:

[2]) Կաղանկատուացին դասաւորած է այսպէս. Սուրբ Եղիշայ... եկն լուսաւորիչ երից աշխարհացս Չօրա, Լփնաց և Աղուանից: Ս. մանուկն Գրիգորիս: Սուրբն Չուփհաղիշու: Տէր Մատթէոս: Կիրակոս Մատթէ: Գօշ-Մխիթար՝ Ս. Չուփխաղիշոյ, Բ. Մատթէ:

ԺԶ. ԳԼ.

Սանէսանի որդւոց և ժողովրդականաց Քրիստոսի հաւատալն և նահատակուԹիւնն.—Սանէսանի արշաւանքն և սպանուիլն։

Ապարդիւն չեն մնում ս. Գրիգորիսի հոգեբուղխ քարոզուԹիւնն, սերմած Ս. Աւետարանի սերմերն և իւր Թափած արիւնն։ Սանէսանայ երեք որդիքն Մովսէս, Դանիէլ և Եղիա և միանգամայն 3870 անձինք հաւատում են Քրիստոսին, մկրտուում ս. Գրիգորիսի ձեռնով յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ապա իւրեանց հոգևոր ծնողի նահատակուելուց յետոյ միասին գալիս են Արցախ և բարձրանալով Դիզափայտ բարձր սարի կատարն և ճգնում այն տեղ։

Պարսից Թագաւորի դրդմամբ 343—344 Սանէսան Թագաւորն հաւաքում է Սև-Հոնաց ցեղերը (քանզի լսելով ահարկու Տրդատի մահը) աւելի համարձակ նախ արշաւում է Արցախ և Դիզափայտում [1]) կոտորել տալիս այն 3870 նորահաւատ ժողովրդականները, որք հաւատացին Քրիստոսին ս. Գրիգորիսի քարոզուԹեամբ և ապա անձամբ խողխողում իւր երեք որդիքը նոյն Թուականի օգոստոս 9-ին։ Յետոյ հասնում են Հայոց նախարարներն իւրեանց զօրքով և Ուռնայր իւր զօրքով, սպանուում է Սանեսան և բնաջինջ է լինում իւր զօրքն։

---

[1]) «Արցախ» եր. 422։ Սարիս վերայ Աղուանից Վաչական Գ. շինած է եղել մի նշանաւոր վանք 'ի պատիւ նահատակելոց. այժմ մի մատուռ է։

ԺԷ. ԳԼ.

Քաղաքական փոփոխուԹիւն.—Պարսից զօրանալն.—Ուրացեալ Մեհրուժանն գործիք.—Ձիրաւ դաշտի պատերազմն.—Պարսից յաղԹուիլն.—Ուռնայր Թագաւորի վէրքն և մահն։

Սասանեան պետուԹիւնն գնալով գնում է և զօրանում. իսկ Հայոց և Աղուանից տէրուԹիւններն իջնելով իջնում են և տկարանալով տկարանում։ Վախճանում է ահարկուն Տրդատ, սպանուում է Յունաց կայսր չար Յուլիանոսն, յաղԹող են հանդիսանում Պարսիկներն. դժոխքից աւելի է բորբոքում Զրադաշտական կրակն, որին ենԹարկուում է այնուհետև Հայոց ԹագաւորուԹիւնն, միմեանց ետևից փոփոխուում են Պարսիկների խաղալիք եղած հայ աԹոռակալներ—343—388 Փ. Թուականն վախճանում և գահընկեց են լինում Խոսրով Բ. Տիրան Բ. Արշակ Բ. և Պապ Հայոց Արշակունի Թագաւորներն։ Ճապուհ Բ.-ի գործիք է դառնում Ուրացեալ Մեհրուժան, ենԹարկուում է աւերմանց Հայաստան և Աղուանք. տեղի է ունենում Ձիրաւ դաշտի պատերազմն. բարձրանում է Նպատ սարի գլուխն Մեծն Ներսէս, աղօԹում բազկատարած Մովսէսի պէս, որ կործանուի Նոր Ամաղէկն. միախմբուում է հայ, յոյն և Աղուան զօրաբանակն և ճակատում Պարսից զօրաց դէմ։ Սաստկանում է պատերազմն. յաղԹուում է Պարսից բանակն, սպանուում Լեկաց Ճէքիր Թագաւորն, լցուում է դաշտն Պարսիկ դիակներով, հրացեալ շամփրով պսակուում Ուրացեալն Մեհրուժան. բայց մահացու վէրք է ստանում բարեպաշտ Ուռնայր Թագաւորն Աղուանից և վախճանում։

Աղուանից համար Թագաւորում է Վաչական Բ. Ուռնայրի տեղ. բաժանուում է Հայաստան Յունաց և Պարսից մէջ և խպառ տկարանում է Հայոց Արշակունի ԹագաւորուԹիւնն։

Պարսից ներգութեամբ միմեանց ետեւից թագաւորում են և վախճանում (թերևս սրտի նեղութիւնից) Վաչական Բ., Մրհաւան, Սատոյ և Ասայ Աղուանից թագաւորներն առանց թողնելու յիշատակաց արժանի գործ, նոյն և կաթուղիկոսներն, որք են

5 Տէր Սահակ Ա.

6 Տէր Մովսէս Ա.

7 Տէր Պանդ.

8 Տէր Ղազար.

9 Տէր Զաքարիա Ա.

10 Տէր Դաւիթ Ա. [1]։

ԺԸ. ԳԼ.

Հայոց և Աղուանից ճակատագիրն.—Սրտաճմլիկ տեսարան.—Յաջորդութիւններ.—Հայկական նշանագիր Հայոց, Վրաց և Աղուանից։

Տեսանք թէ ինչպէս կապուած էր Աղուանից ճակատագիրն Հայոց ճակատագրի հետ, կռապաշտութիւնն կռապաշտութեան հետ, բարձրանալն բարձրանալուն հետ, լուսաւորութիւնն լուսաւորութեան հետ, տէրութեան տկարանալն՝ տկարանալուն հետ, վերջապէս փառքն փառաց հետ, ուրախութիւնն ուրախութեան և տրտմութիւնն՝ տրտմութեան հետ։

Խիստ ողորմելի է լինում Աղուանից դրութիւնն և միանգամայն անտանելի. քանզի խախտւում է իւր լծեւ ու Թիկունք Հայոց թագաւորութիւնն. ջլատւում է Հայոց միացեալ ուժն. անտանելի բռնութիւններ են գործ դնում պարսիկներն Հա-

[1] Մխիթ. Գ. «Այսոքիկ են, որք 'ի Չոլ հայրապետք նստան Զաքարիա, Դաւիթ, Սուրբն Յոհան, Երեմիա»։

յաստանում և Աղուանքում. ժողովուրդն դրայի լինելով օձերի բներին—հիւսիսային ցեղերին—որք յաճախակի արշաւելով աւերում, քանդում, կողոպտում, կոտորում և աւարում էին երկիրը, ոչ մի տեղից օգնութիւն չկար։

Այդ սրտաճմլիկ և անվերջ տեսարանը տեսնող Աղուանից կաթուղիկոսներն և թագաւորներն, անկարող լինելով տանել և ոչ փրկութեան ճար հայթայթել, տեսանք թէ ինչպէս վախճանում էին միմեանց ետեւից, աւելի լաւ է ասել թափւում էին տերեւների նման։

Տէր Դաւիթ Ա-ն յաջորդում է Տէր Յոհան Ա. Ասայ թա- 11
գաւորին յաջորդում է Արսվաղէն կամ Եսվաղէն. Տէր Յոհա-
նին [1]) յաջորդում է Տէր Երեմիա Ա.։ 12

Ե. դարի Ա. քառորդում եթէ կայ մխիթարական մի նշոյլ, հայ տառերի գիւտն է այդ Ս. Մեսրովպ մեծ վարդապետի ջանքով։ Թարգմանւում է Ս. Գիրքն, բացւում են դպրոցներ, հետզհետէ ծաղկում են ուսումն, գրականութիւնն, հայերէն լեզուն և յաջող թարգմանութիւններ։

Այս շնորհքներից անմասն չեն մնում Վրացիք և Աղուանցիք, այլ Ս. Մեսրովպ այդ աստուածատուր շնորհքից մասը և բաժին է հանում այդ երկու հարևան ազգերին և դաւանակից եկեղեցեաց, անձամբ իջնում է Վրաց Բագուր թագաւորին և Մովսէս կաթուղիկոսին մօտ, ստեղծում նոցա բարբառին յարմար նշանագրեր (ա, բ, գ, և այլն) որոշում է Ջաղա անուամն թարգման Վրաց լեզուի համար, հաւաքում է աշակերտաց բազմութիւն և յանձնում Ջաղայի տեսչութեան։ Ապա գալիս է Աղուանից Արսվաղէն թագաւորին և Երեմիա կաթուղիկոսին մօտ, ուր «Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր

[1] Կիր. եր. 113, Տէր Յոհան, որ և Հոնացն եղեւ եպիսկոպոս: Կ. վ. Շ. աւելացնում է. հայրապետական շնորհիւ. Շահխաթ, որ էր եպիսկոպոս Հոնաց։

թարգման.... ստեղծ զնշանագիրս [1]) կոկորդախօս, աղխազուրս Գարգարացւոց լեզուին։ Եւ վերակացու թողեալ զաշակերտ իւր զՅովնաթան, միանգամայն և քահանայս կացուցեալ դրան արքունի, ինքն դառնայ 'ի Հայս» (Խոր. Գ. գիրք ԾԳ. գլ.)։

ԺԹ. ԳԼ.

Ս. Մեսրովպի առաքելութիւնն։

Թէպէտ Աղուանքում կային կաթուղիկոս, թագաւոր, եպիսկոպոսներ, վարդապետներ և քահանաներ, այսու ամենայնիւ հրապաշտ մոգերն բռնութեամբ յաճախակի թուլացնում էին Աղուանից երկրի մի քանի ցեղերի հաւատը քրիստոնէական կրօնից, քանզի սոյն երկրի ամեն ցեղերն, որ Ս. Լուսաւորչի հոգեշունչ քարոզութիւններով հաւատացած էին Քրիստոսի և յանուն Ամենասուրբ երրորդութեան մկրտուած, պինդ գրկած էին Քրիստոնէութիւնը, իսկ մի քանիսներն արդէն խմորուած էին մոգերի քացախած խմորներով։ Սուրբն Մեսրովպ, նկատելով հրապաշտ մոգերի այս ձեռնարկութիւնը, աճապարում է առնել այս վտանգի առաջը, արմատախիլ անել կենաց խօսքի տապարով հրապաշտութիւնը և վերահաստատել քրիստոնէական կրօնը նոյն ցեղերի մէջ։ Այս նպատակը իրագործելու համար առնում է իւր հետ մի քանիսը իւր բանիբուն աշակերտներից. առնում է և Կենաց Փայտի մասը կրող խաչը, հասնում

[1]) Զարմանալին այն է որ հակառակ մեր այնքան ջանից և հետազօտութեանց անկարելի եղաւ գտնել այս գրականութեան հետքը։ Գտանք միայն մի քանի տառեր նման Մեսրովպեան տառերին. տես «Աղ. երկ. և Դր.» եր. 119։

Գիս, անդադար քարոզելով վերահաստատում եկեղեցուն հաւատը։ Այստեղ թողում եմ, որ ինքն Կաղանկատուացին գրէ (Ա. Հատ. ԻԷ. գլ.) «Եւ նորոգեալ զեկեղեցւոյ հաւատս հաստատէր. և ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց և յԱղուանս և 'ի Լփինս, և 'ի Կասպս և 'ի դուռն Չողայ և յայլ ազգի ազգիսն, զորս գերութեամբն էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ և նստուցեալ զմեծ լերամբն Կովկասու զԳդուարսն և զԿամիճիկ Հեփթաղսն դարձուցեալ 'ի հաւատս՝ զկարգ աստուածպաշտութեան ուսուցանէր, զոր 'ի վաղնջուց ուսեալ էին և մոռացեալ, և բոլորովին քարոզ և առաքեալ խուժադուժ սարոտանեացն լինելով ըստ նոցին բարբառոյ դպրութեան առնէր զնոսա ծանօթս։ Եւ անտի դարձեալ 'ի մօրսն երթեալ բնակէր, զօղեալ 'ի սպառնալեաց դժնդակ իշխանացն։ Եւ անդ յանտառսն ծածկեալ՝ օրըստօրէ հաստատէր զեկեղեցիսն Աստուծոյ։ Անդէն ոգի մոլորութեան գրգռէր զմիտս գազանացեալ բռնակալացն՝ զայրագնեալ նոցա փոյթ յանձին կալեալ սպանանել զնոսա։ Իսկ երանելոյն Մաշտոցի 'ի Հոգւոյն Սրբոյ ազդեալ փութացեալ փորէր փոս մի ըստ պիտոյից գործոյն և զաստուածային առեալ գանձն, որ է Խաչն Տէրունական, եդեալ 'ի տապանի ծածկէր 'ի գետնափոր կայանի» ('ի Գիս)։

Այնուհետև Ս. Մեսրովպ գնում է Արցախի Գարդման գաւառն և տեղւոյն Խուրս իշխանի ձեռնտուութեամբ ոչնչացնում հեթանոսական աղանդը, հաստատում կրթարաններ, թողնում իւր աշակերտներից վերակացուներ և ինքն դառնում Վաղարշապատ։

Ի. ԳԼ.

Ս. Մեսրովպի աշակերտներն.—Ռոսմոսոքեան թագաւորի արշաւանքն:—Թէոփիլոսեան կամ Թոբելեան զօրագունդ.—Նահատակութիւն.—Կապուտ. կողոպուտ և սպանութիւն:

441-ին Ս. Մեսրովպի մահից յետոյ նորա աշակերտներն բաժանուում են երեք մասի. յորոց երկուսն քարոզում են Աղուանքում. իսկ երրորդ *մասնախումբն* գնում է Երուսաղէմ մի վարդապետ բերելու: Վերադարձին Զատկի ճրագալուծի երեկոյին հասնում են Արցախի Ըռստակ գաւառի (այժմեան Հաթերք գիւղի մօտ) Թարթառ գետի հովտում եղած Վիժան բլուրն, որպէս զի անտառումն կատարեն Զատիկը:

Այդ իսկ օրերում Ռոսմոսոքեան թագաւորն իւր զօրքով և Թոփելեան[1]) գնդովն և Սև-Հոնաց զօրաբանակաւ արշաւում է Աղուանից երկրի վերայ, անցնում Կուր գետի աջ կողմն, բանակը դնում Խաղխաղ քաղաքի[2]) մօտ Ուտեաց դաշտի վերայ: Այս բաժանում զօրքը երեք գնդի և հրամայում երեք զօրագնդապետներին ասպատակել Աղուանից, Հայոց և Վրաց երկիրները:

Երկրորդ զօրագունդն Թէոփիլոս գնդապետի առաջնորդութեամբ նոյն իսկ Զատկի երեկոյին Թարթառի հովտումն պատահում է Երուսաղէմից դարձող Մեսրովպեան աշակերտաց խմբին, որ աճապարանօք հոգում ամփոփում է երկու արծաթեայ մասանց կնքուած արկղիկները:

[1]) Ռոսմոսոքեան և Թոփելեան անուանց մասին տես Եզեկ. մարգարէութեան ԼԸ և ԼԹ. Գլ.:

[2]) «Արցախ» եր. 57—59 և 420—421:

Աշակերտաց խմբում լինում է և Աթանաս վարդապետն մի քանի քահանաներով և Ուտեաց նահանգի Բագնաց գիւղացի իշխանազն տիկին Թագուհին, որ գնացած է լինում Երուսաղէմ ուխտի: Թէոփիլոսի հրամանաւ նահատակուում են Աթանաս վարդապետն և մի քանիսն. բանտարկուում են մնացեալներն. Վիժան բլրի վերայ առանձնապէս նահատակուում է և Թագուհի տիկինն, մի աստեղաձև լոյս մինչև առաւօտ համատարած փայլում է բլրի շուրջն, վասն որոյ Վիժան անունն տեղի է տալիս Աստղաբլուր[1]) անուան: Հաւատում և մկրտուում են Թէոփիլոս գնդապետն, իւր երկու որդիքն Մովսէս և Անեբողոգես և ամբողջ զօրագունդն: Արձակուում են կալանաւորուած ողջ քրիստոնեաներն և իւրաքանչիւր տիրոջ են թողնուում կողոպտած իրերն և գնդապետի հրամանաւ դառնում է զօրագունդն Կուր գետի Զոմաքտակ կամրջի մօտ, ուր քրիստոնէական հաւատքի վերայ հաստատ մնալով Ռոսմոսոք. թագաւորի հրամանաւ նահատակուում են Թէոփիլոս, իւր երկու որդիք, քահանայք և շատ զինուորներ:

Յետոյ Ռոսմոսոքեան թագաւորի հրամանաւ գերում, կողոպտում և աւերում են Աղուանից և Վրաց գաւառները և հեռանում:

ԻԱ. ԳԼ.

Արշակունի թագաւորութիւններ.—Սասանեանների ոխակալութիւնն Արշակունի պետութեանց դէմ.—Պարսից պատերազմն Քուշանաց-Սպիտակ Հոնաց-Հեփթաղների դէմ.—Հայոց, Աղուանից և Վրաց Քրիստոնէութիւնը ջնջելու չար նպատակ.—Աստուածպաշտութեան ազդեցութիւնն նիւթապաշտութեան վերայ:

Քանի որ Հայաստանում, Պարսկաստանում, Աղուանքում,

[1]) Տես «Արցախ» եր. 201 և 426—427:

Վրաստանում [1]) Սև-Հոնաց կողմում և Պարթևաց երկրում թագաւորում էին Արշակունի կամ Պարթևացն թագաւորներ, պաշտպանում էին մէկզմէկի և զօրանում միմեանց օգնելով։

Սասանեան Արտաշիր հետապնդելով սպանեց Պարսկաստանի Արշակունի թագաւորութիւնը, հետապնդեց սպանել և Հայոց Արշակունի թագաւորութիւնը, բայց չյաջողեցաւ այդ իրան։ Արտաշրի հետ չմեռաւ ամբողջ Արշակունի թագաւորութեանց դէմ տածած այդ ոխերիմ թշնամութիւնն, այլ մնաց աւանդական ժառանգութիւն նորա յաջորդների մէջ և հետզհետէ աւելի և աւելի զօրացաւ այդ նպատակի կատարումն, մանաւանդ Յունաց կայսրութեան տկարանալովն։ Քանի որ Սասանեան թագաւորներն տեսնում էին գլխենք շրջապատուած Արշակունի թագաւորութիւններով, հեռատեսում էին անապահով կեանք Սասանեան թագաւորութեան համար և մինչև անգամ մահ։ Այս թագաւորութեանց մէջ զօրեղագոյնն էր Հայաստանինն, որը սպանելու համար գործ դրին ամեն անարգ միջոց, ջանք հնարք և գազանաբարոյ բռնութիւն և սպանեցին Վռամի օրով Փրկչական 432-ին։ Արդէն սպանուած էր Վրաստանի Արշակունի թագաւորութիւնն 265-ին։ Հիւանդագին վիճակի մէջ է Աղուանից Արշակունի թագաւորութիւնն, Դարբանդեան ամրագոյն պատուարաւ արգելուած էր Սև-Հոնաց Արշակունի թագաւորութիւնն։ Հետևապէս միայն մնացած էր բուն Պարթևական թագաւորութիւնն — Արշակունի թագաւորութեանց արմատն որ տակաւին պահում էր իւր առոյգ և զօրեղ ոյժը Բագտրիայում։ Յազկերտ Բ. հետապնդում է սպանել և Պարթևաց կամ Քուշանաց թագաւորութիւնը։

Այս պատճառաւ 442-ին Յազկերտ Բ. գումարում է Բահլ-դրան արևելեան կողմում Հայոց, Աղուանից և Վրաց և Լփնաց

[1]) Արշակունի կամ Փառնաւազեան կոչուած Վրաստանի վրայ իշխող թագաւորութիւնն, որ ծնած է 147-ին Քրիստոսից առաջ և մեռած 265 ին Փրկչական։

և Ծովդէից կիրթ զօրքերը—այդ ազգերի ներքին ոյժերը—«որք էին ամենեքեան հաւատացեալք 'ի մի կաթուղիկէ առաքելական եկեղեցի» (Եղիշ. եր. 15)։ Այդտեղ բանակելով 442—449 հաւաքական ուժով պատերազմում է կործանել Հեփթաղների—Սպիտակ-Հոնաց կամ Քուշանաց և Պարթևաց թագաւորութիւնները։ Երկար ժամանակ անյաղթելի են մնում վերջնոցս զօրքերն։ Բարկութիւնից կատաղում է Յազկերտ. ապա մոգերի խորհրդով բռնանում է պաշտել տալ արեգակը և կրակը իւր բանակում գտնուած Քրիստոնեաներին, որպէս զի այնուհետև հեշտ լինի նոյն տարրերը պաշտել տալ անուժ մնացած Հայոց, Աղուանից, Վրաց, Լփնաց և Ծովդէից ազգերին, բայց հանդիպեց մեծ դժուարութեան։ Քանզի գումարուած քրիստոնեայ եղբարց հաւատն Քուշանաց բերդերից աւելի ամրագոյն և անառիկ էին, վասն որոյ առ ժամն թողեց թագաւորն իւր չար խորհուրդը վարագուրած։

ԻԲ. ԳԼ.

Գահակալութիւն Վաչէ Բ.-ի.—Կրակի մեծ պատերազմն Աւետարանի դէմ.—Աստուածպաշտութեան զօրեղ ուժն մարմնաւոր զէնքերի դիմաց։

Փրկչական 444-ին յաջորդում է իւր հայր Արսվաղէն թագաւորի տեղ Վաչէ Բ. Աղուանից թագաւորն [1])։ Վաչէ թագաւորս, որ սկզբում իւր նախորդաց պէս նստում էր Դարբանդում և երբեմն Չողայում, հիմնարկում է Պարտաւ քաղաքը Ուտեաց նահանգի Ուտի-Առանձնակ գաւառի ստորին մա-

[1]) Գիւտ եպիսկոպոսն (յետոյ կաթուղիկոս գուցէ) առ Վաչէ թագաւորս՝ իւր գրած նամակում ասում է. «առ նախնեօքն ձերովք հանուովք և հարքն քով երանելեաւ» (Կաղան. Ա. Հատ. ԺԱ. գլ.)։

սում Թարթար գետի ձախ ափին մօտ. կրկնակի ամուր պարիսպներով շրջապատում է և Զողայից Պարտաւ [1]) փոխադրում իւր աթոռը և պալատը։

Քուշաններին և Պարթևներին յաղթելուց յետոյ Յազկերտ աստուած է կարծում զինքը, վասնորոյ գործ է դնում ամեն բռնութիւն և անխիղճ միջոցներ, հրապաշտ դարձնելու Հայերը և Աղուանցիները։ Ապարդիւն է մնում քրիստոնեայ Յունաց կողմից սպասուած զինուորական օժանդակութիւնն, Պարսից մոգերն Հայաստանում և Աղուանքում տեղ տեղ բռնի շինում են ատրուշաններ—կրակարաններ—և մահ սպառնալով կրակապաշտ անում շատերը։ Այդ ժամանակ խիստ խղճալի է լինում Աղուանից դրութիւնն, քանզի բռնութեամբ հաւատափոխ են անում Վաչէ թագաւորը, փախչում են լեռներն Աղուանից նախարարներն և իշխաններն, յուսահատում է քահանայ և ժողովուրդ. քանդւում են եկեղեցիներն և տաճարներն, որոց տեղերում շինում կրակատուներ և գործում են անլուր չարիքներ մոգերն և պարսիկ զինուորներն։ Բաց յայցանէ Սեբուխտ զօրավարն Պարսից ահռելի բանակով մտնում է Աղուանից երկրի սրտին մէջ՝ ուրացող Վասակ Սիւնու թելադրութեամբ։

Հասնում է գոյժս քաջն Վարդան Մամիկոնեանին 450 թուին, որ իւր զօրաբաժնով դիմաւորում է Խաղխաղ քաղաքն [2]) մօտ Սեբուխտի բանակին. միանում է Հայկական բանակին և Աղուանից ոգևորեալ զօրքն (գալստեամբ Վարդանայ). ահագին ճայթմամբ բաղխւում են երկու բանակներն, յաղթւում և ցիրուցան է լինում Պարսից զօրքն, կոտորւում են մոգերն, կործանւում են ատրուշաններն, լեռներից դառնում են փախած

[1]) «Պարտաւ շինեցաւ 'ի Վաչէէ արքայէ 452 (թուին)» (Մ. Այրիվան. եր. 47) Պարտաւի մասին տես «Արցախ» եր. 29—30։ Աւելորդ է գրել թէ իւր ժամանակին նշանաւոր վաճառաշահ քաղաք եղած է Պարտաւն։

[2]) Տես Խաղխաղի մասին «Արցախ» եր. 57—59 և 420—421։

նախարարներն և իշխաններն, վերստին շինւում են եկեղեցիներն և տաճարներն և կրկին շարունակւում է ազատ աստուածպաշտութիւնն Աղուանից ժողովրդականաց և զինուորականաց մէջ։ Ապա Քաջն Վարդան գրաւում է Դարբանդի Պահակը, կոտորում պահակապահ Պարսիկ զինուորները, Աղուանից Վահան թագաւորազնի [1]) ձեռնով կապում է Սև-Հոնաց ցեղերի հետ միաբանութեան ուխտ և երդման հաւատարմութիւն. յանձնում է Վահան թագաւորազնին Դարբանդի Պահակին պահպանութիւնը և ինքն Քաջն Վարդան դառնում է Արարատեան նահանգն։

ԻԳ. ԳԼ.

Յազկերտ Բ-ի մահն.—Գահակալութեան պատճառաւ երկպառակութիւն.—Սպանւում է Յազկերտ Բ-ի Որմիզդ որդին և թագաւորում է Պերոզ.—Վաչէ Բ-ի պատերազմն Պերոզի դէմ և Պերոզի պատերազմն Վաչէի դէմ.—Վաչէ Բ առնելով իւր 1000 երդը առանձնանում է.—Գիւտ եպիսկոպոսի գրած 2 մխիթարական նամակներ։

457-ին մեռնում է Յազկերտ Բ. գահակալութեան պատճառաւ ծագում է նորա երկու որդւոց մէջ արիւնահեղ կռիւ, խռովութիւն և երկպառակութիւն. վերջապէս սպանւում է մեծ որդի Որմիզդն և գահակալւում է փոքր որդի Պերոզն։

Վաչէ Բ. յարմար ժամանակ է համարում ոչ միայն թօթափել մոգակրօնութիւնը, այլև Պարսից լուծը և ազատօրէն պաշտել Քրիստոնէութիւնը. վերջապէս վճռում է. «Մեռնիլ պատերազմաւ քան թագաւորել ուրացութեամբ»։ Ահա թէ ինչ է գրում Վաչէի և Պերոզի մասին ժամանակակից Եղիշէն, եր. 387—390. «Պերոզ, զի թէպէտ և Արեաց աշխար-

[1]) Թէ Աղուանից ո՞ր թագաւորի որդին է Վահանս, ստուգիւ չգիտենք. ենթադրում ենք որ Վաչէ Բ-ի եղբայրն եղած լինի։

հին առնէր մեծապէս խաղաղութիւն, սակայն Աղուանից արքայն ոչ կամէր նուաճիլ անդրէն ի ծառայութիւն. այլ խրամատեաց զՊահակն Ճորայ և անցոյց յայս կոյս զզօրսն Մազկթաց. միաբանեաց զմետասան թագաւորս զլեռնորդեայսն, և ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին և բազում վնասս արար զօրացն արքունի։ Թէպէտ և երկիցս և երիցս եռուն հրովարտակ աղաչանաց, ոչ ինչ կարացին ածել զայրն ի հաւանութիւն, այլ գրով և պատգամաւ յանդիմանէր զնոսա վասն զուր աւերածին աշխարհին Հայոց։ Յիշեցուցանէր նոցա զմահ նախարարացն և զչարչարանս կապելոցն։ 'Ի վերայ անչափ սիրոյ և վաստակոց փոխանակ կեանս առնելոյ՝ զարև հատէք, ասէր։ Լաւ լիցի ինձ, ասէ, զնոցա չարչարանսն յանձն իմ առնուլ, քան թողուլ զքրիստոնէութիւնն։

Եւ իբրև տեսին, թէ ոչ բռնութեամբ և ոչ սիրով կարացին ածել 'ի հաւանութիւն, զանձս սաստիկս եռուն տանել յաշխարհն Խայլանդրաց, բացին զդրունսն Ալանաց և հանին զունդ բազում 'ի Հոնաց և կռուեցան տարի մի ընդ Աղուանից արքային։ Թէպէտ և թօթափեցան և ցրուեցան զօրքն իւր 'ի նմանէ, սակայն զնա ոչ կարացին հնազանդել, այլ և հարուածք ևս մեծամեծք հասին ի վերայ նոցա, էր՝ որ կռուով և էր՝ որ ախտիւ չարչարանօք։ Եւ յայնչափ ժամանակաց ընդ երկարել պաշարմանն, մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք 'ի նմանէ երկմտեալ բաժանեցաւ։

Յղեաց առ նա դարձեալ թագաւորն Պարսից. Զքոյրդ իմ, ասէ, և զքեռորդիդ 'ի բաց տուր ածել, զի 'ի բնէ մոգք էին և դու քրիստոնեայ արարեր և աշխարհդ քեզ լիցի։ Իսկ սքանչելի այրն ոչ 'ի տէրութեանն վերայ կռուէր, այլ յաստուածպաշտութեանն։ Զմայրն և զկինն ետ տանել, և զաշխարհն բովանդակ 'ի բաց եթող. և ինքն զաւետարանն առ և յաշխարհէն 'ի բաց կամէր գնալ։

Զայս իբրև լուաւ թագաւորն (Պարսից) կարի զեղջ և

ապաշաւ անկանէր ի միտս նորա, և զամենայն վնասս իւրացն զհարբն իւրով արկանէր։ Անսուտ երդումն կնքէր և տայր տանել առ նա, եթէ յաշխարհէդ միայն մի գնար. և զինչ ասես, առնեմ։ Խնդրեաց զմանկութեան սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա 'ի տղայութեանն հազար երդ, առ զայն 'ի թագաւորէն և նստաւ 'ի նմա միայնակեցօք հանդերձ [1]։ Եւ այնպէս հանապազորդեաց զինքն յաստուածային պաշտամանն, զի և չյիշէր ամենևին՝ թէ և թագաւոր լեալ իցէ յառաջ»։

ԻԴ. ԳԼ.

Թափուր միջոց.—Մարում է Զրադաշտական կրակն Աւետարանի զօրութիւնից.—Ջուփհաղիչոյ կաթուղիկոս Աղուանից.—Վաչական Գ.-ի գահակալութիւնն և ժողով և միւս գործերն։

Վաչէ Բ.-ի թագաւորութիւնից հրաժարվելուց յետոյ՝ թափուր է մնում թագաւորական գահն 30 տարի։

Քրիստոսի ս. Աւետարանի և կենսատու Խաչի զօրութիւնից մարում է Զրադաշտական կրակն. իւր պաշտօնեաններն ակամայ իջնում են աստուածացեալ գոռոզութիւնից տկար մարդկութեան սահմանն և զիրենք տեսնում հասարակ մահկանացուաց շարքում։ Հեփթաղներից սպանւում է չար Պերոզ իւր որդիքներով. ջնջւում է իւր զօրքն, թագաւորում է Պարսից վերայ Վաղարշ և տալիս կատարեալ ազատութիւն Քրիստոնէից։

[1] Աւանդութեամբ ասում են որ Վաչէ Բ. շինել տուած է Թառնագիւտի վանքը և ցմահ ճգնած նորա մէջ։ Վանքի մասին տես «Արցախ» եր. 28 և 414։

Աղուանից ժողովրդեան ընտրութեամբ և իշխանաց խնդրա-
նօք՝ Հայոց Բաբգէն կաթուղիկոսից ձեռնադրուում է Տէր Ձուփ-
13 հաղիշէ—վախճանեալ Յով. Մանդակունի հայրապետի աշա-
կերտներից մին—Աղուանից համար կաթուղիկոս (եկեղ. պատ.
Մուրատ. եր. 254) [1]):

Աղուանից նախարարներն 487—488-ին Պարսից Վաղարշ թագաւորի ձեռնով թագաւորեցնում են Աղուանից համար Վաչական Գ., որ Վաչէ Բ.-ի Յազկերտ եղբօր որդին էր: Վաչականիս յատկութեանց մասին այսպէս է ասում Կաղանկատուացին, Ա. Հատ. ԺԷ. գլ. «Վաչական 'ի թագաւորական զարմէն քաջ արութեամբ, իմաստուն և վարժ խոհականութեամբ, բարձր և վայելուչ հասակաւ, որդի Յազկերտի՝ եղբօր Վաչէի Աղուանից արքայի, տարեալ թագաւորեցուցանէին 'ի ձեռն Վաղարշու արքային Պարսից»:

Վաչական Գ.-ս, որ նոյնպէս բռնութեամբ ենթարկուած էր մոգակրօնութեան, հեռացնում է իրենից այդ կրօնը և լինում խիկապէս բարի մարդ և բարի քրիստոնեայ:

Վաչական թագաւորս ձեռնարկում է նրբքին բարեկարգութեան, նոյնը սկսելով նախ իւր անձից իբրև գործնական օրինակ իւր հպատակ հասարակութեան: Իւր նախանձելի աստուածպաշտութեամբ և ընտիր վարք ու բարքով բերում է դէպի ճշմարիտ քրիստոնէութիւն այն նախարարները, որք զարշելի պաշտամունքներով և հեթանոսական վարք ու բարքով ապականած էին իւրեանց հոգիները:

Երկրորդ՝ դէպի Զրադաշտական կրօնի հակուածները հաստատում է ապաշխարութեամբ. մկրտել տալիս անկնունքները յորդորմամբ, և հաղորդել տալիս Ձուփհաղիշէ հայրապետի քարոզութեամբ:

[1]) Որովհետև Ձուփհաղիշէ կաթուղիկոսն ժամանակակից և գործակից է Վաչական Գ.-ին, վասնորոյ ուղղուում է այն հեղինակների սխալներն, որք առաջ էին դասում սորա անունը:

Երրորդ օր ըստ օրէ համոզելով ջերմացնում է հասարակութեան մէջ կատարեալ աստուածպաշտութեան սէրը, եկեղեցական պաշտամունքները և սրբոց յիշատակները կատարելը:

Դ. Ձուբհաղիշէ (կամ Ձուփհաղիշոյ) հայրապետի հետ միասին գումարում է եպիսկոպոսներ, վանականներ, երէցներ, նախարարներ և իշխաններ և մեծ ժողով անում Աղուէն հովաստն տեղում: Ժողովականաց համաձայնութեամբ խմբագրուում է ԻԱ (21) յօդուածներից բաղկացած կանոններ, քահանայից, սարկաւագաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, իշխանաց, վանօրէից, թագաւորազանց, նախարարաց, քաղաքականաց, շինականաց, աղքատաց, և այլն, և այլն պարտականութեանց և յարաբերութեանց համար որ առ Աստուած, առ միմեանս, առ բարձրագոյնս և առ աղքատս ողորմածութեամբ: Այնուհետև ստորագրում են ամենքն և վաւերացնում թագաւորական կնքով: (Պատճէնը տես Կաղանկատուացի Ա. Հատ. ԻԱ. գլ.):

Ե. Վերադարձուցանում է թագաւորս իւրաքանչիւր նախարարի և իշխանի և վանքի սեփհական իրաւունքները, զորս յափշտակած էր չար Պերոզ:

Զ. Սահմանում է պատիժ այն արանց և կանանց համար, որք համարձակին չինել բագին, հնարել կախարդութիւն կամ նուիրել պաշտումն որևէ դիւցազնի, նմանապէս և այն ամեն անձանց համար, որք ըստ օրինի չեն պահել քրիստոնէական պաշտամանց համար սահմանեալ կարգերը և կանոնները:

Է. Ձուփհաղիշէ հայրապետի ձեռնով կարգել է տալիս բոլոր թեմերի վերայ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, սարկաւագներ, մանաւանդ հսկիչներ է կարգել տալիս Կամբէճ կամ Կապեճան և Աղուէ գաւառների վերայ, որոց մէջ բուն դրած էին կանխաւ մոգեր, դիւթեր և կախարդներ: Արձակում է սաստիկ հրաման և սպառնալիք չարաչար պատժել այնպիսիները, եթէ իսպառ չեն հեռանալ նոյն չարութիւններից: Ձատերը, որ չար Յազկերտի և Պերոզի բռնու-

թեանց ժամանակ մնացած էին անկնունք, մկրտել տալով սովորցնել է տալիս քրիստոնէական պաշտամունքները։

Ը. Թագաւորս՝ հայրապետի աջակցութեամբ բաց է անում դպրոցներ, ժողովել տալիս *կախարդաց, քրմաց, դիւթաց* և *մառնահարաց* երախաները և կրթել տալիս աստուածային ուսմամբ և քրիստոնէական վարուց դաստիարակութեամբ, որպէս զի լաւ տպաւորուի նոցա սրտերում քրիստոնէութիւնն։

Թ. Հետախուզել տալով գտնում է *մառնահարաց* աղանդի (Կաղան. Ա. Հատ. ԺԸ. գլ.) գլխաւորները և պատժում։ Վերջապէս յաջողում է արմատախիլ անել բոլոր աղանդները։

Ժ. Բարեպաշտ թագաւորս իւր ժողովրդոց, մանաւանդ հաւատը խախտեալ մասին՝ հաւատը, յոյսը և սէրը, ջերմեռանդութիւնը և աստուածպաշտութիւնը ամրապնդելու հետամտութեամբ՝ հետամուտ է լինում աջակցութեամբ Ձուփհաղիչէ կաթողիկոսին և մի քանի սրբակեաց եպիսկոպոսների և գտնում Ս. Եղիշ առաքեալի նշխարները և մեծ հանդիսով ամփոփում Ջրվշտիկ վանքում և գլուխը՝ Գիսոյ վանքում։ Գտնում է նաև Ս. Գրիգորիս կաթողիկոսի գերեզմանը Ամարասում. Ճըղբայ Ցուի բերդաքաղաքի մասունքները, Աստղաբլրի արծաթեայ տուփերը, Յակովկայ և Իրաւափառայ, Մամասէի և իւր ընկերների, Սանեսանայ որդւոց, են նշխարները և կատարել տալիս շքեղ հանդէսներ, որք մեծապէս ազդում են հասարակութեան սրտերին։

Այնուհետև Վաչական արքան շինել է տալիս տարւոյ օրերի թւով 365 վանք, եկեղեցի և մատուռ։ Դիւտականի փոքր տաճարն օծուած էր յանուն Պանդալեոնի, որի մէջ կաթողիկոսն, Վաչական թագաւորի և Ձուշանիկ թագուհու խնդրանօք՝ վերջնոյս նորածին երեխան մկրտելով՝ անուանում է Պանդալեոն, որի պատճառաւ պատրաստում է հանդիսականաց համար մեծ խնճոյք։

ԻԵ. ԳԼ.

Վաղարշապատի ժողովի մասին։

491-ին Հայոց Բաբգէն կաթողիկոսի հրաւիրմամբ ժողովւում են Ս. Էջմիածին Աղուանից Ձուփհաշիչէ և Վրաց Գաբրիէլ կաթողիկոսներն իւրեանց եպիսկոպոսներով և Հայոց ողջ եկեղեցականներն։

Ս. Էջմիածնի Մայր-Տաճարում ժողովն բացւում է Բաբգէն կաթողիկոսի նախագահութեամբ։

«Ի հանդիսի ժողովոյն նզովեն նախ զնեստորականսն և զամենայն համախոհս նոցին և զմոլորութիւնս. ընդորս և զեւտիքեանցն. և ընթերցեալ զհենոտիկոն Զենոնի կայսեր և հաւանեալ ընդ այն, ըստ նորին մտաց դատապարտեն զժողովն Քաղկեդոնի, համարեալ

Նախ թէ այն ժողով ընկալաւ զգիրս Մոպսուեստացւոյն և զշատագովս նորին։

Երկրորդ՝ թէ այն ժողով բաժանեալ իցէ զՔրիստոս յերկուս դէմս և յերկուս որդիս, ըստ մտաց Նեստորի, սահմանեդեալ 'ի վճիռս ժողովոյն յասելն. «Մեք Հայք և Հոռոմք, Վիրք և Աղուանք մի խոստովանութեամբ եմք հաստատեալ ճշմարիտ հաւատով 'ի լաւ անդր, զոր աւանդեցին մեզ Ս. Հարքն յերիս ժողովս, ոչ ընդունիմք զայսպիսի բանս հայհոյութեան, այլ նզովեմք միաբան զնմանիս նորա»։

Ժողովն ուշադրութեան առնելով նա և որ արդէն կանխաւ մերժած են Քաղկեդոնի ժողովը նոյն իսկ Յունաց երկու կայսրք-Զենոն և Անաստաս, հետևապէս նզովում են և ժողովականքս Քաղկեդոնի ժողովը։ (Պատ. Ժող. Աբէլ եպիս. եր. 76—78 և Կաղան. Բ. Հատ. ԽԷ. գլ.)։

ԻԶ. ԳԼ.

Աղուանից երկրի խաղաղութիւնն Վաչական թագաւորի և Ջուփհաղիչէ հայրապետի օրով.—Կաղանկատուացին ոչինչ գրած չէ սոցա մահուան մասին.—Ս. Օրբելեանի վկայութիւնն։

—∞—

Ոչ մի ժամանակ այնքան երկարատև խաղաղութիւն, փառաւոր շինութիւն, հիմնաւոր բարեկարգութիւն և ներքուստ ու արտաքուստ ապահովութիւն և հոգևոր ու մարմնաւոր խաղաղութիւն վայելած չէր Աղուանից երկիրն, որքան Վաչական թագաւորիս և Ջուփհաղիչէ հայրապետիս օրերում։ Նոյնպէս ոչ մի ժամանակ այնպէս արտաքսուած չէին եկամուտ մոլորութիւններն և աղանդաւորաց հեղձուցիչ որոմներն և ընդհակառակն ընդհանրապէս ծաւալուած աստուածպաշտութիւնն, հիմնաւորապէս արմատակալած Քրիստոնէութիւնն և աւելի ծաղկած վանքերն, եկեղեցիներն և ուսումնարաններն Աղուանից երկրում, ինչպէս այս թագաւորի և կաթուղիկոսի օրերում։

Սակայն ցաւալի է ասել որ Կաղանկատուացին, ոչ ինչ չասելով սոյն երկու նշանաւոր գործիչների մահուան մասին, բոլորովին լռում է։

Օրբելեան, Ա. Հատ. ԻԱ. Գլ. գրում է թագաւորիս մասին՝ թէ Պարսից թագաւորի Արլ-Արաս անուն որդին գալիս է Մեծ-Սիւնեաց նահանգի Երկրորդ-Երուսաղէմ կոչուած վանքն, որ մօտ է Երասխի Քարավազ անուանեալ տեղին, մնում Գիտ ճգնաւորի մօտ, հաւատում Քրիստոսին և մկրտուում և լինում կատարեալ աստուածապաշտ մարդ։ «Արլ-Արաս փեսայացուցին Վաչականայ Աղուանից արքային. և շինեցին բերդ յեզր գետոյն, զի անդ բնակեալ պահեսցէ զեզրսն։ Իսկ Արլ-Արաս և Վաչական խնդրեալ յիշխանէ (Մեծ) Սիւնեաց՝ սահման հատին վանիցն և ետուն հինգ գիւղ... Ապա մեռան 'ի Բարկուշատ թագաւորքն Արլ-Արաս և Վաչական»։ Վաչականիս գերեզմանն գտնուում է Ջրվշտիկ վանքի հիւսիսային կողմի Գ. մատրան մէջ, տես «Արցախ» եր. 235։ Մնում են անյայտ Ջուփհաղիչէի, Վաչէ Բ-ի և Վաչական Գ-իս մահուան տարեթիւերն։ Դարձեալ Օրբելեան, Ա. Հատ. ԽԵ. գլ. ասում է «Ի դրան եկեղեցւոյն (Վահանայ վանուց) վիմարդեան մահարձանօք, յորում հանգուցեալ կան 'ի շիրմի բազում թագաւորք և թագուհիք Աղուանից և Բաղաց»։

ԻԷ. ԳԼ.

Խազրաց արշաւանքն և գործած վնասներն.—Հայրապետական աթոռի փոխադրութիւն և Տէր Աբաս կաթուղիկոս.—Կոնդակ Տէր Յովհաննէս հայրապետի Հայոց առ Տէր Աբաս.—Առ որ թուղթ Երուսաղէմի Յովհաննէս Յոյն եպիսկոպոսից։

—∞—

Վաչական բարեպաշտ թագաւորի և Ջուփհաղիչէ հայրապետի վախճանելուց յետոյ՝ հեղեղի նման թափուում են Աղուանից աշխարհն Խազիրներն, կողոպտում, գերեվարում, քանդում են երկիրը, այրում եկեղեցիները և տաճարները և հրոյ ճարակ տալիս բոլոր մատենագրութիւնները և կտակարանները։ (Հաւանական է թուում մեզ որ ամբողջ ձեռագիր մատեաններն և թղթերն մեծ մասամբ պահուած են եղել Դարբանդի հայրապետական դիւանատան մէջ, որք վառուած են ամբողջապէս)։

Աղուանցիք, տոկալեալ «Քրիստոսի Խաչին թշնամիներից» —Հիւսիսային ցեղերի գործած անլուր չարութիւնից և յաճախակի արշաւանքներից, 551—552-ին հայրապետական աթոռը Դարբանդից փոխադրում են Պարտաւ մայրաքաղաքն և ար-

դէն վախճանուած Զուփհաղիշէ կաթուղիկոսի տեղ ընտրում են Մեծ-Իրանից գաւառի առաջնորդ Տէր Աբաս և ձեռնադրել տալով հայրապետ նստեցնում Պարտաւում։ Այնուհետև սովորութիւն է դառնում գրել Աղուանից կաթուղիկոսներին ուղղեալ նամակներին, կոնդակներին և հրովարտակներին վերայ «Աղուանից, Լփնաց և Չորայ կաթուղիկոսին»։

Դունայ ժողովի որոշումը մի կոնդակաւ հաղորդում է Հայոց Յովհաննէս Բ. կաթուղիկոսն Տէր Ապասին այսպէս.—«Լաւաց ճշմարտից աստուածասիրաց՝ սիրելի եղբօր և աթոռակցի մերում Տէր Աբասայ [1])» ասելով նախ ողջունում է։ Երկրորդ զգուշացուցանելով յայտնում է թէ Նեստորի աղանդը Աղուանքում տարածելու համար եկած են ձեր կողմերն Թոմաս, Եղիա, Բնոտ, Իլաս և ուրիշներ Պետրոսի վանքից, «Որ անուամբ ալքատասէր կոչի և գործովք Քրիստոսատեաց»։ Երրորդ՝ զգուշացուցանում է ամուր և անխախտ պահել Ս. Լուսաւորչի և երեք Տիեզերական ժողովների աւանդութիւնները և կանոնները և ընթանալ անշեղ և «Մի բնութիւն ասել աստուածութեան և մարդկութեանն Քրիստոսի»։ Հանգանակաձև դաւանութեան վերջում ասում է. «Այսպէս հաւատամք և փառաւորելով ասեմք. «Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ. որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ [2])»։ Ապա վերջանում է կոնդակն։

Տէր Աբաս նախ անմիջապէս հեռախուզել տալով գտնում է Նեստորական խումբը և անմիջապէս կազմում եպիսկոպոսաց ժողով, ուր մանրախոյզ քննութեամբ երևան է գալիս որոմնացանների խմորեալ դաւանութիւնն. իսկոյն և եթ հեռացնել է

---

[1]) Ամբողջ կոնդակի պատճէնը տես Կաղան. Բ. Հատ. Ի. գլ. և Ուխտան. Բ. Հատ. եր. 131։

[2]) Հայաստանեայց առաքելական եկեղեցին ամենայն աւուր ժամերգութեանց երգում է ըստ պատշաճի աւուրն 'ի դէմս Որդւոյն կամ Ս. Հոգւոյն. իսկ պատարագներին՝ միշտ 'ի դէմս Ս. Երրորդութեան «Սուրբ, Սուրբ, Սուրբ»։

տալիս գնոսա Աղուանից սահմանիցն։ Ապա նոյն ժողովում ընդունում են Դունայ ժողովից հաստատած դաւանութիւնը։

Երուսաղէմի Յունաց Յովհաննէս եպիսկոպոսն ևս ուղղում է մի թուղթ Աբաս հայրապետիս սոյն վերնագրով. «Այս թուղթ Յովհաննու Երուսաղէմի եպիսկոպոսի է. Առ Աբաս Աղուանից կաթուղիկոս»։ (Տպուած է 1896 թուի Արարատ ամսագրի մայիսի տետրակի վերջում ամբողջ թուղթն)։ Ինչ որ ասես, գտնուում է թղթիս մէջ.—«Սուրբ Աստուած»-ի դաւանութեան մասին մեղադրութիւն, խրատ, յորդոր, սպառնալիք, ինքնահաւանութիւն, վկայութեանց խճողումն, նախատական ճառ, և այլն։ Վերջապէս հեղինակի երկարաբանութեան գլխաւոր նպատակն կայանում է նրանում որ Հայք, Վիրք և Աղուանք չեն ընդունում Չորրորդ Ժողովը։ Որպէս թէ Յովհաննէս եպիսկոպոս գրած է այս թուղթը Ս. Երուսաղէմի Աղուանից սեփհական Պանտայ վանից վանական Թոմասի խնդրանօք։

Տէր Աբաս կաթուղիկոսն ստանում է Դունայ ժողովից նաև Հայոց նոր տոմարը—ուղղուածը և սկսում գործադրել։

Հայրապետիս օրով Վեհիկ անուն բարեպաշտ ոմն «Արցախայ 'ի Մխանց տոհմին 'ի վայրսն Կաղսեսոյ [1])» գտնում է ս. Ստեփաննոս Նախավկայի, Թէոդորոս Նահատակի, Վարոսի, Մամասայ և այլն մասունքներն։

---

[1]) Մասունքներս գտնուած են Վարանդայ գաւառի Մաւաս կոչուած գեղում, ուր շինուած է 'ի հնուց վանք յանուն Մամասէի. տես «Արցախ» եր, 103։

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԻԲ. ԳԼ.

Առանշահիկ իշխաններ.—Սասանեան Միհրան Աղուանից իշխան.—Վիրոյ կաթուղիկոս Աղուանից.—Բաժանումն Վրաց՝ Հայոց և Աղուանից առաքելական եկեղեցուց։

—∞—

Վաչական Գ.-ի մահուամբ վախճանում է և Աղուանից Արշակունի թագաւորութիւնն։ Այնուհետև Աղուանից երկիրն կառավարուում է Առանշահիկ իշխաններով։

Սպանուում է Պարսից Որմիզդ Դ., որի տեղ գահակալում է Խոսրով Բ.[1]) 590 թուին, բայց հակառակ կուսակցութիւնից հալածուելով ապաւինում է Յունաց Մօրիկ կայսեր, որի օժանդակութեամբ վերստին ժառանգում է Պարսկաստանի գահը և իւր հօր սպանման վրէժխնդիր լինելով՝ կոտորել է տալիս իւր մօր եղբայրները, այս է Բնդոյ[2]) և Վստամ և ուրիշ

[1]) Սեբ. եր. Կաղան. Բ. Հատ. ԺԷ. Թով. Արծր. եր. 85. Ասող. եր. 112—113։

[2]) Սեբ. Վնդոյ է անուանում։

ուրիշ 60 ազգականներ։ Սպանման և Խոսրովի հալածման մասնակից է լինում և Միհրան, որ, սպանուելուց վախենալով, Խոսրով Բ.-ի զօրութեամբ դառնալու ժամանակ իւր հետ առնում է 30,000 երդ (ծուխ) պարսիկ ժողովուրդ և փախչում դէպի Խազիր։ Միհրան Ճամախու դաշտաբերանում ստանում է Խոսրով Բ.-ից մի հրովարտակ, ուր 'ի միջի այլոց լինում է խօսքս. «Եղբայր իմ և հարազատ՝ մի՛ լիցի քեզ հեռանալ յինէն թշնամութեամբ, և եթէ ոչ հաճեցար ընդ իս բնակել, ուր հրովարտակդ իմ հասանէ, երկիրդ այդ քեզ լիցի 'ի բնակութիւն, որչափ և հասանեն գնացք ոտից քոց»։ Միհրան այնուհետև ապահով լինելով իւր կեանքի մասին, այլ ևս չէ անցնում Խազրաց երկիրն, այլ կանգ է առնում հրովարտակը առած տեղում, շինում սարի ստորոտումն Միհրաւան[1]) անուն մի քաղաք և իւր հետ բերած ծխերի ամենամեծ մասը բնակեցնում է Աղուանից դաշտի Հեճար և Քաղա գաւառներում (տես «Աղ. երկ. և Դր.» եր. 100) իսկ փոքր մասը բնակեցնում Միհրաւան նորաշէն քաղաքում։

Միհրան հետևեալ գարնան բարձրանում է Ճամախու Գարդման բերդն[2]) սքանչանում ամրոցի անմատչելի դիրքի վերայ, իւր մօտ հրաւիրում Առանշահիկ-Առանի սերնդից—12 իշխաններ՝ պարսկական յատուկ խորամանկութեամբ և գլխատելով 12-ը ևս տիրում Աղուանից երկրին և լինում Ա. իշխանն։

Տէր Աբաս 44[3]) տարի գահակալելուց յետոյ վախճանում է, որին յաջորդում է Տէր Վիրոյ, որ օծումը ստանում է Հա- 15
յոց Տ. Աբրահամ Ա. կաթողիկոսից 596-ին։ Երկու տարուց վերջն Աբրահամ Ա. հայրապետն մի շրջաբերական կոնդակաւ,

[1]) Այժմ կոչուում Աղ-Սու, որի բնակիչներն ամբողջապէս պարսիկներ են։ Այժմ մի մեծ գիւղ է, սակայն տակաւին ուրեք ուրեք երևում են պարսպի հետքերն և քաղաքի մեծ աւերակներն։

[2]) Բերդի նկարագրութիւնը տես «Աղ. երկ. և Դր.» եր. 186—190։

[3]) Ըստ Մխիթար-Գօշի ԻԴ. տարի։

ինչպէս Հայոց ազգին նոյնպէս և Աղուանից՝ Վիրոյ կաթուղիկոսի միջոցաւ հաղորդում է թէ երկար բարակ համոզելուց և իսպառ համբերութեամբ յորդորելուց յետոյ՝ յամառեալ մնաց Վրաց Կիւրիոն և բաժանեց Վրացիները Հայոց և Աղուանից միացեալ եկեղեցուց. վասն որոյ իմացնում եմ որ այսուհետև Հայոց և Աղուանից Առաքելական եկեղեցուց կտրուած են Վրացիք [1]։

ԻԹ. ԳԼ.

Քրիստոնեայ Մօրիկ կայսեր նամակի մի պարբերութիւնն.—Աղուանից ապստամբութիւնն.—Վիրոյ կաթուղիկոսն 25 տարի Պարսից արքունիքում։

Աղուանք ապստամբում են Պարսից դէմ։ Ապստամբելու գլխաւոր պատճառն է լինում Մօրիկ կայսեր ձեռք առած բանի միջոցներն, քանզի կայսրն նախ աշխատում է բռնութեամբ ընդունել տալ Հայոց և Աղուանից Դ. ժողովը, բայց անհնարին է լինում։ Երկրորդ՝ Հայոց և Աղուանից անմեղ ժողովրդոց սարսափելի հարուած տալու վրէժխնդրութեամբ քրիստոնեայ Մօրիկ կայսրն գրում է Պարսից Խոսրով Բ.-ին 'ի միջի այլոց Հայոց և Աղուանից մասին. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, կան 'ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ ես զիմս (Յունաց բաժնում և իշխանութեան տակ եղած Հայերը) ժողովեմ և 'ի Թրակէ գումարեմ և դու զքոյդ (Պարսից բաժնում և Աղ-

[1]) Մանրամասնութիւնն կայ Ուխտ. Բ. Հատորում։ Յովհ. կաթուղ. եր. 92. Արէլ եպիս. բաժանումը դնում է 596-ին (եր. 82—83)։ Սամ. Անեցին, եր. 79 բաժանումը դրած է ՈԻԷ—627-ին, որ սխալ է։ Իսկ Առաքել վարդ. «Թուին (Հայոց) ԿԲ.—613-ին։

ուանքում եղած Հայերը) ժողովէ և հրամայէ յարևելս տանել» (Սեբ. եր. 62—96)։

Ահա այս պատճառաւ ապստամբում են Հայք և Աղուանք բռնութիւնից ստիպեալ։ Հայոց Ատատ Խորխոռունի և Սամուէլ Վահևունի նախարարներն իւրեանց զօրքով ապստամբելով հասնում են Ուտի նահանգն, ետևից հասնում է և Պարսից զօրքն և անխնայ կոտորում շատերը, գերի տանում Աղուանից նախարարները և վիրաւորում ևս աւելի շատերը. «Որք ապստամբեցան յարքայէն Պարսից և կորեան, անկան բազումք 'ի նոցանէ, ոմանք 'ի սուր, ոմանք 'ի խեղութիւնս անդամոց և ոմանք տարագրեալք յաշխարհս հեռաւորս։ Իսկ նա (Վիրոյ կաթուղիկոս) փախստեայ անկանէր 'ի դուռն արքունի... 'ի դուռն թագուհւոյն (Շիրինայ, որ քրիստոնեայ էր Ասորի ազգաւ)» որի շնորհիւ կաթուղիկոսն հազիւ թէ կարողանում է ազատել իւր կեանքը. բայց 25 տարի մնում է կաթուղիկոսս Խոսրով Բ.-ի արքունիքում իբրև պատուաւոր բանտարկեալ (Կաղան. Բ. Հատ. ԺԳ. գլ.)։

Ահա այսպէս անմեղ Հայոց մի մեծ բազմութիւն փոխադրւում է Թրակիա. իսկ Աղուանիցն փոխադրւում է Ասպահան . . . ։

Վիրոյի բացակայութեան ժամանակ տեղապահ է նստում Պարտաւում Զաքարիա վարդապետն (ըստ Ճահխաթունեանցի Տիրանուն վարդապետն)։ Վախճանում է Սասանեան Միհրան, որին յաջորդում է իւր որդի Արմայէլն։

Լ. ԳԼ.

Հերակլի արշաւանքներն Պարսից դէմ։

Մօրիկ կայսեր անհեռատես քաղաքականութեան հետեւանքն այն եղաւ, որ Պարսից և Յունաց մէջ յարատեւեց արիւնահեղ պատերազմներ և սոսկալի աւերմունքներ։ Գերի է վարւում Քրիստոսի խաչափայտն, սպանուում են Կ. Պօլսում Մօրիկ կայսրն և իւր որդիքն (Սեբ. եր. 113). միմեանց ետևից գահակալում են Փոկաս և Կոստանդիանոս և Հերակլ կայսրներն (վերջինս սոսկ զօրավար էր)։

Հերակլ, Յունաստանում և Պարսկաստանում և Հայաստանում Պարսից հետ երկար պատերազմելուց յետոյ, Փայտակարանից մտնում է Աղուանից երկիրն բազմաթիւ զօրքով և շատ գերիներով յառաջ խաղում Պարտաւի վերայ։ Խոսրով Բ.-ի հրամանաւ Պարտաւի բնակիչներն առաջուց թողնում են քաղաքը և փախչում Արցախի ամուր լեռներն։ Տեղապահ Զաքարիա վարդապետն, որ մնացած է լինում Պարտաւում, ազատում է Հայ, Հրէայ և հեթանոս շատ գերիներ։ Հերակլի զօրքն աւերակ թողլով Ուտի-Առանձնակ գաւառի գիւղերը և այգիները, որոց միջից կամ մօտից անցած է յունական բանակն, բանակում է Դիւտականի մօտ։

Պարսից մի զօրագունդն Շահրվարազի զօրավարութեամբ Ուտի նահանգի Տիգրանակերտ աւանում սպասում է Հերակլի առաջը առնելու. իսկ միւս զօրագունդն Շահէն զօրավարի առաջնորդութեամբ 30,000 աւ բանակում է Հերակլի թիկանց կողմից, յունական բանակն մնում է երկու պարսկական սրերի մէջ։ «Ապա եկեալ հասին զհետ նոցա զօր Պարսից, զօրս նոր

զօր անուանեն և էր զօրագլուխ նոցա Շահրապղական [1]) և 'ի հաւատարիմ նախարարաց թագաւորին... այր մի զօր դրանիկ Սաղար անուանէին, եկն էջ ընդդէմ նորա (Հերակլի)... և դարձուցեալ զՀերակլեանսն ընդ կրունկն՝ վարեցին ընդ աշխարհն (Մեծ) Սիւնեաց։ Զի թէպէտ և հարուածք մեծամեծք եղեն զօրացն Պարսից, սակայն հանին տարան զնա յաշխարհն իւր» (Կաղան. Բ. Հատ. Ժ. գլ. Սեբ. եր. 146)։ Արմայէլին յաջորդում է Վարդ Ա.։

ԼԱ. ԳԼ.

Խազրաց արշաւանքն.—Պարտաւ քաղաքի դրութիւնն.—Դարբանդեան պատուարի մասին.—Խազրաց կերպարանքն.—Եւ որոց արշաւանքն դէպի Թիփլիս։

Խոսրով Բ.-ի սպանուած տարում 628-ին Հերակլի դրդմամբ Խազիրներն մեծ զօրքով լցուում են Աղուանից երկիրն իւրեանց Ջեբու Խաքան թագաւորի զօրավարութեամբ։ Մեզ յայտնի չէ թէ ինչպէս յաջողում է ներս մտնել Դարբանդի պահակներից, Ջեբու Խաքան սկսում է պատերազմել՝ դռները ամուր փակած՝ Չողայ քաղաքի զօրաց հետ։ Այս գործն հաւնում է Պարտաւ կուսակալ պարսիկ Գայշակին. «Բայց հայէր տեսանել թէ զինչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծ քաղաքին Չողայ {և ընդ գումարտակս սքանչելի պարսպացն նորա (Դարբանդի) զոր բազում ծախիւք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհս իւրեանց՝ գումարելով ճարտարապետս և հնարելով ազգի ազգի նիւթս 'ի շինուածս մեծասքանչ

[1]) Սեբէոս՝ Շահր Վարազ, Կ. վ. Զահ. Փար. եր. 238՝ Շահատրապաղական։

գործոյն, որով փակեցին ազխեցին ընդ լեառն Կովկաս և ընդ մեծ ծովն արևելից (Կասպից)[1]։ Արդ 'ի մօտիլ տիեզերական ցասմանն, որ առաջի էր մեզ ամենեցուն, նախ զնա (զպարիսպն Չողայ) բազխեցին ալիք ծովուն ծաւալեալ և 'ի հիմանց տապալեալ, քանզի տեսանելով զահն սաստկացեալ՝ ժանտատեսիլ, ժպրհերես, լայնադէմ անարտեւանուն բազմութեանն 'ի ձև իգական զհսարձակս գիմեալս 'ի վերայ, դողումն կալաւ զնոսա առաջի նոցա, մանաւանդ տեսանելով զպնդաքարշ կորովաձիգսն, որք իբրև կարկուտ սաստիկ տեղային 'ի վերայ նոցա, իբրև գայլք գիշախանձ անամօթացեալ գիմէին 'ի վերայ նոցա և անխնայ կոտորէին յանցս և 'ի փողոցս քաղաքին։ Եւ ոչ խնայէր ակն նոցա 'ի գեղեցկատես «մանկահասակս արուի և իգի»։ Չողայ քաղաքի արական և իգական սեռը այսպէս կոտորելուց վերջն դիմում են դէպի Պարտաւ։

Այդ ահագին հրոսակները տեսածին պէս պատսպարւում

[1]) Պատմութիւնից հաստատ գիտենք որ Հայոց Վաղարշակ Բ., Խոսրով Ա և Տրդատ Թագաւորների օրով արդէն կար Դարբանդի հսկայ պատուարն և փակուած դուռնն։ Ուրեմն անհերքելի փաստ է որ շատ վաղուց գոյութիւն ունեցած է պարիսպն, որի հիմնարկութիւնը, մի հրեայ պատմիչ՝ Կորիոնի որդի Յովսէպոսն (Գիրք Զ. գլ. 96) յատկացնում է Աղեքսանդր Մակեդոնացւոյն, գրելով հիւսիսային ցեղերի մանաւանդ Ալանաց մասին. «Սոքա յամենայն կողմանց փակեալ կային 'ի Թիկանց լերանց. զի փակեալ էր զնոսա Աղեքսանդր Մակեդոնացի արքայն մեծ երկաթի փականօք և ամրակուռ դղեկաւ 'ի մուտս անդ լերանց, որք շուրջ պատեալ կան զսահմանօք նոցա»։ Եղիշ. եր. 247 և Կաղան. Բ. Հատ. ԺԱ. գլ. յատկացնում են պատուարի շինութիւնը Պարսից Թագաւորին։ Սեբ. եր. 51 յատկացնում է Պարսից Նուշրևան Թագաւորին։ Վարդան աշխարհագիր՝ Մակեդոնացուն, այսպէս և այլք։ Արդ՝ համոզուած ենք որ սկզբում Աղ. Մակեդոնացու հրամանաւ շինուած է Դարբանդեան երկարաձիգ պարիսպն իւր փակուած երկաթեայ դռներով, իսկ յետոյ Պարսից Թագաւորների հրամաններով եղած են հիմնաւոր նորոգութիւններ։ Այս մասին տես և Աղ. երկ. և Դր.» եր. 115—118 և 275—276։

է կուսակալ Գայշակի լեզուն։ Պարտաւի չորս դռներից դուրս է խուժում ժողովուրդն և անապարանօք փախչում դէպի Արցախի ամուր լեռներն. փախչում է և պատսպանձուած Գայշակն, հետապնդում են փախստէից ետևներից։ Մտնում է ճոխ Պարտաւն, կողոպտում և աւերում։

Ապա արշաւում են Թիփլիսի վերայ, որպէս զի միանան ժամադիր եղած Հերակլի զօրաց և աւարեն և Թիփլիսը, բայց չեն կարողանում գրաւել։ (Կաղան. Բ. Հատ. ԺԱ. գլ.)։

ԼԲ. ԳԼ.

Կաւատ Բ.-ի գահակալութիւնն.— Վիրոյ կաթուղիկոսի ազատութիւնն, դարձն և առանձնայատկութիւններն.— Նախարարների դարձն.— Յաջորդութիւններ։

—oo—

Սպանուած Խոսրովին՝ 628-ին տեղակալում է Կաւատ Բ. որ մի ժամում կոտրել է տալիս իւր 40 եղբայրները. դարձնում է Հերակլին Քրիստոսի Խաչափայտը։ Ազատ արձակում է և Աղուանից Վիրոյ կաթուղիկոսը և նախարարները (Սեբ. եր. 151—158)։

Կաղանկատուացին, Բ. Հատ. ԺԴ. գլ. գրում է Վիրոյի մասին «Այր հանճարեղ և իմաստուն, զօրաւոր 'ի բանս իմաստութեան. և լեզու նորա իբրև գրիչ երագագրի 'ի պատմութիւնս խօսից խորհրդականաց և'ի մտաւոր խօսս Թագաւորաց և մեծամեծաց։ Նաև խոնարհախօսութիւն նորա քաղցրալուր ռամկաց և խառնիճաղանճ ժողովրդոց, որ երկայնէր զխօսս իւր համեմեալ ընդ ճառս իմաստնոց և ընդ առակս նոցա։ Ձարէր յօրինէր զառակս բերանոյ իւրոյ, զոր օրինակ զմարգարիտ յոսկի յեռուցու, մանաւանդ 'ի Թարգմանութեան լեզ-

ուլին Պարսից վարժեալ զամս քսան և հինգ»։ Ապա ասում է. երբ դուրս եկաւ Վիրոյ հայրապետն Պարսից արքունիքից և եկն իւր ծննդեան սահմաններն, ամեն տեղ երեսանկեալ փարում էր իւր վիճակի եկեղեցեաց դռներին և յատակների քարերին. յորդառատ թափում էր իւր արտասուքները և ծունր կրկնելով թրջում էր գետինը և դարձեալ կանգնում և մխիթարում իւր հետ եղածները և քաջալերում ազատուած նախարարները և ժողովուրդը[1])։

Միհրանեան Վարդ առաջնոյն յաջորդում է իւր որդի քաջն Վարդան, որ երեք տարում շինում է Շամախու Գարդման բերդը. ապա նենգութեամբ ճաշի հրաւիրելով բուն Հայկազեան Առանշահիկ-Առանի սերնդից իշխաններ—տոհմից 60 մարդիկ և ամենը գլխատում, թողլով միայն իւր փեսայ Զարմիհր-Առանշահիկ իշխանը։ Քաջ Վարդանս հնազանդեցնում է իրան նաև Կովկասեան վայրենի ցեղերը և վախճանում խաղաղութեամբ, որին յաջորդում է իւր որդի Վարդ Բ.։

ԼԳ. ԳԼ.

Երկրորդ արշաւանք Խազրաց.—Ջեբու Խաքանի պատուէրն.—Փախուստ Պարտաւի և գաւառային բնակչաց.—Վիրոյ կաթուղիկոսն Շաթ խազրի վրանում.—Սով, մահ և կնտութիւն.—Խազրաց հեռանալն Աղուանից երկրից։

Ջեբու Խաքան իւր Շաթ որդուով և Խազիր ահազին զօրքով երկրորդ անգամ արշաւում է Թիֆլիսի վերայ, առնում քաղաքը, կոտորում շատ մարդիկ, կողոպտում քաղաքը, ըմբռնում Պարսիկ կուսակալը և Վրաց իշխանը. ողջ ողջ քերթելով տիկ հանել տալիս երկուցունց մորթիները, լցնել տալիս խոտով և կախել տալիս Թիֆլիսի պարսպի արտաքին կողմից։

[1]) Ականատես պատմչի նկարագրութիւն է։

Ապա իւր զօրքով վերադառնում է և բանակում Պարտաւի մօտ, դաստիարակին յանձնում Շաթ որդին սոյն պատուէրով. «Եթէ երկրիս մեծամեծներն և առաջնորդներն դուրս կըգան իմ որդու առաջն և կըտան սորա ձեռքն իւրեանց երկիրը ինձ ծառայելու համար. և կը բանան իւրեանց քաղաքները և ամրոցները և վաճառները իմ զօրաց առաջ, կը թողնէք և դուք նոցա ապրել և ինձ ծառայել. ապա թէ ոչ, կը կոտորէք ամեն արուները». ապա ինքն թագաւորն դառնում է իւր երկիրն։

Արդէն Արցախի լեռներում ամրացած է լինում դաշտային ամբողջ ժողովուրդն. Պարսկաստան փախած կուսակալ Սեմա-Վշտնասն և ամրացած Վիրոյ կաթուղիկոսն Կողթ ագարակում[1]). բայց նեղուելով խուզարկուներից՝ ձիով փախչում է Չարաբերդ կամ Ջրաբերդ ամրոցն[2]). ուր ժողովում է թագաւորազուններից, իշխաններից և հոգևորականներից ոսկի, արծաթ և զգեստ և ապա ներկայացնում Շաթ արքայորդուն Պարտաւի մօտերքում։ Այս տեղ թողնում ենք որ ինքն պատմիչն Մովսէս պատմէ իւր աչօք տեսածը և ականջով լսածը։ «Անդ տեսաք զբազմոյս նոցա 'ի գուճս 'ի վերայ ծնկաց ըստ նմանութեան փաղանգաց ծանրաբեռն ուղտուց, իւրաքանչիւր կոնք մի լցեալ մսով յանսուրբ անասնոց, ըստ նմին և սկտեղք, յորում թանային յուտելն իւրեանց յաղաջուր և զմպոյս եղջեբեղէն և չեփորաձևս փայտեղէնս մեծամեծս, որով զարգանակն լափէին.... և զընծայ ողջունին, որ բարձեալ 'ի բազկաց մերոց զկնի կաթուղիկոսին. ապա ընկալան ընդ առաջ նորա.... զոժիտսն 'ի բազուկս իւրեանց՝ տարան զկաթուղիկոսն միայն 'ի ներքսագոյն խորանն, ուր նստէր արքայորդին»։

[1]) Այժմ Կթղուկոսարան, տես «Արցախ» եր. 225։

[2]) Տես «Արցախ» եր. 239—240։

Մեծ սիրով ընդունում է Ճալժ իւր պատուական հիւրը, յուսադրում անելով թէ Այսուհետև այլևս ասպատակութիւն չլինիր. Քո բերանից ելած հրամանին հնազանդ կըլինին իմ ամեն զօրքերն. «Ուխտ եղից քեզ երդմամբ յարև հօր իմոյ Ջեբու Խաքանայ, զի զոր ինչ խնդրեսցես յինէն՝ անվրէպ կատարեցից»:

Այնուհետև ամեն ոք ազատ դառնում է իւր բնակարանն. սկսում է վերստին շինութիւն առնել երկիրն: Կաթուղիկոսին խնդրանօք ազատւում են ողջ գերիներն. կաթուղիկոսն իւր հետ տարած վարդապետներով և սարկաւագներով գնում է Պարտաւ, ուր խուզարկել տալով Ճալժ իւր զօրաց մէջ՝ յետ է դարձնում կողոպտած բոլոր իրերը իւրեանց տէրերին:

Նոյն տարուայ մեծի պահոց օրերում ելնում են անհամար մկներ, ուտում արտերը և կանաչ խոտը, վասն որոյ տեղի է ունենում սաստիկ սով և մահտարաժամ և թերևս չումա կոչուած համաճարակ ախտ. սևացեալ մարմնով և կուռնտ եղած գլխով մեռնում են շատերն: Կաղան. Բ. Հատ. ԺԵ. գլ. անում է մի քստմնելի նկարագրութիւն սոսկալի սովի, անտանելի մահուան և սրտաճմլիկ տեսարանի, որք թէ գրողի վերայ են սարսափ ազդում և թէ ընթերցողի: Ականատես կաթուղիկոսն խորին վշտօք ասում է. «Ես Վիրոյ՝ Աղուանից և Լփնաց և Չողայ կաթուղիկոս, թողում անել զայլ ամենայն պէսպէս զաղրալիս՝ զմարմնոյ սևութիւնս և զկնտութիւն գլխոյ. զի յայսմ ևս յայտնի լիցի բան մարգարէական եթէ «ածից 'ի վերայ ամենայն հասակաց քուրձ և 'ի վերայ ամենայն գլխոց զկնտութիւն»:

Հետևեալ տարում Ճալժ արքայորդին հրաման է ստանում իւր հօրից, վասն որոյ և իւր ամբողջ զօրքով դառնում է Խազրաց երկիրն:

ԼԴ. ԳԼ.

Վարազ-Գրիգորի մկրտութիւն և իշխանութիւնն.— Տէր Զաքարիա Բ.-ի գահակալութիւնն:

Վարդ Բ.-ից ծնւում են Վարազման, Ջուշիկ տիկին և Վարազ-Գրիգոր, որ հաւատում է Քրիստոսին և մկրտւում Վիրոյ կաթուղիկոսից: Վախճանում է Վարդ Բ., որին յաջորդում է Վարազ-Գրիգոր, բայց ոչ իւր նախորդաց—Սասանեան իշխանների—նման, այլ հասարակութիւնից ընտրուելով, այս օրինաւորութեան և մկրտուած լինելու պատճառաւ կոչուած է. «Վարազ-Գրիգոր առաջին իշխան Աղուանից»: Հետքերից և աւանդութիւնից երևում է որ Վիրոյի ձեռնով մկրտուած են և Սասանեան Միհրանի ամեն յետականներն և թերևս այն 30,000 երդից ամենամեծ մասն:

Վիրոյ կաթուղիկոսս Պարսկաստանում եղած ժամանակ խնդրած էր Խոսրով Բ.-ից «գրել 'ի պատիւ Գարդմանայ տեառն իշխանացն Աղուանից 'ի վերայ թղթոց [1]) «առ կուսակալս աշխարհին» զոր դեռ ևս գրեն» (Կաղ. Գ. Հատ. ԻԴ. գլ.):

34 տարի գառնաղէտ, բայց անբասիր հայրապետական պաշտօն վարելուց յետոյ վախճանում է Վիրոյ 630-ին, որին
յաջորդում է Տէր Զաքարիա Բ. «այր սուրբ» որ տեղապահ էր 16
Վիրոյի բացակայութեան ժամանակ և ազատեց շատ գերիներ Պարտաւում [2]): Անյայտ է մնում մեզ համար միայն թէ ինչ պատճառից ստիպեալ սոյն Զաքարիայից եպիսկոպոս է ձեռ-

---

[1]) Այս է Պարսկաստանից Աղուանից իշխաններին ուղղեալ պաշտօնական նամակներին և ծրարներին վերայ գրել:

[2]) Մխիթ. Այրիվանեցին իւր ժամանակագրութեան մէջ յիշած է Տիրանուն, որ արար լուծմունս չ. (500) դժուարիմաց բանից:

նադրում Մեծ-Սիւնեաց Վրդանէս անուն ոմն վարդապետ հակառակ կանոնաց Մայր-Աթոռ Էջմիածնի։

ԼԵ. ԳԼ.

Յետկոյս նայուածք.—Արաբացւոց նպատակներն և ձգտումներն.—Քաղաքականութիւնն և արշաւանքներն։

—oo—

Մինչև այստեղ տեսանք որ Աղուանից ժողովուրդն անանջատ սիրով կապուած էր Հայոց հետ. տեսանք որ միացած էին քաղաքական և կրօնական և դաւանաբանական խնդիրներում անթերի։ Տեսանք որ Աղուանից ժողովուրդն, իբրև Հայոց գերիշխանութիւնը ճանաչող և յարգող, 'ի պահանջել հարկին տալիս էր միշտ օժանդակ զօրք։ Տեսանք նաև որ Պարսից գահակալներն ինչպէս երկար տարիներ ոչ միայն ստանում էին Հայերից և Աղուաններից արքունի հարկերը, այլ ըստ ձախողակի քաղաքականութեան իւրեանց ամեն ճիգ թափում էին հրապաշտ դարձնել մանաւանդ Հայերը և Աղուանքը։ Ուշադրութեան արժանի կէտն այս է—Հայոց և Աղուանից թագաւորութիւնները տկարացնելով և կործանելով, տկարացաւ և կործանուեցաւ Սասանեան թագաւորութիւնն իւր հրապաշտութեան կրօնով միասին, տկարացաւ և Յունաց կայսրութիւնն։

Ինչպէս Հայոց և Աղուանից և Պարսից կառավարութիւնն միապետական էր, նմանապէս միապետական էր և Արաբացւոց [1]) կառավարութիւնն՝ հոգևորականներից նստելով, որի գահակալողներն կոչւում էին Ամիրապետ։ Արաբացւոց քա-

[1]) Սոքա կոչւում են Արաբ, Արաբացիք, Հագարացիք, Իսմայէլացիք, Սարակինոս և Տաճիկ։

ղաքականութիւնն ձգտում էր տարածել ղուրանը և մահմետականութիւնը. այս պատճառաւ Արաբացիք 633-ին արշաւում են Պարսկաստանի վերայ։

ԼԶ. ԳԼ.

Յազկերտ Գ.-ի տագնապն.—Ջիւանշիր սպարապետ և պարգևադրեալ.—Պարսից անակնկալ արշաւանքն Աղուանից վերայ.—Ջիւանշիրի յաղթութիւններն.—Գահակալութիւն Տէր Յովհան Բ.-ի։

—oo—

Յազկերտ Գ. ջանալով առնել Արաբացւոց յարձակմանց առաջքը, հաւաքում է հարևան ազգերի զօրքերը և զօրապետները ևս։

Աղուանից Վարազ-Գրիգոր մեծ իշխանն, որ ծնած էր Վարազ-Փերոժ, Ջիւանշիր, Յեղուտ-Խոսրով և Վարազման, չէ կամենում անձամբ գնալ իւր զօրաց հետ, այլ ընտրելով յղում է Ջիւանշիրը որի մասին ասում է ականատես պատմիչն «խըրոխտ և սիգաճեմ, չքնաղագեղ ունելով տեսիլ, դեռ ևս կամէր ծաղկել ի ծնոտսն տէգ մօրուացն»։ Ջիւանշիր զօրավար կարգուելով իւր հօրից՝ 3000 զօրքով գնում է Պարսկաստան և իբր օժանդակ Պարսից բանակին Արաբացւոց դէմ՝ քաջութեամբ կռուելով ստանում է 3 վտանգաւոր վէրք և իւր ձին՝ 4 վէրք, եօթն տարի շարունակ պատերազմելով։

Յազկերտ նախ անուանում է սպարապետ Ջիւանշիրը, որին և ապա պարգևում «նշանս (թագաւորական ցեղի յատուկ դրօշմ) և փողս ազդարարութեան, երկուս նիզակս ոսկիս և երկուս վահանս ոսկեքանդակս, զորս միշտ առաջի նորա շըրջեցուցանէին, ընդ մէջ ածեալ զօտի ոսկի ընդելուզեալ մարգարտով և սուսեր ոսկեսարեայ և ապարանջանս բազկացն

և պսակ ցանկալի 'ի գլուխ նորա։ Ետուն նմա ևս զանգապանս մարգարտով, և զումարտակ նոյնգունակ շուրջ զպարանոցաւն, ագուցին նմա արջնաթոյր (մթնագոյն) մորս չորիւք դրօշակօք և զրասս (զինուորական բարձր աստիճանի թանկագին զգեստ) մետաքսառէչս ոսկեթեզան փարուագով և հրամայեցին զհազարապանեայս՛ բնաբար ծառայութեան և գետրս ձկանց»։ Վերջապէս Ջիւանշիր վերջին անգամ քաջութեամբ և սաստիկ պատերազմելով ստանում է 11 ծանր վէրք և ապա դառնում իւր զօրքով Աղուանք։

Ձնայելով որ Հագարացիք հետզհետէ գրաւելու վերայ էին Պարսկաստանը, Պարսից մի զօրագունդ արշաւանք է գործում Աղուանից երկրի վերայ, որպէս թէ Ջիւանշիր ապստամբելով հեռացած է պատերազմի դաշտից, գալիս են պատժելու։ Պարսից այս զօրագունդն բաժանւում է երեք մասի։ Իւր զօրքով հասնում է Ջիւանշիր, անձամբ սպանում թշնամու մի մասի զօրապետը, որ լինում է Դեյմի[1]) ցեղից, կոտորում են շատ զինուորներ, վեր առնում գերիներ, ձիեր և ջորիներ, ժողովում կապուտ և կողոպուտ և դառնում Պարտաւ։

Երկրորդ պատերազմում է սպարապետս Հերակլի կռուած տեղում և յաղթում երկրորդ զօրամասին, բայց ստանում է գոյժ թէ հայրդ Վարազ-Գրիգոր և եղբայրներդ գերի տարան պարսիկ զինուորներն։ Ջիւանշիր սպարապետն, զայրացած անցնում է Կուր գետի ձախ կողմն, և Կապիճան[2]) գաւառում հանդիպում թշնամու երրորդ զօրաբաժնին և կոտորում ամբողջապէս, սակայն ինքն ևս ստանում է իւր գլխից վէրք, որը անձամբ կապում է Վրաց Ատրներսէհ իշխանն. բայց այստեղ ևս չէ գտնում իւր հայրը և եղբայրները։ Ապա սպարապետս՝

[1]) Քրդաց ցեղերից մի տեսակի անունն. Սեբ. Գ. Դպ. ԼԷ. գլ.։
[2]) Գաւառիս մասին տես «Աղ. երկ. և Դր.» 271—275։

երկու պատերազմներ ևս մղելով Ճակաշէն[1]) գաւառում, խսպառ յաղթում է թշնամոյն, ազատում իւր հայրը և եղբայրները։ Մնացեալ պարսիկ զինուորներն դաշինք կապելով հեռանում են։

Սպարապետ Ջիւանշիրս ամուսնանում է ապա Մեծ-Սիւնեաց Արուիճան[2]) տոհմից Խոսրովանուշ օրիորդի հետ։

Ջիւանշիրի բացակայութեան ժամանակ Պարսից զօրավարն՝ դաւաճանելով դաշանց՝ վերստին գերի է պահում Վարազ-Գրիգոր իշխանը։ Դառնում է Ջիւանշիր պսակուած՝ խսպառ ջնջում ուխտադրուժ և դաւաճան թշնամին և ազատում կրկին իւր հայրը և այլևս հարկ չէ վճարում Պարսից[3])։

Տէր Զաքարիա հայրապետն 15[4]) տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում է 645-ին, որին յաջորդում է Տէր 17
Յովհան Բ. Ամարասայ եպիսկոպոսութիւնից։

ԼԷ. ԳԼ.

Պարսից Սասանեան թագաւորութեան կործանումն.—Հերակլի թոռն Կոստանդին կայսրն և Ջիւանշիր.—Դարձեալ պարգևներ.—Դահակալութիւն Տէր Ուխտանեսի.—Պարգևներ Թուրքեստանի թագաւորից.—Խազրաց արշաւանքն.—Սուրբ Նշան տաճարի շինութիւնն և օծման հանդէսն։

Արաբներից կործանուում է Պարսից թագաւորութիւնն. փախչում է Բազտրիա Սասանեան ցեղի վերջին թագաւորն

[1]) Տես «Արցախ» եր. 23։
[2]) Մ. Էմին՝ Արուեծան։
[3]) Կաղան. Բ. Հատ. ԺԸ—ԺԹ գլ.։
[4]) Մխիթար Գօշ, ամս 17. Կիրակ. «Տէր Զաքարիա ամս հնգետասան»։

Յազկերտ իւր գերդաստանով, Պարսկաստանին տիրում են Իսմայէլացիք։

Յունաց Հերակլ կայսեր թոռն Կոստանդին կայսրն մտնում է Հայոց և Աղուանից՝ Քրիստոնէական միացեալ ուժով Արաբացւոց դէմը առնելու նպատակաւ և որպէս թէ հեռատես քաղաքականութեամբ։ Կայսեր մտնում են Հայք և Աղուանք և հաստատում սերտ բարեկամութիւն աներկմիտ հաւատով և սիրով։

Նոյն կայսեր հրաւիրմամբ Ջիւանշիր սպարապետն մի պատուաւոր իշխանի հետ ներկայանում է կայսեր Կոստանդնին Մարաստանի Քունգր գիւղում։ Բայց որովհետև այդ միջոցին վախճանուած է լինում սպարապետի Խոսրովանուշ տիկինն, վամորոյ սև հագած է լինում Ջիւանշիր։ Կայսրն խակոյն հանել է տալիս սև զգեստները և հագցնել տալիս թագաւորական զգեստ և պարգևում Կենաց Փայտից մի մասը։ Իսկ յետոյ նոյն կայսրն Վաղարշապատ քաղաքում պարգևում է Ջիւանշիրին՝ թագաւորական ոսկեղէն և արծաթեղէն սպասներ և իւր պապ «Հերակլի և Նիկեայ՝ հանուոյն՝ զարքունական գօտին ածին ընդ մէջ նորա և գիւրն պատմուճան և դրօշս երկուս. և յորդիս նորա (Ջիւանշիրի) առնէր պատրկունս զօրայականս։ Եւ որ միանգամ առաջին թագաւորացն Աղուանից գիւղաստանեայք և սահմանք լեալ էին, զամենայնն ՚ի նա ընձեռեաց յազգաց յազգս արևելեայցս արքայաբար առնել տէրութիւն»։

Տէր Յովհան Բ. 25 տարի հայրապետութիւն անելուց յե-
18 տոյ վախճանում է 670-ին, որին յաջորդում է Տէր Ուխտանէս, որի հետ Ջիւանշիր հիմնարկում է Ճամախու Գարդման բերդում մի նշանաւոր տաճար Կենաց Փայտի մասը բազմեցնելու համար։ Ջիւանշիր շինում է Պարտաւում և իւր համար պալատներ։

Թուրքեստանի թագաւորն ևս բարեկամութիւն հաստա-

տելով Ջիւանշիրի հետ, որին և նուէր է յղում ծառաներ, աղախիններ, ընտիր ձիեր, և զանազան զէնքից մորթիներ։ Այլ և Ասորեստանից, Վրաստանից և Հնդկաստանից տեսութեան էին գալիս Ջիւանշիրին։ Այնուհետև Աղուանք հարկատու են լինում Յունաց։

Խազիրներն նորից արշաւում են Աղուանից երկրի վերայ. սակայն խսկոյն հալածուում են սպարապետի դիմադրող հուժկու թրից։

Ուխտանէս հայրապետն, առնելով Կենաց Փայտը և ամեն եպիսկոպոսները, նախարարները և իշխանները, Ջիւանշիրի հետ ելնում են Պարտաւից և գնում դէպի Ճամախու Գարդման բերդն. բայց չհասնելով գիշերում են Ջիւանշիրի բերդում [1]։ Հետևեալ օրն բարձրանում են Գարդման, ուր կաթուղիկոսն մեծահանդէս թափորով և շքեղ հանդիսով օծում է Տաճարը յանուն Սուրբ Նշան-ի և բազմեցնում ս. սեղանի վերայ Կենաց փայտի մասը [2]։

Այնուհետև ծերունի Վարազ-Գրիգոր իշխանն երկրի կառավարութեան ղեկը յանձնում է Ջիւանշիր իշխանին. (Կաղան. ԻԲ.—ԻԵ.)։

Բագուի Հայոց
Հռիփսիմեան Դպրոց

ԼԸ. ԳԼ.

Ջիւանշիրի երկրորդ ամուսնութիւնն.—Ջիւանշիր իշխանն Ամիրապետի մօտ.—Պարգևաբաշխութիւն.—Մասանց գիւտն։

Սև-Հոնաց թագաւորն իւր օրիորդով և զօրքով գալիս է Աղուանից երկիրն և դուստրը հարսնացնում Ջիւանշիրին հետ, հաստատում բարեկամութիւն, սէր և միութիւն և դառնում։

[1]) Այժմ կոչուում է Ջիւանշիրի ղալա «Աղ. երկ.» եր. 210—211։
[2]) Տես տաճարիս մասին «Աղ. երկ. և Դր.» եր. 188—189։

Ամիրապետն, լսելով Աղուանից իշխանի գիրքը, Յունաց, Հոնաց և Թուրքեստանի թագաւորների հետ ունեցած բարեկամութիւնը, պարգևադրուիլը և խելացի կառավարութիւնը, նախանձում է. վասն որոյ աշխատում է իշխանը գրաւել իւր կողմն և, ինքն ևս, պարգևներ և ընծաներ նուիրել Աղուանից իշխանին։ Հետևապէս պատուաւոր պատգամաւորների ձեռնով հրաւիրում է իշխանը Դամասկոս։ Ջիւանշիր երկրորդ անգամ ներկայանում է Ամիրապետին, որի մօտ պատգամաւոր եկած են լինում նաև Յունաց կողմից-Բիւզանդիոնից, որ յանձնաւու լինէին հարկ վճարել Արաբացւոց. «Վասն այնորիկ որ յերեմներորդ թագաւորութեան (սխալ է 30 տարիս) Կոստանդնի ինքնաձեռն եղեն ներքինիքն սպանանել զնա. որոց 'ի թագաւորէն լինէր հրաման մնալ մինչև եկեսցէ անդ իշխանն արևելից։ Իսկ բազմագով տէրն» (Ջիւանշիր) Ամիրապետի հրամանաւ խօսակցելով Բիւզանդացի պատգամաւորների հետ՝ հաստատում է խաղաղութիւն Ամիրապետի և Կոստանդին կայսեր և պատգամաւորների մէջ, որով գոհ են մնում ամենքն։

Ապա Ամիրապետն պարգևում է Ջիւանշիրին փիղ, թութակ, ոսկեպատեան և մարգարտազարդ թուր, թագաւորական ծիրանի պատմուճան, յիսուն և երկու արաբական նժոյգ և Մեծ-Սիւնեաց իշխանութիւնը, որ իւր հսկողութեամբ իշխէ իշխանն և Մեծ-Սիւնեաց վերայ։ Պարգևադրուում են և իշխանի հետ գնացած 50 անձինք։ Բայց որովհետև Ջիւանշիր, 'ի նկատի ունելով Աղուանից երկրի խաղաղութիւնը և շինութիւնը, խոստացած էր հարկ վճարել և Հազարացւոց, վասն որոյ Ամիրապետից խնդրելով թեթևացնել է տալիս հարկը։ Ամիրապետի տիկիններն ևս նուիրում են Ջիւանշիրի տիկնոջ համար թանկագին մետաքսեայ կտորներ և կերպասներ։

Ուխտանէս հայրապետի վերջին տարիներում գտնուում են այն մասունքներն, զորս ամփոփած էին Ս. Մեսրովպի աշակերտներն Աստղաբլրի մօտ։

12 տարի պաշտօն վարելուց յետոյ վախճանում է Տէր
Ուխտանէս և յաջորդում է Տէր Եղիազար Ճաքուայ առաջնոր- 19
դութիւնից [1])։ Եղիազար հայրապետիս մասին Կաղանկատուացին ասում է 'ի միջի այլոց. Սա ևս մին էր Պարտաւում գումարուած կաթուղիկոսացու ընտրող ժողովականներից. վիճակն ելնում է Եղիազարիս, որ ձեռնադրուում է նոյն իսկ ժողովում, երևի թէ Հայաստանի խառնակ դրութեան պատճառաւ։

Հայրապետիս օրով գտնուում է Գիս գիւղում այն խաչն հանդերձ Կենաց Փայտի մասամբ, որը Ս. Մեսրովպ ամփոփած էր։ Սահմանուում է նաւակատիկ ամեն տարի Խաչվերացի տօնին Գիսում կատարել՝ այն հանդէսը։

ԼԹ. ԳԼ.

Ջիւանշիր իշխանի սպանումն.—Ընտրութիւն Վարազ-Տրդատի.—Արշաւանք Սև-Հոնաց.—Վարազ-Տրդատի մասին։

—օօ—

Նաւակատեաց Ս. Խաչի տօնի օրն ամարանոցից Պարտաւ է գալիս Ջիւանշիր, որ ներկայ լինի հանդէսներին այն գեղեցիկ տաճարում, որը շինել տուած էր ինքն։ Իւր սեփհական բուրաստանում անզէն և միայնակ զբօսնելու ժամանակ, գիշերուայ առաջին պահուն սպանուում է Ջիւանշիր իշխանն Ենիբա անուն ումն վատազգի անձից [2]), որ փախչելով անյայտանում է մութին մէջ։ Արշաւում է սրընթաց լեգէոնն, բայց չէ հասնում սպանողին. վասն որոյ քանդում և աւերում են

---

[1]) Կաղան. Բ. Հատ. Իէ—ԼԱ. գլ.։

[2]) Ճարայարողն ասում է. «'Ի սմին ժամանակի (725)-ին) զՋիւանշիր իշխան Աղուանից սպանին Ամեդուքն» Գ. Հատ. ԺԷ. գլ. սխալ է Թուականն։

սպանողի հօր տունը և կողոպտում։ Ջիւանշիր իւր վերջին շընչում կարգադրում է իւր որդոց հասանելի բաժինները և վախճանում։ Մեծ սուգ է անում ամբողջ երկիրն և Դաւթակ անուն ոմն յօրինում է Այբ-բենական կարգաւ *եղերերգական* ողբ, որի կիսատն կայ Մոսկուայում տպուածում, իսկ ամբողջն՝ Փարիզում տպուածում։

Հաւաքւում են Եղիազար հայրապետի մօտ Աղուանից երկրի ամեն տոհմերից իշխաններ և մեծամեծներ և միաձայն հաւանութեամբ մեծ իշխան ընտրում Ջիւանշիրի եղբօր՝ Վարազմանի Որդի[1] Վարազ-Տրդատը, որ «Հզօրիմաց հանճարով գերագոյն յոյժ, ցուցանելով ամենեցուն զսէր խնամակալ բարեկամութեան... 'ի ձեռն իմաստակիր և քաղցրաբոյր խօսից նուաճէր և յինքն հանդուցանէր զամենեցուն սիրտ և երկայնամիտ հեզութեամբ հնազանդեցուցանէր զաշխարհն ըստ սովորական իւրոյ տէրութեան»։

Սև-Հոնաց Ալփիլղի-Թուէրն, որ Ջիւանշիրի աներորդին է լինում, իւր փեսայի սպանման վրէժը լուծելու համար՝ մեծ զօրքով արշաւում է Աղուանից երկրի վերայ, որի հետ գալիս են և Գովգայ երկրիցն շատերն զինուած և ասպատակ սփռում Կապաղակ գաւառում։ Վարազ-Տրդատ իշխանի կողմից իբրև պատգամաւոր գնում է Եղիազար կաթուղիկոսն և համոզում Ալփիլղի-Թուէրը ասելով թէ Ջիւանշիր իշխանի սպանման հաղորդ չեն բնաւ Աղուանք, այլ մի *վատազգի* անձի ձեռնով կատարուած է սպանութիւնն։ Ապա հեռանում է Ալփիլղի-Թուէր իշխանն իւր զօրքով։

«Այնուհետև աստուածարեալ իշխանն Վարազ-Տրդատ օրըստ օրէ յառաջանայր 'ի պետութեան իւրում, և ընդունէր զգերագոյն գահն 'ի հզօր և յարքայական իշխանէն Տաճկաց (Ամիրապետէն) սահմանեալ լինել կողմանն արևելից, իշխել

[1]) Կաղան. եր. 136 և 262 տպ. 'ի Մոսկվա։

ամենայն թագաւորութեանն Աղուանից և Ուտէացւոց գաւառին և նուաճել ընդ ինքեամբ զամենեսին, յարագուարճ ցընծութեամբ յաղթող և հզօր գոլով 'ի վերայ սահմանաց իւրոց» (Կաղան. Բ. Հատ. ԻԶ—Իէ.)։

Խ. ԳԼ.

Պարտաւի ժողովն.— Խորհրդի նպատակն.—Իսրայէլ եպիսկոպոսի առաքելութիւնն.—Սև-Հոնաց պաշտամունքներն.—Իսրայէլ եպիսկոպոսի գործունէութիւնն.—Հոնաց մեծ իշխանի առաջարկութիւնն.—Պատգամաւորութիւն։—Կաղանկատուացու Բ. Հատորի վերջն։

Պարտաւում կազմւում է մեծ ժողով Եղիազար հայրապետի նախագահութեամբ և Վարազ-Տրդատ իշխանի և ամեն նախարարաց ներկայութեամբ։

Վարազ-Տրդատ ասում է. ահաւասիկ մեզ վերայ ծանրացել են Արաբացւոց հարկերն, որ պատճառում է մեզ տարակուսութիւն և երկրորդ՝ հիւսիսայնոց ամեն տարի մեր երկրի վերայ արշաւելն ու ասպատակելն աւերեց մեր երկիրը։ Ուրեմն կարևոր է ընտրել մի մարդ, որ գնայ այդ տէրութեան հետ բանակցելով հաստատէ *սէր* և *հաշտութիւն*։ Իսկոյն ընտրեցին Իսրայէլ եպիսկոպոսը որ մի սրբասէր անձն էր և Մեծկողմանց առաջնորդն։

Սոյն եպիսկոպոսն մեծ նեղութեամբ հասնում է Սև-Հոնաց Վարաչան քաղաքն և ընդունւում սիրով։

Ս. եկեղեցւոյ այս ժիր մշակն ոչ միայն յաջողում է խոհեմութեամբ հաստատել *սէր*, *խաղաղութիւն* և անքակ *հաշտութիւն*, այլ և յաջողում է արմատախիլ անել նոցա սնոտիապաշտութիւնները. վասն զի ունէին կուռք *մեհեաններ*, *պաշտելի ծառեր*, *Թանգրի-խան* անուամբ հսկայի արձան, որին

զոհում էին *խոլոված ծի*։ Ունէին *քրմապետ, կախարդներ, վհուկներ*. պաշտում էին նաև *կրակ, կայծակ, ջուր*, և *լուսին*, ևայլն։

Հաւաքուում են եպիսկոպոսին մօտ, որից և խնդրում են մի բան խօսել կրօնի մասին։ Բարեպատեհ առիթ համարելով՝ բացատրում է թէ սնոտի են իւրեանց պաշտամունքներն, ճըշմարիտ Աստուածն երկնքումն է. բացատրում հասկացնում է Ամենասուրբ Երրորդութիւնը։ Վերջապէս նախ հաւատում և մըկրտուում է ինքն մեծ իշխան Աղբիւղին իւր զօրքով. և ապա ժողովուրդն, որք սրբութեամբ պահում են մեծ պասը։

Կոտորում են պաշտելի ծառերը և շինում Խաչեր և տընկում 'ի տեղ ժողովրդեան, կործանում են Սպանդէատ կռատունը. մկրտուում են ապա և գլխագրող քուրմերն, քրմապետն, կախարդներն և վհուկներն, շինում են եկեղեցի. կատարուում է ուրախութեան *տօների տօն* և *ժողովների ժողով* իբրև իւրեանց լուսաւորութեան ամենամեծ և նշանաւոր օրն. 'ի հաստատութիւն *Հոնական եկեղեցւոյ* անում են մեծամեծ ժողովներ և ձեռնադրուում քահանաներ։

Դիմում է եպիսկոպոսին՝ Հոնաց մեծ իշխանն իւր նախարարների և իշխանների հետ և խնդրելով ասում. «Աղաչեմք զքո սրբութիւնդ, զի հաւանեսցիս լինել մեզ տեսուչ և վարդապետ՝ կանգնելով 'ի Վարաչան քաղաքիս մերում զաթոռ հայրապետական, և յուխտ Տեառն մտից ես Իլիթուէր[1]) ընդ քեզ զամենայն հեթանոսական պաշտամունս բնաջինջ լուեցից յերեսաց Հոնաց երկրիս»։ Պատասխանում է Իսրայէլ եպիսկոպոսն թէ այդ կախուած չէ իմ կամքից, այլ Աստուծոյ, Եղիա-

[1]) Մ. Էմին եր. 184 *Աղփիւղի Թուէրոյ*. և եր. 206 *Իլիթուէր*. Կ. Վ. Շահնազարեան *Աղբիւղի Թուել* և եր. 394՝ *Իլու Թուէլ*։ Միևնոյն անձն է և ոչ տարբեր. թերևս գրչագրերի կամ տպագրերի սխալներ են տարբեր լինելն։

զար կաթուղիկոսի և Վարազ-Տրդատի կամքից։ (Կաղ. Բ. Հատ. ԼԸ—ԽԲ. գլ.)։

Իլիթուէր մեծ իշխանն պատրաստում է նամակ, մին ուղղեալ Աղուանից Եղիազար կաթուղիկոսին և Վարազ-Տրդատ իշխանին և միւսն Հայոց Սահակ Գ. Ձորափորեցի կաթուղիկոսին և Մամիկոնեան Գրիգոր զօրավարին.—երկուսն ևս գրեթէ միևնոյն իմաստով—Հոնք ևս ընդունեցին Հայոց և Աղուանից կրօնը և դաւանութիւնը այր Աստուծոյ Իսրայէլ եպիսկոպոսի քարոզութեան շնորհիւ. խնդրում ենք, նոյն եպիսկոպոսը շնորհեցէք մեզ տեսուչ և առաջնորդ, որի ձեռնով գտանք մեր փրկութիւնը և ճանաչեցինք ճշմարիտ Աստուածը։ Այնուհետև կըհաստատուի Հայոց, Աղուանից և Հոնաց մէջ *սէր* անքակ։ Նամակներս յղում են պատգամաւոր Իրթգին Խուրսանց և Չաթ Խազրի ձեռնով[1]) Իսրայէլ եպիսկոպոսի հետ։

Պատգամաւորներն մեծ սիրով ընդունուում են Հայոց Սահակ հայրապետից, որ մի յատուկ կոնդակաւ յայտնում է Հոնաց իշխանին նախ իւր թղթի ստանալը. Քրիստոնէութիւնը ընդունելու համար Հայոց և Աղուանից խորին խնդակցութիւնը. երկրորդ՝ գրում է. «Բայց այդ Իսրայէլ եպիսկոպոսը՝ որը խնդրեցինք մեզնից՝ մեծ է Ձեր այդ խորհուրդն. քանզի կարելի չէ հօտն առանց հովուի լինել. այդ ծանր և դժուարին է մեզ չկատարել Ձեր խնդրածը... այլ Իսրայէլ եպիսկոպոսը յուղարկելու իշխանութիւնն վերաբերում է Եղիազար կաթուղիկոսին. կոնդակն վերջանում է օրհնութեամբ։

Պատգամաւորներն դառնում են Եղիազար կաթուղիկոսին մօտ, որ պատճառաբանելով թէ Իսրայէլ եպիսկոպոսն առաջնորդ է Մեծ.-Կողմանց գաւառին, վասն որոյ գնալը կամ չգնալը թողում է նոյն եպիսկոպոսի կամքին։ Վերջապէս եպիս-

[1]) Կ. Վ. Շահ. Երթգին Խուրսանց և Կաթն Խազրաց։

կոպոսն սիրով յանձնառու է լինում գնալ և կառավարել իւր նորընծայ հօտը։ (Կաղ. Բ. Հատ. ԽԳ.—ԽԵ. գլ.)

Կաղանկատուացին վերջացնում է իւր պատմութիւնը Հայոց Սահակ Գ. և Աղուանից Եղիազար կաթուղիկոսների Վարազ-Տրդատի և Գրիգոր Մամիկոնեանի կենդանութեանց ժամանակ. Բ. Հատորի վերջում յիշելով Հայոց և Աղուանից Ս. Երուսաղէմում ունեցած վանքերի անունները։

ԽԱ. ԳԼ.

Աղուանից երկիրն եւ Հայաստանն երկու սուրերի մէջ.—Յուստինիանոս Բ. կայսեր արշաւանքն.—Իշխանաց հետ և Վարազ-Տրդատի պատանդ տանելն 'ի Կ. Պօլիս։

Մի կողմից Արաբացիք աշխատում էին Հայաստանը և Աղուանք ձգել իւրեանց տիրապետութեան տակ և միւս կողմից Յոյները։ Հայոց և Աղուանից ժողովուրդն ողորմելի ոչխարի նման մնացել էր փղի և ուղտի կռիւների մէջ տանջուելիս և ջարդուելիս. եթէ բռնում էին Յունաց կողմը, կոտորւում էին Արաբացիներից, իսկ եթէ Արաբացւոց՝ կոտորւում և պատանդ էին տարւում Կ. Պօլիս, թող երկրի աւերակ դառնալը։

Արդէն քանիցս բարբարոսութիւններ գործած էր Հայաստանում և Աղուանքում քրիստոնեայ Յունաց զօրքն։ Որպէս թէ բաւական չէր այս, անձամբ գալիս է Յուստինիանոս Բ. կայսրն և անում աւերմունք և անգթութիւններ, թողնելով 30000 զօրք որ պահպանեն Հայաստանը և Աղուանքը Հագարացւոց դէմ. իսկ ինքն առնում է իբրև պատանդ Հայոց նախարարների որդւոց հետ և Աղուանից Վարազ-Տրդատ իշխանը և սորա երկու որդիքը—Գագիկ և Վարդան և տանում է Կ. Պօլիս։

Աւելորդ է գրել թէ Աղուանից համար որքան ծանր և վտանգաւոր եղաւ իշխանիս բացակայութիւնն, մանաւանդ այնպիսի մի անտանելի պարագայում։ Հայք և Աղուանք զզուելով Յունաց հակաքրիստոնէական արարմունքներից՝ վերջնականապէս մտնում են Արաբացւոց իշխանութեան տակ 693-ին Աբդլ-Մէլիք ամիրապետի օրով։

ԽԲ. ԳԼ.

Դասխուրանցի չարայարող.—Ներսէս Ա. կաթուղիկոս Աղուանից։—Աղուանից հասարակութեան նիւթական և բարոյական տագնապն.—Դաւանաբանական յուզումն արեմուտքից.—Աղուանից եկեղեցին ստորագրելու պատրուակ.—Գահընկեցութիւն Ներսիսի Ա. և յաջորդութիւն Տէր Սիմէօն Ա.

Չարայարող հոմանուն Մովսէս Դասխուրանցին շարունակում է պատմութեան թելը Կաղանկատուացու կտրած կէտից Գ. Հատորով, որի Ա. և Բ. գլուխներում խօսում է Իսմայէլացւոց ծագման և զօրանալու մասին, զորս աւելորդ ենք համարում կրկնել, վասն զի արդէն կրկնուած են Ղևոնդի և Ասողկան պատմութեանց առաջարանց մէջ, որ տպուած են Պետերբուրգում։ Ուրեմն շարունակենք պատմութեան թելը։

Վեց տարի հայրապետական պաշտօն վարելուց յետոյ
687-ին վախճանում է Տէր Եղիազար, որին յաջորդում է Ներ- 20
սէս Ա. Բագուր կոչեցեալ, որ առաջնորդ էր Ճամխու Գարդման գաւառին։ Ընտրութիւնն կատարւում է Պարտաւի Ս. Գրիգոր մայր եկեղեցում. ընտրութեան միջոցին Ներսէսից առնում են գրաւոր երդմնաթուղթ, որ ինքնին նզովում է ողջ հերձուածողաց և հերետիկոսաց դասը և ուխտում է հետևել

ուղղափառ Ս. Հարց և բացի 3 տիեզերական ժողովներից չընդունել այլ տիեզերական ժողով և չճանաչել։

Անտանելի է լինում Աղուանից ժողովրդեան նիւթական և բարոյական տագնապն։ Կ. Պօլսում բանտարկուած էին երկրի սրտացաւ և պաշտպան Վարազ-Տրդատ իշխանն և իւր որդիքն. հասարակութիւնն անկարող էր վճարել Արաբացւոց, Յունաց և Խազրաց հարկերը. երեք պետութիւններդ խստիւ և պատժելով պահանջում էին սահմանեալ տուրքերը. միւս կողմից սղոսկելով մտնում էին Աղուանից եկեղեցւոյ մէջ դաւանաբանական պղտորումներ և վրդովումներ։

Արիոսեան, Մակեդոնեան, Նեստորեան, Ապողինարեան, Եւտիքեան աղանդներն յուզած էին արևմտեան եկեղեցեաց մտքերը, վրդոված սրտերը, ցամաքեցրած քրիստոսաւանդ սէրը, անկեղծ եղբայրութեան յօդակապ միութիւնը և թշնամի յարուցած եղբայր եղբօր դէմ և ազգ՝ ազգի։ Հայոց և Աղուանից միացեալ եկեղեցին, ընթանում էր առաքելական և քրիստոսաւանդ ուղղութեամբ, թէ և վրդովուած էր քաղաքական դրութեամբ, բայց անվրդով էր նախնական անխոտոր դաւանութեամբ և ազատ ու անխառն արևմտեան խմորեալ աղանդներից։ Այս միացեալ եկեղեցին իւր մարտիրոս զաւակաց ս. արեամբ 400 տարի պաշտպանած էր իւր կուսութիւնը —անխմոր դաւանութիւնը—անընդհատ մաքառելով Զրադաշտական լափլիզող կրակի և անյագ սրի դէմ, Սև-Հոնաց, Խազրաց, Ալանաց, Ռոսմոսաքեանց, Յունաց և Հագարացւոց սպանիչ զէնքերի դէմ։ Հայոց և Աղուանից միացեալ եկեղեցւոյ այս յարատև տոկունութիւնն և դաւանաբանական խաղաղութիւնն ծանր է թւում Արևմուտքին։ Այս պատճառաւ սկսում է Արևմուտքն հետզհետէ գործ դնել յայտնի, բռնի և գաղտնի միջոցներ և մինչև անգամ հակաքրիստոնէական բարբարոսութիւններ, որպէս զի քայքայէ և անջատելով բաժանէ սոյն միացեալ եկեղեցիները միմեանցից և պղտորէ սոցա նահատակու-

թեամբ պահպանած միութիւնը և ամուր գրկած դաւանութիւնը։

Նախ՝ բազմիցս յուզում են Քաղկեդոնական ժողովի խնդիրը, որը արդէն նզոված էին Զենոն և Անաստաս կայսերներն իւրեանց հրովարտակներով։

Երկրորդ՝ յարուցանում են *աստիճանաց* կամ *դասակարգութեանց* խնդիր, իբր թէ ըստ ինն դասակարգութեանց Հրեշտակաց. մինչդեռ արդէն այդ գոյութիւն ունէր եկեղեցեաց մէջ Առաքելոց ժամանակից 'ի վեր։

Երրորդ՝ միւս եկեղեցիները ստորադրելու ճգամբ յուզում են *չորս աւետարանչաց* 152 աթոռների խնդիր, որպէս թէ միւս Առաքեալք ստորադրեալ էին *Եփեսոսի*, *Անտիոքայ*, *Աղեքսանդրիոյ*, և *Հռովմայ* աթոռներին։ Հայք և Աղուանք պատասխանում են ժողովով-Քրիստոս իւր եկեղեցւոյ համար չնշանակեց հողեղէն *մեծ* և *գլուխ*, քանզի ինքն Յիսուս Քրիստոս է իւր Եկեղեցւոյ *Մեծն* և *Գլուխն*, այլ հաստատեց հաւասարութիւն և սիրաշաղկապ եղբայրութիւն, ինչպէս չկար և Առաքելոց մէջ *մեծ* և *փոքր*։ Ամեն երկիրներում, ուր քարոզած և նահատակուած են Առաքեալք, արդէն հաստատուած են *ինքնուրոյն* Եկեղեցիներ։ Հայաստանում և Աղուանքում քարոզած և նահատակուած են Թադէոս և Բարդուղիմէոս և Եղիշէ առաքեալք, մանաւանդ թէ Առաքեալներից աւելի չարչարանք կրող Ս. Գրիգոր Լուսաւորիչն, որ արդիւնաւոր մշակ եղած է Քրիստոսի Եկեղեցւոյն համար Հայաստանում, որը ընդունած է և արևմուտքն։

Վերջապէս Արևմտեան եկեղեցին, փոխանակ ամփոփելու իւր ուժերը և դիմադրելու Արաբացւոց, փոխանակ ամրապնդելու իւր քայքայուող պետութեան միութիւնը, այժ Արևմտեան եկեղեցին բանտարկում է Աղուանից Վարազ-Տրդատ իշխանը և իւր որդիքը, Վրացի մի անձի միջոցաւ ձեռք է առնում բանտարկեալ իշխանի կինը Սպրամ իբրև յարմար գործի և սա

զՆերսէս Ա. կաթուղիկոսը՝ բաժանել Աղուանքը Հայաստան-եայց Եկեղեցուց, ինչպէս բաժանած էին Վրացիները կանխաւ Հայերից։

Յովել եպիսկոպոսի մահից յետոյ որի մօտ գտնուում է եղել իւր տուած երդմնաթուղթն, առնում է այն և պատառոտելով ոչնչացնում Ներսէս Ա. կաթուղիկոսն, ապա քշում Իսրայէլ եպիսկոպոսը Սև-Հոնաց կողմերն, պաշտօնից հեռացնում է և Ճամախու Գարդման գաւառի առաջնորդ Եղիազար եպիսկոպոսը և այնուհետև սկսում ազատօրէն խմորել Քրիստոսի բանաւոր հօտը։ Այդ միջոցին Կապաղակայ Յովհաննէս եպիսկոպոսն, Ամարասայ Սահակ եպիսկոպոսն և Հաղի գաւառի Սիմէօն եպիսկոպոսն և Ձերոյ մեծ իշխանն, որ տեղապահ էր Վարազ-Տրդատի բացակայութեան պատճառաւ, ամբողջ ազատանիներով միասին կազմում են ժողով, նզովում զՆերսէս և անմիջապէս հաղորդում Հայոց Եղիա հայրապետին, որ 700 թուին գալիս է Պարտաւ, ժողովով գահընկէց անում չարափառ Ներսէսը, որ «կալաւ զաթոռն ուղղափառութեամբ ամս 14 և 'ի չարափառութեան՝ ամս 3 և կէս [1])։ Նոյն ժողովում ընտրուում և օծուում է՝ Եղիա հայրապետի ձեռնով՝ Տէր-Սիմէօն Ա., որ
21 սարկաւագապետ էր Աղուանից կաթուղիկոսարանին։ Երկու հայրապետներիս որոշմամբ և հրամանաւ չարափառ Ներսէսի (որ 8 օրից յետոյ մեռնում է Սպրամ տիկնոջ հետ) բոլոր գրքերը հանուում են Բերդակուր (կթղըկոսարան) [2]) ամարանոցից և թափուում Թարթառ գետի մէջ։

---

[1]) Գօշ-Մխ. «Տէր Ներսէս ամս ԺԵ. (15)». Կիրակոս «եօթն և տասն»։

[2]) Տես «Արցախ» եր. 225։

ԽԳ. ԳԼ.

'Ի նշան անքակ միաբանութեան Հայոց և Աղուանից մէջ.—Տէր Սիմէօն Ա-ոյն գործերն.—Տեղակալութիւն Տէր Միքայէլ կաթուղիկոսի.—Ազատութիւն Վարազ Տրդատի և իւր որդւոց.—Արաբացւոց և Խազրաց արշաւանքները.—Յաջորդութիւններ։

—○○—

Աղուանից Տէր Սիմէօն Ա. իւր ամեն եպիսկոպոսներով, վանականներով, իշխաններով, սպարապետով և տանուտէրներով տալիս է մի թուղթ Եղիա հայրապետին, որ այնուհետև պահելու են Հայոց Ազգի և Ս. Էջմիածնի հետ անքակ սէր և միաբանութիւն և առանց Հայոց հայրապետի գիտութեան ոչ ոք նստեցնելու չեն կաթուղիկոս և ուխտում են ցմահ հեռի մնալ բոլոր ատելի աղանդներից, որի տակ ստորագրում են և տալիս Եղիա կաթուղիկոսին։ Նոյնպէս վերջին հայրապետս եւս նոյնպիսի մի պայմանաթուղթ է գրում, որի վերջաբանի մէջ ասում է. «Ես Եղիա Հայոց կաթուղիկոս հանդերձ իմ եպիսկոպոսօքս առի զմիաւորութեան գիրդ 'ի ժողովոյդ Աղուանից և ետու զայս պայմանի գիր ձեզ, զի մի ոք յանդգնեսցի թիւրել ինչ՝ զեդեալ ուխտադրութիւնդ։ Եւ զերկոսեան նամակսդ կնքեալ իմով մատեանեաւ ետու 'ի պահեստի Ներսմերհի (Ջրվշտկի) ուխտին 'ի ձեռն սրբասիրի Քչկայ հօր պայման անհոգութեան [1])»։

Աղուանից նախարարների և իշխանների անուանց ցուցակը առնում է Աբդլ-Մէլիք ամիրայի Նեքքինին և տանում դնում արքունի դիւանում։

---

[1]) Առաջին նամակի վերջում. «Գրեցաւ գիրս այս միաբանութեան.... 'ի Հայոց թուականիս 148=700: Գ. Հատ. Դ—Թ. գլ.:

8

Տէր Սիմէօն Ա. անելով եկեղեցական ինչ ինչ բարեկար-
գութիւններ և մի և կէս տարի պաշտօն վարելուց յետոյ փո-
22 խուում է առ Աստուած, տեղակալում է Տէր Միքայէլ, որ
առաջ սարկաւագ եղած էր Ճաքուայ առաջնորդարանում։

Կ. Պօլսում հինգ տարի բանդում մնալուց վերջն մի հնարքով ազատուում է Վարազ-Տրդատ և դառնում տուն։ Իսկ իւր որդիքն—Գագիկ և Վարդան 12 տարի մնում են մութ և խոնաւ տան մէջ իբրև պատանդ մինչև Յուստինոս կայսեր գահընկեց լինելն և քիթը կտրելն[1]։ Բայց երբ թագաւորում է Յունաց Վարդան—Փղեպիկոս հայազգի կայսրն, հանել է տալիս այն խաւարային բանդից անմեղ տղայքը Գագիկ և Վարդան, որոց աչքերի տեսութիւնը ծածկած էր խաւարն։ Օր աւուր ընտելանալով լուսին կազդուրուում են. ապա կայսրն ազատում է շնորհելով Գագկայ Կենաց փայտի մասը, որը և Գագիկ բերելով յանձնում է Աղուանից Տէր Միքայէլ կաթուղիկոսին։

704-ին Արաբացոց Մահմետ զօրավարն տանում է Ասորեստան Աղուանից Ճիրոյ իշխանը իւր ամեն ազատանիներով և այնտեղ բանտարկում։

709-ին գալիս է Պարտաւ Արաբացոց Աբդլ-Ազիզ բռնաւորն և նահատակել տալիս Մանկիկ և Մերտազատ եղբայրները, որոց մարմիններն ամփոփուած են Պարտաւի Ս. Գրիգոր մայր եկեղեցում[2]։

714-ին գալիս է Արաբացւոց Մսլիմ զօրավարն Դարբանդ և արշաւում Խազրաց վերայ, բայց առանց ոչինչ անելու հազիւ թէ կարողանում է ազատուիլ թշնամու ձեռքից։ Ապա հաւաքում է և Աղուանից զօրքը՝ քաջ աղեղնաւոր Պատրիկեան Եռանշահիկ Վաչական իշխանի զօրավարութեամբ և

[1] Ղևոնդ պատ. եր. 180։

[2] «Արցախ» եր. 30 և 416։

կրկին արշաւում Խազրաց վերայ, սակայն դարձեալ յաղթուում է Մսլիմ և դառնում կոր 'ի գլուխ։

725-ին խստիւ աշխարհագիր անելով ամեն մարդ և անասուն՝ սահմանում են ծանր հարկ։

729-ին Խազրաց վերայ արշաւում է և Ջառահ, սակայն ապարդիւն։ Միւս տարին Խազրայ թագաւորի որդին սպանում է զՋառահ, ձերբակալում Չազիկը[1]։

731-ին Մսլիմն շինում է Դարբանդի քանդուած պարիսպները, բայց անձեռնմխելի պահում է Աղուանից կաթուղիկոսարանը։ Այստեղ ժամանակակից Ղևոնդն (եր. 40-41) այսպէս է պատմում. «Գումարէր զօրս բազումս և տայր 'ի ձեռս զօրավարին Մսլիմայ... Որոց եկեալ և մարտ եդեալ ընդ զօրս Հոնաց որ 'ի Դարբանդ քաղաքի՝ հարին զնոսա և հալածեցին և քանդեալ աւերեցին զդղեկապարիսպ ամրոցին։ Եւ մինչդեռ քանդէին զպարիսպ ամրոցին, գտին վէմ մի մեծ ի հիմունս նորա, որ ունէր վերնագիր դրոշմեալ օրինակ զայս. «Մարկիանոս ինքնակալ կայսր շինեաց զքաղաք և զաշտարակս զայս բազում տաղանդօք յիւրոց գանձուց. և ի յետին ժամանակս որդիքն Իսմայելի քանդեսցեն զսա և յիւրեանց գանձուց վերըստին շինեսցեն»։ Եւ իբրև գտին զդրոշմ գրոյն, զոր ունէր քարն՝ դադարեցին 'ի քակելոյ զպարիսպն և կացուցեալ զգործավարս 'ի վերայ՝ վերստին շինեցին զկործանեալ պարիսպն[2]»։

35 տարի հայրապետութիւն անելուց յետոյ 735-ին վախ-
ճանում է Տէր Միքայէլ, որդին յաջորդում է Տէր Անաստաս[3] 23

[1] Ղևոնդ Պատ. եր. 101—102 ասում է թէ Խազրաց Թարմաչ զօրավարն Աղուանից երկրովն մտնում է Փայտակարան և աւերում բոլոր գաւառները։ Դիմաւորում է Ջառահ, բայց սպանուում է իւր զօրքով. Յետոյ Թարմաչ յաղթուում է Արաբացիներից։

[2] Գրեթէ նոյնութեամբ կրկնած է հատուածս և Աստղիկ եր. 127։

[3] Դասխուրանցի և Գոչ-Մխիթար անուանում են Անաստաս. Կի-

որ վարում է պաշտօն միայն 4 տարի, իսկ սմա էլ յաջորդում
24 է Տէր Յովսէփ Ա. Ամարասայ առաջնորդութիւնից։

ԽԴ. ԳԼ.

Պարտաւի խլումն.—Նահատակութիւն Արծրունի եղբարց.—Արշաւանք Խազրաց.—Հայրապետական յաջորդութիւն.—Հայոց Տէր Սիօն և Տէր Եսայի կաթուղիկոսներն Աղուանքում.

Զոր օրինակ Ամիրապետներն աթոռանիստ ընտրած էին իւրեանց համար Դամասկոսը, նոյնպէս Արաբացւոց ոստիկաններն աթոռանիստ ընտրած էին իւրեանց համար Պարտաւ քաղաքը, ուր և ազրկաց նման ծծում էին Աղուանից երկրի պարարտութիւնը։ Այդ միջոցներում աւելի են ծանրանում արքունի հարկերն, անտանելի են դառնում տուրքերն, անկարելի է լինում վճարելն, սաստկանում են բռնութիւններն, սովորական՝ նահատակութիւններն, խլւում է Պարտաւ քաղաքն, որից և դուրս քշւում Աղուանից իշխաններն։ Պարտաւում նահատակւում են Արծրունի երկու հարազատ իշխաններ—Սահակ և Համազասպ. երկինք դոգցես սև է մթնում հայատաւանի հասարակութեան գլխին։

Խազրաց Ռաժթարխան զօրավարն ահագին զօրքով գրաւում է Կուր գետի ձախ կողմի գաւառները, որք են Հեճար[1].

րակոս՝ եր. 115 Անանիա. իսկ Ճահխաթունեանցն երկու անձնաւորութիւնն էս նշանակում է իւրաքանչիւրին տալով 4 տարի։

[1]) «Աղուան. եր. և Դր.» եր. 100 Ա. գաւառ։

Քալա[1]). Ոստանի[2]) Մարզպանեան[3]). Հաբանդ[4]) Գեղաւու[5]) Ճաքէ[6]) Բեխ[7]) Խենի[8]) Կամբեխճան[9]) Խողմաղ[10]) և Բաղասական, գերում, աւերում և քանդում (Ղևոնդ Պատ. եր. 132)։

17 տարի[11]) կաթուղիկոսութիւն անելուց յետոյ վախճանում է Տէր Յովսէփ Ա. և գահակալում է Տէր Դաւիթ Բ. որ 25
ազատում է եկեղեցական գրաւուած կալուածները և սպասները. բայց նենգաւորներից սպանւում է մահացու գեղով՝ պաշտօն վարելով միայն 4 տարի։ Ապա գահակալում է Տէր Դա- 26
ւիթ Գ.։ Սա ծախում է եկեղեցական կալուածների մի մասը այլազգիներին։

768-ին Հայոց Տէր Սիօն կաթուղիկոսն, առնելով իւր հետ ականաւոր եպիսկոպոսներ, վարդապետներ, վանականներ և իշխաններ, իջնում է Պարտաւ, գումարում մեծ ժողով՝ արմատախիլ անելու երևան եկած անկարգութիւնները և հաստատելու կանոնական համարուած Ս. Գիրքերը վերստին։ Ժողովը Պարտաւում անելու պատճառն այն է՝ որ այն միջոցին խիստ դժուարին էր և չէր կարողանում Դուինում գումարել ժողովը. այս պատճառաւ ընտրեց Պարտաւը, ուր և հրաւիրեց Աղուանից ամեն եպիսկոպոսներ, վարդապետներ և իշխաններ։ Ժողովն Տէր Սիօն հայրապետի նախագահութեամբ նախ սահմանում է եկեղեցւոյ բարեկարգութեան համար 24 կանոններ,

1)	«Աղուան.	եկ.	և	Դր.»	եր.	100	Բ.	գաւառ.
2)	«	«	«	«	«	100—101	Դ.	«
3)	«	«	«	«	«	101	Ե.	«
4)	«	«	«	«	«	100	Գ.	«
5)	«	«	«	«	«	101—102	Է.	«
6)	«	«	«	«	«	102	Ը.	«
7)	«	«	«	«	«	101	Զ.	«
8)	«	«	«	«	«	103	ԺԲ.	«
9)	«	«	«	«	«	102	Թ.	«
10)	«	«	«	«	«	103	ԺԱ.	«

11) Ըստ Գօշ—Մխ-ի 15 տարի։

յորոց մի քանիսն վաղուց կային, և ապա որոշում է Ս. Գիրքից կանոնական համարուած Ս. Գիրքերը, որք են՝ Մովսիսի Հնգամատեան, Յեսուայ, Դատաւորաց, Չորս Թագաւորութեանց, եայլն (Պատ. Ժողով. Արէլ. եր. 96—99 և Եկեղ. Պատ. Մ. Վ. Մուրատեանց եր. 315)։

9 տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում է
27 Տէր Դաւիթ Գ. և յաջորդում է Տէր Մաթէոս Բ. Կապաղա-
28 կայ առաջնորդութիւնից մի և կէս տարի. Տէր Մովսէս Բ. մի
և կէս տարի.

29 Տէր Ահարոն 2 տարի.

30 Տէր Սողոմոն Ա. կէս տարի.

31 Տէր Թէոդորոս չորս տարի.

32 Տէր Սողոմոն Բ. 11 և կէս տարի.

Հարկերը և միւս ծանրութիւնները թեթևացնելու նպատակաւ Հայոց ժողովրդեան թախանձանքից ստիպեալ Հայոց Եսայի կաթուղիկոսն իւր եպիսկոպոսներով դիմում է Աւբեթլա (Օբեթլա) ոստիկանին, որ նստում էր Պարտաւում, ուր նախ Տէր Եսայի և Տէր Սողոմոն Բ. նզովքից արձակում են տիկին Վարդուհին, որ ապօրինի ամուսնանալուն պատճառաւ բանադրուած էր Աղուանից Տէր Միքայէլ կաթուղիկոսից և Մաքենոցաց վանքի վանահայր Սողոմոնից. և ապա աշխատում են ոստիկանի միջոցաւ բարեփոխել և թեթևացնել տալ հարկերը, բայց ոչինչ չեն շահում (Դասխ. Ի. գլ. և Ասող. եր. 133—134)։

ԽԵ. ԳԼ.

Տէր Յովհաննէս Գ.—Ճիկաքարի պատերազմն.—Վարազ-Տրդատի սպանումն.—Առանշահիկ Ատրներսէհ մեծ իշխան.—Բաքան և քաջն Եսայի իշխան.—Խաղբ-Փատգոսի որդու արշաւանքն.—Գանձակ քաղաքի հիմնարկութիւնն։

—oo—

11 տարի[1]) գահակալելուց յետոյ վախճանում է Տէր Սո-
ղոմոն Բ. որին յաջորդում է Տէր Յովհաննէս Գ. որ կաթուղի- 33
կոսական աթոռը փոխադրում է Պարտաւից Բերդակուր, վասնզի, որպէս ասած ենք, Պարտաւը խլած էին ոստիկաններն և 25 տարի մեծ նեղութեամբ պաշտօն վարելուց յետոյ փոխուում
է առ Աստուած և գահակալում Տէր Մովսէս Գ. միայն վեց ամիս։ 34

821—822 Պարտաւից գաղտարար ելնում են ընտիր արաբ մարդիկ և աւազակօրէն աւարում և կողոպտում Վարանդայ գաւառը, գերի վարում 1000 Հայ մարդ և ամրանում Ճիկաքար բերդում[2])։ Լուսաւորագին հասնում է իւր եղբայրներով և զօրքով Սահլի Սմբատեան Եռանշահիկ տէրն, կոտորում առ հասարակ արաբները և ազատում Հայ գերիները և կողոպուտը։

Տէր Մովսէս Գ-ին տեղակալում է Տէր Դաւիթ Գ. Կապա- 35
ղակայ առաջնորդութիւնից։ Սա օրհնում է Ճարուայ իշխանի չհաս պսակը և յանդիմանուում պսակուողի եղբօրից։

Միննոյն թուին Փիլիպեան Ներսէհ-Դժնդակն[3]) Դատի

[1]) Ոմանք 11 տարի վեց ամիս։

[2]) Բերդիս նկարագրութիւնը տես «Արցախ» եր. 165։

[3]) Դժնդակ կոչուելու պատճառն սորա գործած անլուր չարիքներն են «Ոտք տառապելոց պարաւանդեալ կապեցան 'ի շղթայս երկաթեղէնս ('ի ձեռն Դժնդակիս) վասն որոյ բազումք խորշակահար և հեղձամղձուկ սատակեցան» Օրբել. Ա. Հատ. եր. 202։

վանուց խոր ձորում սպանում է մի ժամում իւր ազգական Վարազ-Տրդատ իշխանը, սորա որդին իւր մօր գրկում և յափշտակում իշխանի բոլոր ինչքը։ Սպանուածի կինն, որ ունենում է միայն մի աղջիկ Սպրամ անուն, այն դառն գիշերում առնում է իւր Սպրամ օրիորդը, տանում Վերին-Խաչէն (այժմ Ծար գիւղաքաղաք բերդ [1]) և ամուսնացնում Առանշահիկ Սըմբատեան Սահլի որդու՝ իշխանաց Ատրներսէհի հետ [2]), որ տիրում էր Ծար, Վերին-Վակունիս և Բերդաձոր գաւառներին [3]). Այնուհետև Ատրներսէհն է լինում մեծ իշխան Աղուանից [4])։

827—837 Պարսիկ Բաբան 150,000 զօրքով հետզհետէ տիրում է Վակունիք, Բերդաձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մուխանք և Տրի գաւառներին [5])։ Աբու-Մուսէ [6]) կոչուած Եսայի Հայ քաջազօր իշխանն, որ Ներսէհ-Դժնդակի Գագիկ որդու որդին էր, յաղթական պատերազմաւ յետ է առնում նոյն բոլոր գաւառները և տիրում իշխանաբար։ Բաբան յետոյ գետեղում է իւր բանակը Ամարասի մօտերքում, յանձնում բանակը Ռոստամ անուն ոմն զօրավարի և ինքն դառնում Պարսկաստան իջնում է պաշարուած բերդից [7]) իւր զօրքով Եսայի քաջ իշխանն և սաստիկ հարուած տալով թշնամուն հալածում Պարսկական բանակը։

836-ին հրամանաւ Ամիրապետին գալիս է Աղուանից երկիրն Խազր-Փատգոսի որդին, առնում երկիրը սրով և գերութեամբ, այրում շատ եկեղեցիներ, դառնում Բաղդատ, կրկին

1) Տես «Արցախ» եր. 404—409:

2) Ձիկաքարի քաջ պատերազմող իշխանի որդու հետ։

3) Տես «Արցախ» եր. 291 «Եւ գաւառք մեր»։

4) Դասխուր. Ի. և ԻԴ. գլ.։

5) Տես «Արցախ» եր. 399—404, 22—28 և 60—134։

6) ՈՃ արաբական, որ նշանակում է հայր Մովսեսի,զոր օրինակ Աբու Բեքր. Աբու Խալիլ, և այլն։

7) Բերդիս նկարագրութիւնը տես «Արցախ» եր. 135 Դ. բերդ։

գալիս արքունի հրամանաւ և գանձով շինում Գանձակ քաղաքը Ճակաշէն կամ Արշակաշէն գաւառում [1])։ Այնուհետև Պարտաւի փոխարէն Ոստիկանանիստ քաղաքն է լինում Գանձակ։

Մայր-Աթոռոյս Ս. Էջմիածնի Մատենադ. թիւ 633 ձեռագ. Աղուանից Պատմութիւնից «Իսկ յերկու ՃՁԶ (=838 փ.) Հայոց բժան (երկոտասան) հեծելոց յանկարծահաս ելեալ 'ի Բախտատա արշաւէին երկիրս Աղուանից։ Անդ ակն 'ի վեր հարեալ Սահլի Սմբատեան, որ յարքայից Զառմիհրական տոհմէն էր, գործակից իւր կալեալ զմեծ նահատակն Գէորգիոս, գիմէ 'ի վերայ որպէս արծուի խոյացեալ 'ի տկար թռչունս, այսր անդր ցրուեալ տապաստ դաշտացն արկեալ վանէր։ Եւ 'ի նոյն ամի նոյն տէրն Սահլի Սմբատեան ձերբակալ արարեալ զապստամբն Բաբան՝ զմարդախողխող, աշխարհաւեր, արիւնարբու գազանն, և ետ 'ի ձեռս Ամիրմոմնայ [2]) և ընդ վաստակոցն առնու յարքունեացն վարձս բարիս, զի առնու իշխանութիւն 'ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար»։ «'Ի սոյն ամի (839) տէրանց տէրն Յովհաննէս, որ Հայոց, Վրաց և Աղուանից եղև տէր, խնդրեաց յարքունեացն կրկին անգամ զԲուլխար Խոյտա Փատգոս երիցս այսոցիկ աշխարհաց» (Նոյն եր. 225)։

28 տարի հայրապետական պաշտօն վարելուց յետոյ վախճանում է Տէր Դաւիթ Դ. որին յաջորդում է Տէր Յովսէփ Բ.։ 36

1) «Արցախ» եր. 35—52 և 416—418, Դասխ. ԻԱ. գլ.։

2) Վարդ. Բարձ. եր. 109, «Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան և առնու յԱփշնէն պարգևս հազարիցս հազար կշիռ արծաթոյ և այլևս հարիւր հազար առնու 'ի նմանէ. և զԲաբանայ կտրեալ զոտս և զձեռս հանէ 'ի փայտ»։

ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽԶ. ԳԼ.

Կարևոր եմ համարում մատնացոյց անել այս տեղ վերոյիշեալ ժամանակամիջոցում իշխող ցեղերը և իշխողաց բնակավայրերը։

Ա. Բուն մեծ իշխանական ցեղի իշխանական շղթայի ծայրի օղակն տիկին Սպրամով կապուած էր բուն Հայկական տոհմի Առանշահիկ կամ Եռանշահիկ իշխանազարմ օղակ Ատրներսէհին, որ բնակւում էր Սիսական-Ոստանում կամ Ծար գիւղաքաղաքում։ Ատրներսէհ շինած էր Հանդաբերդը[1] և ունէր երկու որդի-Գրիգոր և Աբու-Սէթ։ Գրիգոր Ա. շինում է Հաւքախաղաց ամրոցը[2] և իւր իշխանութիւնը տարածում է այն կողմն։ Ատրներսէհիս հայրն—«Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան և առնու յԱփշնէն (Ոստիկանէն) պարգևս հազարից հազար կշիռ արծաթոյ և այլ ևս հարիւր հազար առնու 'ի նմանէ» (Վարդան բարձր. եր. 109)։ Այս ցեղին է պատկանում Վերին-Խաչին, Վակունիս, Սոթ և այլն։

1) «Արցախ» եր. 409 Գ. բերդ։
2) « « 211։

Բ. Բակ իշխանի ցեղն բնակւում էր Ներքին-Խաչեն գաւառում Գեառնաքար կոչուած տեղում։ Ցեղիս էր պատկանում Կաչաղակաբերդ[1] Խոխանաբերդ[2] Նատարին ղալա[3] Աղուանք կոչուած պարիսպն[4] և Ճիլաքար[5]։

Գ. Ճիրանշահանց տոհմն իշխում էր Ջրաբերդ և Մեծ-Կողմանց գաւառներին։ Սոյն ցեղին էր պատկանում Ջրաբերդ և Մայրաքաղաք[6]։

Դ. Վարանդայ, Դիզակ և Բերդաձոր գաւառներն, որ շատ հնուց միշտ պատկանում էին Հայկական տոհմի իշխաններին, Ներսէհ-Դժնդակն, ինչպէս երևում է, կոտորած էր այդ իշխանական ցեղի անդամները և իւրացրած այդ գաւառները։ Որպէս տեսանք վերևում՝ Աբու-Մուսէ քաջ Եսային թոռն էր Ներսէհ-Դժնդակին և տիրում էր այդ գաւառներին։ Այս ցեղն բնակւում էր Տումի գիւղում[7] որին պատկանում էին Դող[8] Դիզափայտ[9] Բրդահոնջին ղալա[10] Ղալին Խութ[11] և Բերդաձոր գաւառի բոլոր բերդերն[12]։ Այս տոհմից էին Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսներն։

Ե. Հայկական-Առանշահիկ տոհմից էին Արցախի Գարդման գաւառի իշխողներն, որոց պատկանում էին Մլգնաբերդ, որ է Գարդման ամրոց և Կեռստավանք[13]։

1) «Արցախ» եր. 197։
2) « « 198։
3) « « 199։
4) « « 198։
5) « « 165 և 197 և 424։
6) « « 222։
7) « « 78—80։
8) « « 83—85։
9) « « 85։
10) « « 134—135։
11) « « 135։
12) « « 401—402։
13) « » 304։

Զ. Հայկական ծագումից էին և Փառիսոսի իշխողներն, որոց պատկանում էին Փառիսոս, Մամռուտ կամ Զարեք, Ճամիրամայ, Ճահ-փեքեար, և այլն բերդերն [1]։

Է. Հայկական ցեղից էին և Ջաւէ (Ղազախ) գաւառի իշխողներն, որոց պատկանում էին գաւառիս բոլոր վանքերն [2]։

Ը. Ջիւանշիրի որդւոց հետագաներն բնակում էին Ճամախու Գարդման գաւառում և իշխում էին Ճամախի, Գարդման և Կոկիսոն (Գեօզ-չայ) գաւառների և բերդերի վերայ [3]։

Թ. Ջիւանշիրի եղբարց յետակայ իշխաններն բնակում էին Ճաքուայ գաւառներում, որք են Կապաղակ, Հողի, Խենի, Կապիճան և Բաղասական և իշխում էին այդ գաւառների բերդերի վերայ [4]։

Ժ. Թագաւորազուններն բնակում էին Պարտաւում, և Ճակաշէն, Կոլթ, Տիգրանակերտ և Ուտի-առանձնակ գաւառներում, որոց պատկանում էին Պարտաւ, Ճամբոր և Հոլաբերդ [5]։

ԺԱ. Թագաւորազունների և Նախարարների միւս ցեղերն բնակում էին Արաժանս (Արաշ) Աղբերդ (Աղդաշ) և Քաղա գաւառներում և իշխում էին Աղբերդ, Հողեայ ամրոց և Ճիլեան բերդերին [6]։

Արաբները չէին կասկածում այնքան դաշտային բերդերում իշխող քրիստոնէից—Աղուանից ժողովրդեան քրիստոնեայ իշխանների մասին, որքան լեռնային բերդերում—Արցախեան Նահանգի բերդերում իշխող իշխանների մասին։ Քանզի Արաբացիք արդէն խրացուցած էին Դարբանդի, Ղուբայի, Լփնաց և Բագուի գաւառներն։

Ըստ ասուլթեան Ասողկան, եր. 107, Հայոց Յ. Թուակա-

[1]) «Արցախ» եր. 58, 324—327 և 357—360։
[2]) « « 392—398։
[3]) «Աղ. երկ. և Դր.» եր. 179, 185—189 և 210—212։
[4]) « « « « 225—229. 253—255, եւայլն։
[5]) «Արցախ» եր. 28 և 60։
[6]) «Աղ. երկ. և Դր.» եր. 284—288։

նին (851)-ին Ջափար Ամիրապետից յղում է Աբուսէթ ոմն, որ չղթայակապ անելով Արցախի Գարդմանի կորիճ, Խաչենի Ատրներսէհ, Աղուանից (Դիզակի) Եսայի և Սևորդեաց Ստեփաննոս—Կոն իշխանները Հայոց իշխանների հետ տանում է Բաղդադ։ Մինչև անգամ նահատակել է տալիս և շատերը [1]։

Սոյն գործողութիւնը Բուղա ոստիկանին է վերագրում նաև Թովմայ Արծրունին, եր. 177—185 և 191։ Գրուածքից երևում է որ այդ ժամանակ զօրեղագոյն դիրք ունէր Դիզակի Եսայի իշխանն միւս բոլոր իշխաններից։ Բուղա ոստիկանն որոնում է նախ Եսայի իշխանը ձեռք ձգել, որ ամրացած է Դող կամ Գտիչ (ըստ Թովմայի Քթիչ) բերդում, վասնորոյ 24 անգամ մղում է սարսափելի պատերազմներ, բայց ամեն անգամ ևս յաղթւում է արաբական զօրքն Աբու-Մուսէ-Եսայի իշխանի զօրքից։ Ապա ոստիկանն ձեռնարկում է խորամանկ միջոցի—այս է Ամիրապետից բերել է տալիս նշանաւոր պարգևներ—որպէս յաղթող զօրավարի վայելուչ ընծաներ Եսայու համար և որի հետ հաստատում է սէր, խաղաղութիւն և բարեկամութիւն։ Այնուհետև նախ հեշտութեամբ կալանաւորում են Եսային և ապա միւսերը և տանում Բաղդադ չղթայակապ։ Ապա սկսում են տանջել և նահատակել անգլուխ մնացած ողորմելի Հայոց և Աղուանից ժողովուրդը։ Բազմաթիւ նահատակուածների յիշատակութեան համար Յովհաննէս պատմաբան կաթողիկոսն սահմանում է տօն կատարել (եր. 162)։

Այդ դառն միջոցին—851-ին 25 տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում է Տէր Յովսէփ Բ. որին յաջորդում է ինքնակոչ Սամուէլ Մեծ-Կողմանց եպիսկոպոսն։

[1]) Դասխ. Գ. Հատ. ԻԱ. գլ.։ Վարդան Բարձրբերդցին իշխանները տանելը վերագրում է Բուղային (եր. 110—111)։

ԴԱՐՁԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Խէ. ԳԼ.

Դարձ իշխանաց։—Երկարատև պատերազմ.—Ինքնակոչն օրէնքի տակ.—Թագաւորներ.—Ինքնակոչ Յովհան.—Հայոց Գէորգ Բ. Կաթուղիկոսն Աղուանքում.—Հայրապետական յաջորդութիւններ.—Մոկացի Անանիա հայրապետի գրաւոր ջանքերն։

863-ին Բաղդադից դառնում են Աղուանից և Հայոց բանդարկուած նախարարներն և իշխաններն, բայց ոչ ամբողջապէս, քանզի նահատակուած էին ոմանք քրիստոնէական հաւատի համար և ոմանք փտանգուած։ Առիներսէհ մեծ իշխանն հասնում է իւր տունն, ուրախանում, ուրախացնում, սակայն վախճանում սակաւ ժամանակից վերջն, որին տեղակալում է իւր մեծ որդին՝ Գրիգոր Ա. որից ծնուում են հինգ որդիք՝ Ապուլի՝ որ սպանանուում է իւր ազգական Սմբատից և Սահակ, որ կոչուում է Սևադա, և ուրիշներ։

Բացուում է երկարատև պատերազմ Ջեխի որդի Ցխսէի և սորա Պարտաւում նստող գործակալ Աբլահատու մէջ, որ կոչուում է Ըմէմիկ, և որն ապստամբած և ապստամբեցրած էր և Կովկասային ցեղերը։ Այս ներքին պատերազմներն օժանդակում են տկարացնել Արաբացոց զինուորական ոյժը։ Արդէն 100,000 զինուոր կորուսած էին Իսմայէլացիք Կ. Պօլսոյ պատերազմում, կորուսանելու էին և այժմ։ Գալիս է Աղուանք Ցխսէն, իւր հետ օժանդակ առած Հայոց Բագրատունի Աշոտ իշխանը Հայոց զօրաց մի մասովն, որին միանում է և Աղուանից հայ իշխանների զօրքերն և 13 տարի մղում են արիւնահեղ կռիւներ, որովք աւելի է տկարանում Արաբացոց զինուորական ոյժն։

Այդ միջոցին Աշոտ Բագրատունի խաղաղասէր իշխանի յորդորմամբ Սամուէլ ինքնակոչն գնում և օծման կալ գը ստանում է Հայոց Գէորգ Բ. հայրապետից և օրինական ճանապարհով գահակալում Տէր Սամուէլ։ 37

Թ. դարն գրեթէ յղացած էր բազմօրեակ թագաւորներով, քանզի ծնում էր զոյգ զոյգ թագաւորներ։ Խորամանկ Իսմայէլացիք հայերը հայոց ձեռնով ջարդել տալու քաղաքականութեամբ, միմեանց ետևից տալիս են թագեր Բագրատունեաց, Արծրունեաց, Աղուանից, Մեծ-Սիւնեաց և Վրաց մեծ իշխաններին և թշնամի յարուցանում ազգ ազգի դէմ, ցեղ՝ ցեղի դէմ և եղբայր՝ եղբօր դէմ։ Թագ է ստանում և Համամ իշխանն և կոչուում Թագաւոր Աղուանից [1]։ Համամիս ծագման մասին Մխիթար Այրիվանեցին, եր. 53, ասում է. «Համամ, որ և Յովհաննէս Բագրատունի»։ Սորանից երևում է որ Համամ Աղուանից իշխաններից չէր, այլ ծագմամբ Բագրատունի ցեղից էր և նոյն տոհմի իշխաններից։

15 տարի [2]) պաշտօն վարելուց վերջն վախճանում է Տէր

[1]) Դասխուրանցի ԻԲ. գլ. Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 43 և Ասող. եր. 161։

[2]) Գօշ-Մխիթ. և Կիր. 15 ամ. Փարիզ տպ. 8 ամ և կէս. Չահնաթ. 17 ամ։

Սամուէլ, որին ինքնակոչ յաջորդում է Յովհան, որ Հայոց կաթուղիկոսարանի եպիսկոպոսն եղած էր։

*Բագրատունի Սմբատ Թագաւորի և Աֆշին ոստիկանի մէջ
ծագած գժտութիւնը և թշնամութիւնը հեռացնելու և հաշ-
տեցնելու համար միջամտում է Հայոց Տէր Գէորգ Գառնեցի
հայրապետն, բայց կալանաւորուում է 893-ին և բերուում Պար-
տաւ։ Աղուանից Համամ Թագաւորն ստանում է Հայոց նախա-
րարների փրկանք յղած գումարը, որի վերայ աւելացնում և
մի գումար իւր կողմից, զորս և վճարելով ոստիկանին՝ ազա-
տում է Տէր Գէորգ կաթուղիկոսը [1]) որից խնդրում է Համամ
Թագաւորն՝ ներել Յովնան եպիսկոպոսի արածը և օծել զինքը
կաթուղիկոս Աղուանից։ Երախտագէտ հայրապետն կատարում
38 է Թագաւորի խնդիրը և օծում Տէր Յովնանը կաթուղիկոս.
որն Թէ ապօրինի և Թէ օրինաւոր 8 տարի պաշտօն վարելով
39 վախճանում է և տեղակալում է Տէր Սիմէօն Բ. որ եպիսկոպոս
է լինում Աղուանից կաթուղիկոսարանին։ Սա աւելի է զարդա-
րում Ս. Խաչը։*

899-ին հրաւիրուում են և Հայոց Յովհաննէս կաթուղիկոսն իւր եպիսկոպոսներով և Աղուանից Տէր Սիմէօն Բ. կաթուղիկոսն իւրայիններով օծելու համար Տաթևի նոր շինած եկեղեցին և հրաշալի սիւնը [2])։

Գրիգոր Ա. մեծ իշխանն շինում է Հաւքախաղաց բերդը և այն կողմն ձգում իւր իշխանութիւնը, որին յաջորդում է իւր որդի Սահակն, որ կոչուում էր Սևադա «Այր քաջ և յաջող. սա առհասարակ տիրեաց Գարդմանոյ (Արցախի) և Քաւսայ և Փառնայ (Փառիսոսի) գաւառաց, այլև աւագակաց Ձորագետոյն բովանդակ եղև իշխան և խնդրող իսկ գրագիտութեան և դպրապետս 'ի տան իւրում կարգեաց, ընդ որում և

[1]) *Դասխուր. ԻԲ. գլ. Յով. կաթուղիկոս եր.* 210—215։
[2]) *Օրբել. Ա. Հատ. եր.* 271—273։

բազմազան հնարիւք Թագաւորն Հայոց Սմբատ մարտուցեալ՝ ոչ ինչ կարաց սաերիւրել զնա 'ի կամս իւր»։ Սահակ Սևադայից ծնուում են երկու որդիք—Գրիգոր և Դաւիթ։ Գրիգոր Բ. մեծ իշխանս տեղակալում է իւր հօր և ծնում զՍևադայ, որ կոչուում էր իշխան և Առնէրսէհ և Փիլիպպէ։

*21 տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում
է Տէր Սիմէօն Բ. որին յաջորդում է Տէր Դաւիթ Ե. Փառի- 40
սոսի առաջնորդութիւնից, 6 տարի [1]) պաշտօն վարելով վախ-
ճանում է, և ինքնակոչ յաջորդում է Մեծ կողմանց Սահակ
եպիսկոպոս, որ միաբանելով Մեծ-Սիւնեաց Յակոբ մետ-
րապօլտի հետ, միասին ապստամբում են Մայր-Աթոռ Ս.
Էջմիածնի դարաւոր սրբագործուած իրաւանց դէմ.—մինչդեռ
ցայն վայր Մեծ-Սիւնեաց եպիսկոպոսներն միշտ ձեռնադրու-
ում էին Հայոց հայրապետներից և սրբալոյս մեռոնը ստանում
նոյն հայրապետներից, ընդհակառակն այդ միջոցին ձեռնադր-
ւում էին Աղուանքում, որից և տանում միւռոնը։ Աղուանից
եպիսկոպոսներն կաթուղիկոսական օծումը միշտ ստացած էին
Հայոց հայրապետից. սակայն մի քանի վերջին ինքնակոչներ
խանգարեցին այդ պապենական կարգը և անցանելով որոշեալ
սահմանից գործեցին անկարգութիւններ։ Բայց յայդցանէ այդ
Դաւիթ և Յակոբ սկսում են, հակառակ զաւանութեան Հա-
յաստանեայց եկեղեցւոյ, խմորել և պղտորել իւրեանց իշխան-
ները և ժողովուրդը և քանդել նախկին կարգերը։*

Տէր Անանիա Մոկացի Հայոց հայրապետն՝ երկար գրագրութիւններով շատ աշխատում է յուղղութիւն ածել այդ ապըստամբները, սակայն անյաջող է անցնում իւր ջանքերն։

---

[1]) *Էմին «Տէր Դաւիթ ամս 6». Ջահնազ.* 6. *Գօշ-Մ. «ամս ԼԵ.* (35). *Կիր. ամս* 5։

ԽԸ. ԳԼ.

Համամ Թագաւորի գործերի մասին։

—∞—

Արդէն իմացանք որ Թագաւորս ծագմամբ Բագրատունի ցեղից էր. որոշակի յայտնի չէ թէ որ ճիւղից էր։

Դասխուրանցին, ԻԲ. գլխում ասում է, «Ապա բարեպաշտն Համամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տան Աղուանից նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի զՀայոց թագաւորութիւնն [1]). այսք 'ի միում ժամանակի գործեցան։ Եւ նոյն ինքն Համամ սակս առ Աստուած մեծապէս յանցանացն, որ վասն մնոտի այսր կենացս զպարտ արեան եղբօրն ժողովեաց յանձն իւր, մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարօտեալս և չքաւորս առատազուարթ անսպառ կատարէր, որ և զմեծ հայրապետն Հայոց Գէորգ յանօրէն Տաճկաց կապանէն բազմարաշխ գանձիւք տայր արձակել և յոգնամեծար զնա արարեալ՝ առոյց առ Հայաստանեայս առաքէր»։ Այդ խօսքերից երեւում է որ Համամ սպանած է իւր եղբայրը և յետոյ զղջալով սկսած է գործել առաքինութիւն—ողորմել տնանկաց և կարօտելոց՝ իւր մեղքերը քաւելու համար։

Պարոն Կարապետ Կոստանեանցն (հիմնուելով Մխիթար Այրիվանեցու «Համամ, որ և Յովհաննէս Բագրատունի» խօսքի և Ասողկան Երր. Հանդ. Բ. գլ. «Եւ Համամ Արեւելցի, որ զմեկնութիւն Առակացն գրեաց և Յոբայ զՈվ է դայն թարգմանեաց և զօրհնութիւնսն, որ 'ի գլուխս Սաղմոսացն ասացեալ, և այլն» և Վարդան Բարձ. եր. 117) հետեւցնում է թէ

---

[1]) Ասող. եր. 161. Մ. Օրբել. Բ. Հատ. եր. 42—43։

Համամ, թողլով թագաւորութիւնը՝ վարդապետ ձեռնադրուած լինելու է Յովհաննէս անուամբ, որ գրած է

Ա. Մեկնութիւն առակաց Սողոմոնի.
Բ. « Յովբայ «Ո՞վ դա».
Գ. « Կանոնագլուխ սաղմոսների.
Դ. « ՃԺԸ. Սաղմոսի «Երանեալ են ամբիծք».
Ե. Հայոց Պատմութիւն (գտնուած չէ ցարդ).
Զ. Շարական, և
Է. Քերականի վերլուծութիւն։

«Շարականի տների գլխատառերն յօդում են հեղինակի անունը՝ Համամ»։

Շարական Համամայ.

«Հա՛յր երկնաւոր, անկանիմ առաջի անոխակալ, և այլն։
Արք անաւրէնք կոչեցին զիս հաղորդել արեան մահու, և այլն։
Մեծ են յանցանք իմ, Տէր, զոր գործեցի յահէ մահու հրամանաւ Իսմայէլեան բռնաւորին երագեցի հեղուլ զարիւն եղբաւրն. աղաչեմ զքեզ։
Աստուած ապաւէն և լոյս դարձելոյս 'ի քեզ և այլն։
Մեղա՛յ, Տէր, մեղայ Մանասէի ձայնիւ գոչեմ...»։

(Արարատ ամսագիր 1897 ամի եր. 169—176)։

Յայտնի չէ մեզ թէ երբ վախճանած է Համամ թագաւորն կամ Յովհաննէս կրօնաւորն, միայն յայտնի է որ Համամ թագաւորի և իւր թագուհու գերեզմաններն գտնուում են Արցախի Վարանդայ գաւառի Աւետարանոց աւանի Հին-Հանգստարանում։ Թագուհու տապանաքարն չունի արձանագրութիւն. այլ միայն թագուհու պատկերն քանդակուած է քարի հարաւահայեաց երեսին։ Երևի թէ մաշուած է եղել թագաւորի շիրմաքարն, որը Մասուն անուն ոմն փոխելով ձգած է 1241—1242-ին նոր շիրմաքար, որի արձանագրութիւնն կար-

դացուում է խիստ դժուարութեամբ, որ է «'Ի ՈՂ.. Ննճեց Հա.. Թագաւոր Աղվց (Աղուանից)... ես տէր Մաստն գրեցիք, այս ով որ կարդէ (կարդայ) Աստուած ողորմի ասէ [1]):

ԽԹ. ԳԼ.

Ատրներսէհ Թագաւոր Աղուանից.—Գագիկ ինքնակոչ.—Յունան կամ Յովհաննէս Դ.—Մոկացի Անանիա կաթուղիկոսն Աղուանքում.—Մեծ ժողով.—Դաւիթ Զ.:

—∞—

Գրիգոր Բ. մեծ իշխանի որդի Ատրներսէհ ամուսնանում է Համամ Թագաւորի դստեր հետ և թագաւորում Արցախի վերայ՝ իւր աթոռանիստը միշտ պահելով Սիսական-Ոստան-Ծար ամրոցում: Նշաններից երևում է որ Ատրներսէհ թագաւորս գրասէր եղած է Սահակ-Սևադայի՝ իւր պապի նման [2]): Ատրներսէհ Թագաւորն վախճանում է, որին յաջորդում է Իշխանակ Թագաւորն իւր որդին:

18 տարի (Գոշ Մ. 25) յամառութեամբ գահակալելուց յետոյ վախճանում է Սահակ Բ. որին տեղակալում է իւր հարազատ եղբայր ինքնակոչ Գագիկ: Անանիա հայրապետն յուշ

---

1) «Արցախ» եր. 98: Գրողի անհմտութեան պատճառաւ սխալ է ՈՂ. Թուականն և Ննճեցն, քանզի այս թուականն վերաբերում է ոչ եթէ Համամի մահուան, այլ երկրորդ տապանաքարի ձգած տարեթուին:

2) «Տիրանայ վարդապետի Հայոց՝ պատասխանի հարցմանց Թագաւորացն Աղուանից՝ Ատրներսէհի և Փիպէի» (Փիլիպպէի): «Հալածեալ շրջեցայ քաղաքէ 'ի քաղաք 'ի կողմանս արևելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ (Սևադա) երթեալ առ թագաւորն նոցունց Ատրներսեհ» (Յով. կաթ. եր. 273):

է ածում Աղուանից իշխաններին Գագկայ անկարգութիւնը և ընդունուած կանոնի դէմ գործած զեղծումը: Օրինական կարգաւ ընտրուում է Յունան կամ Յովհաննէս, որ օրինասահման 42
ճանապարհաւ օծումը ստանում է Հայոց Տէր Անանիա հայրապետից և հովուում իւր բանաւոր հօտը: Այսուամենայնիւ Գագիկ դարձեալ մնում է անհնազանդ, խոտոր և խռովարար:

Այս անկարգութեանց վերջ տալու համար Տէր Անանիա Մոկացին իւր գիտնական եպիսկոպոսներով, վարդապետներով և վանականներով միասին՝ գնում է Խաչէն գաւառն: 'Ի պատիւ հայրապետիս դիմաւորում է Գրիգոր Բ. մեծ փառաւոր և ծերունազարդ իշխանն իւր եպիսկոպոսներով, վանականներով և բազմաթիւ եկեղեցականներով միասին և իւր ապարանում հիւրասիրում է Հայոց հայրապետը իւր հոգևորականներով հանդերձ: «Եւ նոյն ժամայն հրովարտակս գրէր յամենայն գլխաւորս աշխարհին՝ առնուլ հրաման՝ առնել ժողով հանդերձ մեօք 'ի տան իւր 'ի Խաչեան գաւառի» [1]):

Հաւաքուում են Արցախից և Մեծ-Սիւնիքից, «Գագիկ կարծեալ կաթողիկոսն,

Եւ Պետրոս 'ի նմանէ ձեռնադրեալն էր Գարդմանայ եպիսկոպոս (ո՞ր Գարդման).

Հայր Դաւիթ փառխոսայ վանական.

Հայր Պետրոս Կովախեղդի վանական.

Հայր Մանաճիհր՝ Ցովսէփու վանից վանական.

Հայր Գրիգորէս Նորավանից վանական.

Հայր Սիմէովն Խանդոնկան վանից վանական.

Եւ Սամուէլ երէց Սենեքերիմայ դրան քահանայ.

---

1) Ըստ Գէորգեան ցուցակի թ. 100 ձեռագիր մատենադարանի Սրբոյ էջմիածնի եր. 221-բ. 230-բ. «Տեառն Անանիայի» և տպագրեալն 1897 ամի Արարատ ամսաթերթի մարտ ամսում եր. 129—144:

Եւ Սուփան՝ Յողջագուրայ սուրբ Անանիանց քահանայ.
Եւ Գրիգոր իշխանի կողմանէն
Տէր Յովհաննէս Ալթախա եպիսկոպոս.
Տէր Յովհաննէս Մաքենոցայ եպիսկոպոս.
Տէր Միսայէլ [1]) Ճիկաքարի վանական.
Տէր Սարգիս Գանձասարու վանական [2]).
Հայր Մանուչակ Խաչինոյ վանական.
Հայր Պաւղոս Խանդին վանից վանական.
Հայր Գէորգ Ոսկէվանից վանական.
Հայր Արտավազդ Այծաքարայ վանական.
Եւ Սահակ քահանայ գիտնական, որ կոչի Դարբնորդի.
Եւ Վարդան քահանայ.
Տիրանուն և Պետրոս և Պաւղոս գրան քահանայք.
Հայր Ստեփաննոս, որ կոչէր Քերական։

Սոյն ժողովում մերժուում են թէ ինքնակոչ Գագիկ և թէ Յունան օրինաւոր կաթուղիկոսն. ըստ որում ժողովն խոստանում է կատարել նոր ընտրութիւն և նոր կաթուղիկոսացու։ Հանգամանքից այնպէս՝ է երևում, որ ինքնակոչներն երկար ժամանակ առարկելով պատճառաբանած են թէ նախահաւատ է Քրիստոսին Աղուանից եկեղեցին քան Հայոցն, այսինքն է Եղիշ առաքեալն առաջ է քարոզել Աղուանքում քան Թադէոս և Բարդուղիմէոս՝ Առաքեալք Հայաստանում։ Անանիա հայրապետն, կամենալով այդ առարկութիւնը ստուգել Կաղանկատուացու պատմութիւնից, գրում է. «Խնդրէաք 'ի նոցանէ զՊատմութիւն Աղուանից՝ ուսանել զսկիզբն լուսաւորութեան նոցա, թէ զինչ պատճառաւ, քանզի ոմանք (ինքնակոչներն)

---

[1]) Թուցէ սա՝ է իմաստասէր կոչուած Աղուանից Միսայէլ եպիսկոպոսն կամ յետոյ ձեռնադրուած է եպիսկոպոս։

[2]) Այժմեան վանքի տեղում անկասկած Գանձասար անուն եղած է, ինչպէս երևում է։

այսր անդր արծարծէին ունել զլուսաւորութիւն տանն Աղուանից նախագոյ լեալ քան զՀայոցս.... Եւ ոչ ետուն մեզ տեսանել, քանզի ցուցանէր զտունն Աղուանից՝ արքեպիսկոպոս և զտունս Հայոց՝ պատրիարգ, և զառ ինքեանս գիտելով զմասն խոնարհութեան՝ գրաւեալ գաղէին զՊատմութիւնն Աղուանից [1])»։ Մի բարեպատեհ դիպուածով Անանիա հայրապետի ձեռքն է ընկնում նոյն Պատմութիւնն, անհաւանական չէ ասել նոյն իսկ ընագիրն, վասն զի երկար ժամանակ անկարող եղած է հայրապետս ձեռք բերել գէթ մի օրինակ նոյն պատմութիւնից։ Որից քաղելով հաստատում է հայրապետս նախ թէ Ս. Լուսաւորչի օրից սկսեալ՝ Աղուանից կաթողիկոսներն կանոնաւոր կերպով ընտրուած են իւրեանց հասարակութիւնից և իւրեանց օծումը ստացած Ս. Էջմիածնի կամ Հայոց հայրապետներից, և ոչ թէ «անճամբ կաթուղիկոս» որպիսի են Յունան, Սիմէօն, Դաւիթ, Սահակ և Գագիկ։ Երկրորդ՝ թէ Ս. Լուսաւորչի հետագայ հայրապետներն՝ միշտ հսկած և արմատախիլ արած են Աղուանքում նշմարուած աղանդները և անկարգութիւնները, ինչպէս Եղիա, Գէորգ, Սիոն և այլն։ ՃԼԷ (137) տարի անխախտ տևեց Հայոց և Աղուանից միաբանութիւնն ԺԴ (14) հայրապետների ժամանակ մինչև Հայոց Տէր Գէորգ հայրապետի օրն [2])։

---

[1]) Պարզ երևում է որ այն ինքնակոչներն երկար ժամանակ թաքցրել և գաղած պահել են Կաղանկատուացին, որպէսզի չխայտառակուէին իւրեանց տարածած ստութիւններն։ Թերևս այս իսկ է պատճառն որ շատ ուշ ընդօրինակուած և տարածուած է Կաղանկատուացին, վասն որոյ համարում են պնդելով ոմանք թէ Ժ. դարու պատմիչ է Մովսէս և ոչ Է. դարու։

[2]) Տէր Անանիա հայրապետի ձեռքն ընկած Կաղանկատուացու պատմութեան ձեռագիրն զգալի տարբերութիւններ ունի տպագրուածներից։

Ապա ասում է Մոկացին, 'ի միջի այլոց գրելով. «Յայսմ ամի ՆԷ. (958-ին) զրաւ արար Տէր երկոցունց Ներհակացն, զի բարձաւ կրճիմն, որ կայր 'ի տանն Աղուանից և 'ի տան Սիսական, և մեռաւ Գագիկն՝ կարծեալ կաթուղիկոսն և ապարասանն Յակովբ» [1]։

'Ի վերջոյ գրում է հայրապետս. Տէր «Ծագեաց 'ի սիրտս հզօրացն Աղուանից, 'ի թագաւորն, որ կոչէր Իշխանակ՝ որդի տեառն Աստներսեհի, և Սենեքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի [2]) և Նորին ամուսնոյ և քեռ նորին, և տեառն Սենեքերիմայ՝ որդոյ Գրիգորի Խաչեան իշխանի, և տեառն Վաչագանայ Գորոզուաց իշխանի և տեառն Գուրգենայ Արևելեայ իշխանի և այլ բազում մեծամեծաց... ընտրեալ զայր մի հոգևոր և առաքելաշան և ծերական ալեօք պատուեալ՝ Դաւիթ անուն Խոտակերից վանական և առաքեն 'ի Ձիրակ գաւառ»։
43 Վերջապէս Տէր Անանիան ձեռնադրելով յետ է յղում զՏէր Դաւիթ Զ. փառաւոր շքով։

---

[1]) Գրեթէ նոյնութեամբ կրկնուած է գլխիս բովանդակութիւնն, Ս. Օրբել. ԾԲ. գլխում։ Մեծ-Սիւնեաց Յակովբ եպիսկոպոսի մասին տես Կիր. եր. 47—48։

[1]) Կարևոր համարեցինք մէջ բերել սոյն գլխում յիշուած ամեն հոգևորականների, վանքերի և իշխանաց անունները, որովք բացադրուում են պատմութեանց ինչ ինչ մութ կէտեր։ Քանզի մինչև ցարդ ոչ ոք ստուգիւ գիտէր թէ Իշխանակ թագաւոր եղած է. երկրորդ՝ շատ հեղինակներ սխալուած են Սենեքերիմը միայն մի անձ համարելով։ Ա. Սենեքերիմն Փառիսոս քաղաքի և գաւառի իշխանն է (Ասող. եր. 283)։ Բ. Սենեքերիմն Գրիգոր Բ. իշխանի որդին է։

Ծ. ԳԼ.

Փիլիպպէ Թագաւոր Աղուանից.—Արաբացւոց անյայտանալն.—Աշոտ-Ողորմածի օծման հանդիսի առթիւ.—Քրիստոնէութեան վերանորոգումն.—Տէր Յովհաննէս Դ. վերստին հայրապետ Աղուանից—Գուրգէն Թագաւոր Աղուանից արևմտեան մասին.—Տէր Պետրոս կամ Պեղենոս Ա.։

Գրիգոր Բ. մեծ իշխանի որդի Փիլիպպէն անցնում է Կուր գետի ձախ կողմն, տարածում իւր իշխանութիւնը Ճաքուայ և Ճամախու գաւառների վերայ և թագաւորում։ Շինում է Կովկաս մեծ սարի հարաւահայեաց լանջի վերայ Կապաղակ գաւառի վերնամասում 2 ամրոցներ, որք այժմ կոչուում են իւր անուամբ Փիլիպլու («Ալ. երկ. և Դր.» եր. 257—258 ԻԶ. և ԻԷ. բերդեր)։

6 տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում է Տէր Դաւիթ Զ. և տեղակալում է վերստին Տէր Յովհաննէս Դ։

Անյայտանում են Իսմաէլացիք աւերակ թողլով Աղուանից երկիրը։ Խաղաղանում են բնակիչներն, շնորհիւ անխոնջ ջանից Տէր Յովհաննէս կաթուղիկոսի, Փիլիպպոս թագաւորի և Սենեքերիմ իշխանաց իշխանի [1]) շինուում և Նորոգուում են եկեղեցիներ և վանքեր և բերդեր. դառնում են Ս. եկեղեցու ծոցն բռնի մահմետականացեալներն. օրըստօրէ բազմանում են եպիսկոպոսներ, վարդապետներ, քարոզիչներ. վասն որոյ հետզհետէ ծաղկում են ուսումնարաններն, յաճախում են քարոզներն, ամրապնդուում է Քրիստոնէական հաւատն։ Փիլիպպոս թագաւորն այնուհետև իւր իշխանութիւնը ձգում է մինչև Դար-

---

[1]) «Մի ումն յիշխանացն Աղուանից՝ Սենեքերիմ անուն... որ զկնի սուղ ինչ ժամանակի եղև պատճառ լուսաւորութեան աշխարհին Աղուանից և քարոզ ճշմարտութեանն» (Մոկացու նոյն թղթում)։

բանդ, որի մէջ և հաստատում իւր թագաւորութեան աթոռը՝ նոյնպէս աջակցութեամբ Սենեքերիմ իշխանաց իշխանի և պայծառացնում այն կողմի բոլոր գաւառները:

961—962-ին Աշոտ ողորմածի օծման հանդէսին փայլ տալու նպատակաւ «Հարկաւորեալ կոչեցին զամենազովելի զՏէր Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից աշխարհին և քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա. և մեծաշուք իշխանութեամբ կոչեցին զՓիլիպպոս թագաւորն Աղուանից զայր աստուածային և զսուրբ [1])»:

965-ին սոյն Տէր Յովհաննէս կաթուղիկոս դարձեալ գտնւում է Անի քաղաքում Վահան կաթուղիկոսի ընտրութեան ժողովում [2]) և ձեռնադրութեան:

972—973 թուերին, որովհետև Աղուանից Փիլիպպոս թագաւորում էր Պարտավում. իսկ Աշոտ ողորմածի փոքր որդին՝ Գուրգէնն թագաւորում էր Ձորագետում և իշխում էր Աղուանից երկրի արևմտեան մասին—Ձաւէ գաւառին (այժմ Ղազախ). վասն որոյ Մատթէոս Ուռհայեցին, եր. 17, շփոթութիւն չպատճառելու նախազգուշութեամբ ապագային, այնուհետև անուանում է «Թագաւոր Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն»: 973—1085 թուականն որովհետև Գուրգէն, Դաւիթ և Կիւրիկէ թագաւորներն հետզհետէ տիրած էին Աղուանից Քաւս կամ Քուստի և Փառիսոս և Գարդման և Կողթ գաւառներին [3]). վասնորոյ նոյն Ուռհայեցին, եր. 231, [4]) բոլորովին պարզում է խնդիրը՝ մատնացոյց անելով և թագաւորաց անունները և թագաւորանիստ քաղաքների անունները՝ գրելով. «Թագաւորք Աղուանից Գագիկ (Գուրգէն) և Դա-

1) Մատ. Ուռ. եր. 3—5:

2) Ասող. եր. 181 ՆԺԴ.=966-ին: Մատ. Ուռ. եր. 40 ՆԻԵ=976:

3) Ս, Օրբել. Բ. Հատ. եր. 44:

4) Ս. Երուսաղէմու տպ. եր. 278—279:

ւիթ և Կիւրիկէ, որք նստէին յայժմուս 'ի Լօռէ քաղաքն Հայոց: Էին և այլ թագաւորք Հայոց 'ի Պարտաւ աշխարհին, որ ասի Կապանք սահմանակից Օղայ և Աղուանից, որք էին թագաւորք անարատք և սրբակրօնք, որք յիշատակին 'ի սուրբ պատարագն ընդ այլ աստուածասէր սուրբ թագաւորացն որոց էին անուանք այսոքիկ Վաչական և Գուշակտակ նորին որդի, Փիլիպպէ որդի Գուշակտակին, Սևադա որդի Փիլիպպէի, Սենեքերիմ որդի Սևադայի. Գրիգոր որդի Սենեքերիմայ, որ դեռ ևս կենդանի էր մինչև գրէաք զայս մատենագրութիւնս մեր» [1]): Ինչպէս Հրէայք «Որդի Դաւթի» էին անուանում Փրկիչը, նոյնպէս գրող աշակերտ Ուռհայեցին բարեպաշտ Վաչականի որդի է անուանում Գրիգոր Բ. մեծ իշխանը, Գուշակտակ ասելով, ինչպէս և Գուրգէնը Գագիկ կոչելով:

Հաստատ գիտենք պատմութիւնից, որ Գրիգոր Բ. մեծ իշխանից ծնուած էր Փիլիպպոս թագաւորն և իւր իշխանութեան թագաւորանիստը հաստատած Պարտավում: Հետևելով Ուռհայեցու պատմածին՝ երևում է որ 961—1085 թուականն Փիլիպպոս թագաւորից ծնուած է Սևադա, Սևադայից ծնուած է Սենեքերիմ, և Սենեքերիմից՝ թագաւորից՝ Գրիգոր թագաւորն:

Տէր Յովհաննէս Դ.-ին յաջորդում է Տէր Պետրոս Ա. 44
Գարդմանի (որ Գարդմանի-չգիտենք) առաջնորդութիւնից:

1) Մեր հեղինակած «Քննադատութիւն Քննադատութեանց»ի մէջ ընդարձակ բացատրած ենք համեմատելով սոյն թագաւորաց անունները Բաղաց թագաւորաց հետ:

ԾԱ. ԳԼ.

Դելմն ցեղի և Ռուսաց արշաւանքներն.—Տէր Մովսէս Փառիսոսցի.— Խաչենի, Փառիսոսի, Դարբանդի և Զորագետի թագաւորներն.—Տէր Մարկոս այր Աստուծոյ:

Անակնկալ արշաւում է Պարտաւի վերայ Դէլէմէնկ[1]) կոչուած ցեղն՝ Սալար անուն ումն զօրավարի առաջնորդութեամբ և գրաւում քաղաքը խսկոյն:

Նոանից մրրկի պէս հասնում է Ռուսաց զօրքն և հալածում Դէլէմէնկները. մտնում է սարսափելի սրածութեան Պարտաւ քաղաքն, անկարող լինելով դիմադրել անսպասելի խուժմանց: Ռուսներն վեց ամիս մնալով անխնայ կոտորում են կիները և մանուկները, ապա կողոպտելով քաղաքը դատարկում են և հեռանում:

16 *տարի*[2]) *գահակալելուց յետոյ վախճանում է Տէր Պետ-*
45 *րոս Ա. որին յաջորդում է Տէր Մովսէս Դ. Փառիսոսի վանքի*
վանահայրն. կարևոր ենք համարում յայտնել այստեղ մի քանի
հարկաւոր տեղեկութիւններ, որք են. Նախ՝

Այդ միջոցներում Խաչենում թագաւորում էր Իշխանակ թագաւորն, Փառիսում թագաւորում էր Սեննեքերիմ թագաւորի եղբայր Գրիգորն, որոյ քոյրն Կարուց Մուշեղ թագաւորի կինն էր[1]), *Դարբանդում թագաւորում էր Փիլիպոս թագաւորի որդի Սևադան և Զորագետում Գուրգէն:*

Երկրորդ՝ վաղուց արդէն խնամէական կապ հաստատուած էր Աղուանից և Բագաց իշխանական տների մէջ: Վարագ-Տրդատի դուստր Ճահանդուխտն հարս տարած էին Մեծ-Սիւնեաց մի իշխանի համար (Ս. Օրբել. ԼԶ. գլ.) Ջիւանշիր իշխանն ամուսնացած էր Արուեծան տոհմից Խոսրովանուշ օրիորդին հետ: Սևադա մեծ իշխանի դուստր Ճահանդուխտը հարս տարած էին Մեծ-Սիւնեաց Սմբատ իշխանի համար, որ ստանում է թագ շնորհիւ Աղուանից իշխաններին (Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 43):

Մեծ-Սիւնեաց Տարսայիճ իշխանի դուստր Սոփան հարս բերած էին Թօփեան Գրիգոր իշխանին համար, և Մամքանը՝ Ջալալ-Դօլայ մեծ իշխանի համար, զորս տեսնելու ենք յետոյ:

Մեծ-Սիւնեաց Գրիգոր թագաւորն կին առած էր Աղուանից Սևադայ իշխանի դուստր՝ Ճահանդուխտը, բայց անզաւակ լինելու պատճառաւ բերում են Ճահանդխտի թագաւորազն Սեննեքերիմ եղբայրը և որդեգրում, որ լինում է ամենալաւ և գովելի թագաւորն. (Ս. Օրբել. ԾԹ.):

Երրորդ՝ առանձին Սեննեքերիմ և Գրիգոր թագաւոր եղբայրներ գահակալած են Արցախի Փառիսոս քաղաքում[1]) *և Փառիսոս բերդում մօտաւորապէս* 970—1004 *թ[ւին]*[2]):

Փիլիպոս թագաւորի թոռն Սեննեքերիմ և Ծոռն Գրիգոր թագաւորներն գահակալած են Դարբանդում մօտաւորապէս 1000—1085 *թուականն (Ուռհայ. եր.* 279):

Ճահանդխտի եղբայր Սեննեքերիմ թագաւորն և իւր որդի

---

[1]) *Մարաց ցեղի մի մասն ապստամբելով Արաբներից ամրացած էր Դէլն կամ Դէլումն քուրդ ժողովրդեան մէջ, որ բնակում էր Կասպից ծովի հարաւային լեռներում Գովզան գետի ափերում, որ հոսում է Կասպից ծովն: Այս քրդերն շատ տարիներ առաջ արշաւած էին հիւսիսային ցեղերի վերայ (Սեբ. եր.* 230—232. *Թով. Արծր. եր.* 302—303: *Այս է ահա Դէլէմէնկ կոչուածն:*

[2]) *Կիր. «Ամս վեշտասան». Գօշ-Մխ. ԺԲ. «Սորա 'ի կենդանութեան հրաժարեալ յաթոռոյն՝ յաջորդէ յաթոռ իւր զՏէր Մովսէս՝ վանական Փառիսոսոյ»:*

[1]) *Ասող. եր.* 198:

[2]) *Տես «Արցախ» եր.* 306—307 *և* 324—325:

[3]) *Ասող. եր.* 283:

Գրիգոր թագաւորն թագաւորում են Մեծ-Սիւնեաց Բաղաբերդում 1059—1167 (Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 60—81)։

Թէ որքան որոշակի նշանակուած են այս երեք հոմանուն թագաւորների անունները, գահակալած քաղաքների և բերդերի անունները և թագաւորութեանց ժամանակները, կամ ժամանակամիջոցները, աւելորդ է այս մասին խօսելն։ Այսու ամենայնիւ քանի՜ քանի՜ բանասէրներ և քննադատներ չարաչար սխալուած են այդ երեք Սենեքերիմ և Գրիգոր թագաւորները շփոթելով միմեանց հետ, կամ լաւ ևս է ասել՝ նոյնացնելով։

Այժմ պարզ է ամեն ինչ։

Տէր Մովսէս Գ. 6 տարի հայրապետութիւն անելով, վախ-
46 ճանում է, որին յաջորդում է Տէր Մարկոս Ա. այր Աստուծոյ։

ԾԲ. ԳԼ.

Դաւիթ անհողին և Գագիկ Ա. թագաւոր Բագրատունի.—Դաւիթ-Անհողին թագաւոր և Փալտուն ամիրա.—Վախճան Փառիսոսի Սենեքերիմ և Գրիգոր թագաւորաց.—Տէր Յովսէփ Գ.—Սելջուկների ծագումն և զօրանալն.—Պետրոս Գետադարձ կրկին կաթուղիկոս Հայոց.—Ապուսուարի արշաւանքն.—Գրիգոր իշխան Փառիսոսի.—Մամկին Պարսիկ.—Փալտնի արշաւանքն.—Գանձակի գրաւումն.—Տէր Մարկոս Բ.։

Կիւրիկէն թագաւորի որդի Դաւիթ-Անհողին թագաւորն՝ իւր Սմբատ եղբօր հետ միասին տիրում է Տաշրաց և Վրաց դաշտի կողմերին. պատրաստում է իւր համար ամրանիստ Ճամշուլտէ մեծ քաղաքանիստ դղեակը (Զուլավերի կողմը), փութով տիրում է և Դմանեաց (Վրաստանում) քաղաքին, հնազանդեցնում է և Տփխիսի ամիրան իւր քաղաքովն։ «Եւ 'ի պատանեկութեան տիս պատանի եղեալ (Դաւիթ) չնորհաշուք հասակաւ և վայելչութեամբ՝ իմաստնայր հանճարով, հաճոյ Աստուծոյ և մարդկան, արիացեալ քաջութեամբ, քաջազօր զօրութեամբ յաղթող եղեալ ամենայն հակառակորդաց իւրոց։ (Ասող. եր. 256—257)։ Իսկ 279—280 նոյն պատմաբանն ասում է. Դաւիթ-Անհողնի անհնազանդութեան պատճառաւ Բագրատունի Գագիկ Ա. թագաւորն յարձակում է Դաւիթ-Անհողնիս սահմանների վերայ՝ աւերում և քանդում է բոլոր գաւառները, ապա Հայոց Սարգիս կաթուղիկոսի միջնորդութեամբ հաշտուում են Գագիկ և Դաւիթ թագաւորներն՝ վերջնոյս հնազանդութիւն խոստանալովն։

Գանձակի Փալտուն ամիրան աճապարում է պատերազմել Կիւրիկէն թագաւորի որդի Դաւիթ-Անհողին թագաւորի հետ 990 թուին, բայց Դաւիթ թագաւորի զօրաց ուժգին յարձակումից սրախողխող և գետաւէժ են լինում Փալտնի զօրքերն և ինքն Փալտունն հազիւ ազատուում է մազապուր փախչելով. (Ասող. եր. 156—157)։

1004-ին վախճանում են Փառիսոսի երկու թագաւոր եղբարք՝ Սենեքերիմ [1]) և Գրիգոր, որք Հայկական Առանշահիկ ցեղի Գեսումեան տոհմից էին, որի գաւառները իւրեանց մէջ բաժանում են Գագիկ Բագրատունի թագաւորն և Գանձակի Փալտուն ամիրան (Ասող. եր. 283)։

Վախճանում է Տէր Մարկոս Ա. և յաջորդում է Տէր
Յովսէփ Գ. 47

Օսմանեան պատմութիւնն, Ա. Հատ. եր. 1—5 թարգ. Նյվազովսկու, ասում է թէ Սելջուկեան և Օսման ցեղերն ծագած են Յաբեթի թոռն Թիւրքից, ուստի իւրեանց ազգը անուանում են Թիւրք, և իւրեանց նախկին բնակութեան տեղին՝ Թիւրքեստան, որի հիւսիսային սահմանն է Սիբերիա, արեւելեանն՝ Չինաստան, հարաւայինն՝ Թաթարստան և արևմ-

---

[1]) Միևնոյն «Իշխանաց իշխան Սենեքերիմն» է։

տեանն՝ Խորազմների երկիրն։ Ասում են որ Թիւրք Նահապետից ծնուած է Գայան, Գայանից՝ Գարան (Սև) Գարայից՝ Ուղուզ կամ Օղուզ-խան։ Օղուզ-խանիցն ծնւում են վեց որդի- Կիւն (Արեգակ) խան, Այ (Լուսին) խան, Եըլդըզ (Աստղ) խան, Գեօգ (Երկինք) խան, Դաղ (Սար) խան և Դէնիզ (Ծով) խան։ Սոյն վեց որդիներից իւրաքանչիւրն որպէս թէ ծնած է 4 որդի, յորոց սերած են Թուրքեստանի 24 ցեղերն։

· · · Սելջուկեանները, որ Տաքարայ Սելջուկ որդու անուամբ Սելջուկեան կոչուեցան, սերած են համարւում Դանիզ-խանից։ Սելջուկեանները ընդունելով Մահմէտական կրօնը և զօրանալով Ժ. դարուց յետոյ, հետզհետէ տիրում են Կասպից ծովից մինչև Միջերկրական ծովն, գրաւում են Պարսկաստանը և հիմնում թագաւորութիւն։ Այնուհետև գրաւում են Դամասկոս, Հայաստանի մեծ մասը, Աղուանից երկրի մի մասը և Փոքր-Ասիայի արևելեան մասը։ Սոյն ցեղի գլխաւոր իշխողներն եղած են Մահմուտ, Տուղրիլ-բէկ, Ալփասլան, Մէլիք-Շահ, ևն։

1038-ին հրաւիրում է Աղուանից Տէր Յովսէփ կաթուղիկոսն [1]) որ իւր եպիսկոպոսներով գնում է Անի քաղաք, նախագահում գումարուած մեծ ժողովին և համոզում է կրկին նստեցնել կաթուղիկոս՝ Տէր Պետրոս-Գետադարձը։ Հոգևորականներից և իշխաններից բաղկացած խառն ժողովն գահընկեց է անում Դիոսկորոս ապօրինի կաթուղիկոսը և վերստին նստեցնում Հայոց համար Տէր Պետրոս-Գետադարձ կաթուղիկոսը։ Այնուհետև խաղաղում է ժողովրդեան յուզումն։

1040-ին Ապուսուար ամիրան 150,000 զօրքով արշաւում է Աղուանից երկիրն և գրաւում Պարտաւ և Գանձակ քաղաք-

[1]) Մ. Ուռհայեցի եր. 89. Վարդ. Բարձ. 132 գործողութիւնս տալիս են Յովսէփին. Վարդան ասում է «Ածաւ բռնութեամբ (Տէր Պետրոս) և արգելաւ 'ի Բջնի». իսկ Կիրակ. եր. 50, գործողութիւնը յատկացնում է Տէր Յովհաննէսին։

ները և շատ բերդեր, մի տարի նստում Գանձակում, նուաճում երկիրը և պատրաստւում որ առաջիկայ տարում արշաւէ Դաւիթ-Անհողին թագաւորի վերայ։ Դաւիթ հաւաքում է իւր զօրքը, որին միանում է Բագրատունի Յովհաննէս թագաւորի յղած 3000, Դարբանդի Սենեքերիմ թագաւորի յղած 2000, և Ափխազաց թագաւորի յղած 4000 օժանդակ զօրքերն ևս։ Դաւիթ հրաւիրում է և Աղուանից Տէր Յովսէփ Գ. կաթուղիկոսը իւր ամեն եպիսկոպոսներով, վարդապետներով, վանականներով, քահանաներով և սարկաւագներով, որք միասին աւետարաններով, խաչերով և խաչվառներով խառնւում են Դաւթի բանակին և ճակատում թշնամու հանդէպ։ Հնչւում են փողերն, զարկւում ճակատներն, յաղթւում է Ապուսուար իւր ահռելի բանակաւ և ճեպով յետ փախչում, իսկ Դաւիթ թագաւորն իւր զօրքով հինգ օր հալածելով կոտորում է շատ պարսիկ զօրականներ և մնացեալները հալածում մինչև Պարսկաստան (Մ. Ուռհայեցի եր. 92—96. և Սմբատ սպար. եր. 37—38)։ Դաւիթ թագաւորս շինում է Լոռի բերդը և ուրիշ 12 բերդեր (Վարդ. Բարձր. եր. 142)։

Փառիսոսի Սենեքերիմ և Գրիգոր թագաւորների վախճանելուց յետոյ, Սենեքերիմ թագաւորի խանում քրոջ այրն՝ Հասան, որ Խաչենի Գեսուեան իշխանների ցեղից էր, բնակում է Փառիսոսում [1])։ Հասանի որդին է Գրիգոր իշխանն, որի մասին Վարդան Բարձր. եր. 134—135, գրած է. Մամ անուն մի կին գալիս է Պարսկաստանից իւր երեք որդիներով

[1]) «Սևադա և Սենեքերիմ թոռն աւագ Սենեքերիմայ, եղբարք Խաթունին տիկնոջ Հասանայ յազգէն Գեսուեանց։ Իսկ աւագ Սենեքերիմն էր վերջին արքայն Սիւնեաց վախճանեալ իբր 1104 ամի»— սխալ է այս պէտք է լինի Փառիսոսի վախճ. 1004-ին» (Հնախ. տեղեկ. Հաղբատ. եր. 23 և 35) քանզի Սիւնեաց-Բաղաց Սենեքերիմն սպանուած է 1075-ին, տես Վարդ. Բարձր. եր. 137—138 և Ս. Օրբել. Ա. Հատ. եր. 63—64։ 1089-ին, եր. 76։

Փառխոսի գաւառն Գրիգոր փառաւոր իշխանի մօտ։ Որդիքն պատանդ են տալիս իւրեանց մայրը և առնում են Չօթը և Ճամիրամ բերդը. և այն տեղից բարեկամանալով Գանձակի Ըլազից ամիրայի հետ՝ սպանում են նոյն ամիրան և տիրում Գանձակին։ Կարճ միջոցում մեռնում է մեծ որդին Պարզուան, որի տեղ յաջորդում է միւս եղբայրն՝ Ղէլքարի և առնում Սալարիցն Պարտաւ և Ճամքոր քաղաքները։ Կրտսեր եղբայրն, որ կոչւում էր Փալտուն, որսի ժամանակ սպանելով իւր Ղէլքարի եղբայրը, առնում է իշխանութիւնը։ Գրիգոր իշխանի որդի Փիլիպէն՝ իւր հօր վախճանելուց յետոյ՝ գնում է Փալտնի մօտ, վերջինս բռնում է զինքը կապում և առնում նորանից Ճաչուաչը և Չօթը և կանչելով իւր մօտ Գագիկ, Համամայ որդին, Գանձակի տէրը, որը և սպանում է և առնում նորա երկիրը։ Եւ այսպէս զօրանալով տիրում Խաչենի, Գորոզի (Մեծ-Սիւնեաց մի գաւառի անունն է) և Սևորդեաց «Եւ զոռ դնէ... ընդ Կիւրիկէի (Դաւիթ-Անհողինի որդին է) թագաւորին Աղուանից, և այլն»։

Վախճանում է Տէր Յովսէփ Գ. և յաջորդում է Տէր
48 Մարկոս Բ.։

ԾԳ. ԳԼ.

Բաղաց Սենեքերիմ թագաւորի սպանումն.—Տէր Ստեփաննոս Ա.—Հայոց Բարսեղ հայրապետի ձեռնադրութիւնն.—Փառխոսցի Յովհաննէս սարկաւագ-վարդապետի թուականն.—Պուղա զօրավարի արշաւանքն.—Կիւրիկէ Ա. թագաւորն Մէլիք-Շահի մօտ։

—∞—

1075-ին Գանձակի Փալտուն ամիրան յղում է Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վասակ Պահլաւունին Մեծ-Սիւնեաց Բաղաց և Կապանին անառիկ ամրոցն Սիւնեաց Սենեքերիմ թագաւորի մօտ՝ ամեն զօրքով, որք խաբէութեամբ մտնում են Բաղաբերդ (այժմ Ղափան) ամրոցն և սպանում Սենեքերիմ թագաւորը (Վարդ. Բարձր. եր. 137—138)։

Իսկ Ս. Օրբելեան, Բ. Հատ. եր. 63—64, այսպէս է պատմում. Իմայէլացիք «Ընդ գեղեցիկ և ամուր թագաւորութիւնս Բաղաց, զոր խոչ մեծ համարէին ինքեանց, և եկեալ ամիրայն Պարտաւայ և Ռանայ և Գանձակայ բազում զօրօք գայ ի պատերազմ ընդ Սենեքերիմայ։... և տեսաւ (ամիրայն) զի անհնարին էր 'ի մարդկանէ, (առնուլ զամրոցն) յուղարկէր Գրիգոր իշխանն Անեցի ... առ Սենեքերիմ արքայն... Գրիգոր մտեալ առ Սենեքերիմ և մեծամեծ երդմամբ հաւանեցուցանէ զնա գալ առ ամիրայն, որք և եկին 'ի միասին... և ստեաց ուխտին... եսպան զթագաւորն (Սենեքերիմ)։

1077 Հաղբատում ձեռնադրւում է Աղուանից Տէր Ստե- 49
փաննոս Ա. Տէր Մարկոս Բ.-ի մեռնելուց վերջն։ (Վարդ. Բարձր. եր. 139)։

1081 Աղուանից Կիւրիկէ Ա. թագաւորն, տեսնելով որ Հայոց Գրիգոր վկայասէր կաթուղիկոսն թողեց աթոռը և գնաց Կիլիկիոյ կողմերն, հրաւիրում է Աղուանից Տէր Ստեփաննոս [1]) կաթուղիկոսը իւր ամեն եպիսկոպոսներով Հաղբատայ վանքն՝ Անեցի Բարսեղը Հայոց համար կաթուղիկոս ձեռնադրելու։ Գնում և ձեռնադրում են Տէր Բարսեղը կաթուղիկոս [2]) և Հաղբատի վանահայրութեան համար Կիւրիկէ թագաւորի դրան Սարգիս երէցը եպիսկոպոս։

---

[1]) Մատ. Ուռհայեցի եր. 265—266 «Տէր Ստեփաննոս, Եկեղ. Պատ. Մուրատ. եր. 375 «Տէր Ստեփաննոս». Կիրակոս «Տէր Յովսէփ»։
Սամուէլ Անեցի եր. 117 Տէր Բարսեղ Նստաւ ՇԼԲ. թուին=1084-ին։
Իսկ Վարդ. Բարձր. եր. 139 այս ձեռնադրութիւնը դրած է 525=1077-ին։

[2]) Սմբատ սպար. եր. 73 «'Ի թվին ԵՃԼ =1082 ձեռնադրեցին կաթուղիկոս. . զՏէր Բարսեղ»։

Բայց վկայասիրի և Բարսղի մասին աւելի լաւ եմ համարում մէջ բերել հետևեալ հատուածը. «Որովհետև Գրիգոր Վկայասէրն Կիլիկիայի լերանց վերայ էր և Մեծն Հայաստան առանց կաթողիկոսի, ուստի արևելեան Հայք խնդրեցին Վկայասիրէն, որ կամ ինքն գայ Անիի կաթողիկոսական աթոռը նորոգէ և կամ հաճութիւն տայ իւր տեղապահ Տէր Բարսեղը կաթողիկոս ձեռնադրել։ Վկայասիրի հաճութիւնն ստանալով Արևելեան Հայք կը հրաւիրեն եւ Աղուանից Ստեփաննոս և նորա ձեռքով կաթողիկոս կօծեն Հաղբատայ մէջ զՏէր Բարսեղ» (Եկեղ. Պատ. Մելք. վարդապետի Մ. եր. 374—375)։

Մխիթար Այրիվանեցին, եր. 60, ասում է. Փառխոսցի Յովհաննէս-Սարկաւագ վարդապետն 1085-ին «Արար անշարժ տումար ըստ այլոց ազգաց» որ 1085-ին լինում է «Սկիզբն Նոր թուականին»-Փոքր թուականին առաջին տարին [1])։

1085-ին տակաւին կենդանի էր Դարբանդի Գրիգոր թագաւորն, որ Սենեքերիմ թագաւորի որդին էր, Սենեքերիմն՝ Սեադայ թագաւորի և Սեադան՝ Փիլիպպոս թագաւորի (Մատ. Ուռ. եր. 279)։

1088—1089 Մէլիք-Շահի հրամանաւ Պուղա ամիրան —Սելջուկեան զօրավարն—Գանձակ քաղաքը առնում է Փալտնեաններից, որ կոչւում էին Շատատիկ (Վարդ. Բարձր. եր. 141)։ Իսկ Մատթ. Ուռ. եր. 286 գրում է. Պուղան ժողովում է Պարսից ամեն զօրքերը Գանձակ քաղաքի վերայ և սաստիկ պատերազմաւ փորելով ձգեցին պարսպի մի բուրգը և առին Գանձակ քաղաքը և կոտորեցին քաղաքի բնակչաց փոքր մասը։ Պուղան արգիլեց զօրքը կոտորած անելուց և արաւ խաղաղութիւն։ Եւ Աղուանից Տէր Ստեփաննոս կաթողիկոսն, որ Գանձակումն էր, ազատուեցաւ Աստուծոյ օգնականութեամբ, վասն զի պահպանուեցաւ Հայ զօրքերից, որք Պուղայի հետ էին։

[1]) Տես և Կիր. եր. 63։

Սելջուկեան Մէլիք-Շահն տիրում է Կասպից ծովից մինչև Պոնտոսի ծովն, որ խաղաղասէր թագաւոր էր, որին այցելութեան է գնում Աղուանից Կիւրիկէ Ա. թագաւորն Խորասան և դառնում պատուով (Վարդ. Բարձր. եր. 139—140 և Սամ. Անեց. եր. 118)։

ԾԴ. ԳԼ.

Կիւրիկէ Ա. թագաւորի վերջին գործերն.—Յովհաննէս Ե. կաթողիկոսի ձեռնադրութիւնն.—Խըզըլ ամիրայի արշաւանքն.—Կիւրիկէ Ա. թագաւորի որդիքն.—Սարգիս Քուրդ իշխանի գերդաստանն.—Վրաց Գէօրգի թագաւորի նուաճումներն և պատերազմներն.—Ալպուառի որդի՝ Փալտուն.—Ելտկուզ զօրավարի արշաւանքն.—Տէր Գրիգորիս Բ. —Գօշ Մխիթարի պատմածն Գրիգորիսի ձեռնադրութեան առթիւ։

Աղուանից Կիւրիկէ Ա. թագաւորն, որ շինել տուած էր Հաղբատ և Սանահին վանքերը, իշխում էր Արցախի Գարդման, Փառիսոս, Կողթ, Քուստի կամ Քաւս, Ջաւ (Ղազախ) և Լօռի գաւառներին։ Հետզհետէ զօրանում էին Վրացիք և աշխատում էին տիրել և Աղուանից երկրին, որոց դէմ շարունակ մաքառելով Կիւրիկէ թագաւորն մինչև իւր մահուան օրն պահպանում էր իւր իշխանութեան տակ եղած գաւառները և իւր իրաւունքները և հայրենի հարստութիւնները հաստատութեան մէջ։ (Կիր. եր. 89)։

1103-ին վախճանում է Աղուանից Տէր Ստեփաննոս Ա.
կաթողիկոսն Մեծ-Սիւնիքում և ամփոփւում Մեծ-Սիւնեաց
Վահանայ վանքում (Ս. Օրբել. Ա. Հատ. եր. 287. Մատ. Ուռ.
եր. 365)։ Ժողով է գումարում Հայոց Տէր Բարսեղ հայրապետն
Գանձակում, ուր և ընտրութեամբ ձեռնադրում է Տէր Յովհան- 50
նէս Ե. որ վախճանուած Տէր Ստեփաննոսի եղբայրն էր։ Մատ-

թէոս Ուռհայեցին նոյն երեսում ասում է. «Յետոյ անարժան գտին զնա (Տէր Յովհաննէս Ե.) աթոռոյ հայրապետութեանն. և ընդ բանադրանօք փակեաց զնա Տէր Բարսեղ կաթուղիկոսն Հայոց, և յաթոռոյ և 'ի պատուոյ հայրապետութեան ընկեցին արտաքս զնա... վասն խոտոր վարուց իւրոց»: Հարկ է յայտնել որ ոչ ինչ չէ ասում այս մասին Գօշ Մխիթար, միայն գրում է. «Եւ ապա Տէր Յովհաննէս»: Իսկ Կիրակոս, եր. 116, յիշում է. «Տէր Յովհաննէս ամս յիսուն»: Ոչ թէ 50 տարի, այլ իսկապէս 30 տարի հայրապետութիւն արած է Տէր Յովհաննէս Ե.:

1105-ին Սկիւթացի Խզըլ անուն բռնաւորն առնում է Լօռի քաղաքը և այրում Հաղբատ և Սանահին վանքերը (Սամ. Անեցի եր. 121): Իսկ Կիրակոս. «Յայսմիկ ամս մարտիւ պատերազմի զբարեյարմարութիւն աշխարհի 'ի բաց կտրեցին... հոսմունս արեանց իբրև զուխիչ լինէր ոչ միայն զինակիր նահատակաց, այլ և առ հասարակ ազանց և գաւառաց» (Հնախ. Տեղ. Հայ. եր. 8):

Կիւրիկէ Ա. թագաւորի վախճանելուց յետոյ իւր երկու որդիքն՝ Աբաս թագաւորն և Դաւիթ թագաւորազն նեղուելով[1] Վրացիներից՝ գնում են Առանի (Աղուանից երկրի) իշխանների մօտ և առնում Տաւուշ և Մլզնաբերդ և ուրիշ տեղեր և ապրում էին տառապանօք: Աբաս թագաւորն բնակում է Տաւուշ բերդում[2] և Դաւիթ թագաւորազն՝ Մլզնաբերդում[3]:

Բաւական ժամանակ առաջ Քուրդ ազգաւ ոմն իշխան գալիս է Զորագետի թագաւորի (Թերևս Գուրգենի) մօտ, որ Բագրատունեաց ազգից էր, իւր գերդաստանով, հաւատում Քրիստոսին և մկրտուելով անուանւում է Սարգիս: Ապա

1) Կիր. եր. 89 «Դաւեալք 'ի Վրաց». Վարդ. Բարձր. եր. 142:
2) Տես «Արցախ» եր. 357—358:
3) Տես «Արցախ» եր. 302:

բնակելու տեղ են շնորհում Սարգսիս համար՝ Խոշնի: Սարգիս իշխանից ծնում է Զաքարիա, Զաքարիայից՝ Վահրամ, Վահրամից՝ Սարգիս, Սարգսիցս՝ Զաքարիա և Իւանէ եղբարք: Բայց որովհետև արիագոյն էին և յառաջադէմ, ուստի յառաջանում էին օր ըստ օրէ պատուով և աստիճանով: Ինչպէս վերջին Սարգիս, նոյնպէս և վերջին Զաքարէ և Իւանէ հետզհետէ մըտնում են Վրացւոց թագաւորների զինուորական ծառայութեանց մէջ[1]. յետոյ Վրաց Թամար թագուհին տալիս է Լօռի քաղաքը Զաքարէի և Իւանէին:

1118-ին Վրաց Գէօրգի թագաւորի որդի Դաւիթ թագաւորն զօրանալով առնում է պատերազմաւ Տփխիսը Պարսիկներից, սաստիկ հարուածներով զարկում Գանձակի նոր գահակալած Մէլիք Սուլթանը[2] Տփխիսում կախաղան բարձրացնելով կոտորում 500 Պարսիկ. գրաւում է և Անի քաղաքը քրիստոնէից յանձնելովն, բռնում է և Մանուչէ իշխանի որդի՝ Ապլսուարը իւր որդիքներով և տանում իւր երկիրն: Վրաց Դաւիթ թագաւորն, ընդարձակելով Վրաց սահմանները, առնում է Գագ, Տէրունական, Տաւուշ[3]. Կայան, Կայծոն և Լօռի ամրոցները և նուաճում Աղուանից երկրի դաշտային մասը մինչև Շապօրան[4] (Վարդ. Բարձ. եր. 156—157 և Մատ. Ուռ. եր. 447):

Միևնոյն թուին Ապլսուարի որդի Փատլունն առնում է Դուին և Գանձակ քաղաքները, քաղաքին լինում բարւոք խնամակալ, նոյնպէս և իւր իշխանութեան տակ եղածներին և խաղաղութիւն անելով լինում անուանի (Վարդ. Բարձր. եր. 158):

1) Վարդ. Բարձ. եր. 181 և Կիր. եր, 94—95:
2) Մատ. Ուռ. եր. 427—428 և 438—439:
3) Գագ և միւս Տէրունական և Տաւուշ բերդերիս մասին տես «Արցախ» եր. 396 և 357—359:
4) Տես «Աղ. Երկ. և Դր.» եր. 127:

1130-ին անօրէն ազգերից հաւաքուած անհամար[1]) ձիաւորներով լցւում է Գագայ դաշտն, որք կամենում են այրել այն սուրբ Խաչը, որը սուրբն Մեսրոպ յանուն սրբոյն Սարգսի զօրավարի կանգնած էր Գագայ սարի վրայ։ Բայց Աստուծոյ բարկութիւնից խելացնորում է զօրքն և կոտորում մէկզմէկ. գալիս է Վրաց Դեմետրէ թագաւորն և տանում սպանուածների բոլոր կարասիները։

1130-ին վախճանում է Աղուանից Տէր Յովհաննէս հայ-
51 րապետն, որին յաջորդում է Տէր Ստեփաննոս Բ. կաթուղիկոսն, որ մի և կէս տարի միայն պաշտօն վարելուց վերջն վախճանում է 'ի տիս պատանեկութեան։ Այս խիստ տեղում գրած է Գօշ Մխիթար հետևեալը, որը կարևոր համարեցինք մէջ բերել ամբողջապէս. «Ապա յետ վախճանելոյ նորա (Տէր Ստեփաննոս Բ.-ի) զամս ը. (8) առանց հայրապետի եկաց նահանգս Աղուանից, յորում և ոչ գոյր 'ի սմա եպիսկոպոս, մինչ զի զնուիրեալսն 'ի քահանայութիւն յայլ գաւառ տանէին առ ձեռնադրութիւն... սպառեցաւ իւղն օծութեան... իսկ յետ անցանելոյ Ը. ամացն 'ի չձը (1139—1140) թուականին Հայոց՝ 'ի Հայոց Սահակ աստուածընկալ եպիսկոպոս 'ի դրանէ սրբազան հայրապետին Տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, որ ըստ հրամանի նորին և առաքմանն եկեալ 'ի գաւառն Աղուանից 'ի խնդրոյ և 'ի ձեռնարկութենէ Գրիգորոյ աշխարհիս մերոյ, որ էր աշակերտ Դաւթի փառաւոր և մեծահռչակ վարդապետի։ Արդ՝ 'ի գալ տէր Սահակայ յաշխարհս Աղուանից՝ ժողովէր զամենեսեան առհասարակ 'ի տուն թագաւորին Աբասայ Բագրատունւոյ՝ որդւոյ Կիւրիկէի արքայի, որ ժողովեալ ամենեցուն առաջի նորա 'ի բերդն՝ որ կոչի Տաւուշ, ուր և ժողովեալ հարանց սրբոց և եպիսկոպոսաց, թագաւորն Դաւիթ[2]) եղբայր Աբասայ թագաւորին, տէր Ստեփաննոս որ-

դի Կիւրիկէի՝ նոցունց եղբայր, Սարգիս վարդապետ՝ աշակերտ Դաւթի վարդապետի, Գրիգոր արհի-եպիսկոպոս Գանձակայ, Սահակ եպիսկոպոս՝ աշակերտ Սարգսի վարդապետի, Ստեփաննոս եպիսկոպոս Կողթ գաւառի և քաղաքին Շամքորոյ, Սարգիս եպիսկոպոս Շամիրամաձորոյ, Սամուէլ եպիսկոպոս Կաքրոյ (գուցէ Կապաղակայ), Հայր Սարգիս Խամշի վանից։ Իսկ գլուխ ժողովոյն էր Սահակ դրան եպիսկոպոս Հայոց կաթողիկոսին և Սարգիս ճգնազգեաց և երանելի վարդապետ. և այսպէս հանդիսիւ և հռչակաւոր կոչ-
մամբ ձեռնադրեցին կաթողիկոս Աղուանից զԳրիգորիս հօրեղ- 52
բօրորդի տեառն Ստեփաննոսի Աղուանից կաթողիկոսի։ Եւ էր Գրիգորիս՝ յորժամ ձեռնադրեցաւն՝ և նա 'ի տիս պատանեկութեան՝ գոլով որդի Գիորգայ և եղբօրորդի Կարճկայ թոռն Պեն-Կարապետին։ Իսկ օր ժողովելոյն 'ի միասին՝ էր տօն Պենտեկոստէին և գալուստ Հոգւոյն սրբոյ, յամսեանն տրէ։ Եւ ապա յետ այսորիկ չուեցին ժողովեալքն յիւրաքանչիւր տեղիս. ապա դարձեալ 'ի տօնի Վարդավառին ժողովեալ ամենեցուն 'ի միասին 'ի բերդն՝ որ ասի Կաթողիկոսի Քար[1])։ Նոյնք վերասացեալ եպիսկոպոսունք և վարդապետք և հարք սուրբք և այլ վարդապետք քան զառաջինն յոլովագոյն և քահանայք, յորում աւուր և ձեռնադրեցին երկու ևս այլ եպիսկոպոս և օրհնեցին զիւղն օծութեան յոլովագոյն, բազում և առատ ընձեռմամբ բաշխեցին ընդ ամենայն տեղիս, և այսպէս խրախութիւն հոգևորական կատարէին մինչև ցաւուրս սրբոյ Խաչին զուարճանալով 'ի միասին 'ի փառս Աստուծոյ»։ Այստեղ վերջանում է Գօշ-Մխիթարի «Շարք հայրապետացն Աղուանից»։

Կիրակոս, եր. 116—116, փոխանակ 8-ի 25 տարի է դնում առանց կաթուղիկոսի մնալը, նշանակելով «զամս քսան

[1]) Վարդ. Բարձր. եր. 161։

[2]) Կիրակոս անուանում է Դաւիթ իշխան։

[1]) Տես «Արցախ» եր. 301 Քարահերձ և որի 44 ծանօթութիւնը եր. 430։

և հինգ» որ գրչագրի սխալ է, բայց աւելացնում է «Եւ յորժամ եղև այր կատարեալ կաթուղիկոսն Գագիկ (Գրիգորիս) լի իմաստիւք Աստուածայնովք, փոխեցաւ յաշխարհէս»։

ԾԵ. ԳԼ.

Երկրաշարժ.—Չօլի ամիրայի արշաւանքն.—Իշխանական յաջորդութիւններ.—Դաւիթ իշխանի նենգութիւնն.—Ելտկուզի արշաւանքն.—Տէր Բժգէն.—Ջրօրհնեաց հանդէս.—Տէր Յովհաննէս Զ.—Զաքարէ Սպասալարի յաղթութիւններն և մահն.—Թլու-Զաքարէի քաջութիւններն։

—∞—

1140-ին սաստիկ երկրաշարժից կործանւում է Գանձակ քաղաքն [1]) և փլում Կեփաս (այժմ Քեափազ) [2]) սարն, լցնում ձորը և գոյացնում Ալհարակ լճակը։ Փլատակերում վախճանում են բազմաթիւ ժողովրդականք. գալիս է Վրաց Դեմետրէ թագաւորն և տանում իւր երկիրն Գանձակի երկաթեայ բերդի դուռները [3])։

1143-ին Չօլի ամիրապետն առնում է Խաչենի ամրոցները՝ բայց խաբէութեամբ և երդմամբ յինքն հանդուցանելով իշխանաց սրտերը և մաշում երկիրը սովով, սրով և գերութեամբ, որոց հետ գերում է նաև քահանաներ, կրօնաւորներ և սուրբ կտակարաններ։ Իսկ 1145-ին նոյն ամիրապետն պաշարում է Տաւուշ բերդը 40 օր, ապա առնում բերդը և առանց վնասելու դուրս հանում Աբաս թագաւորը իւրայիններով [4])։

---

1) Հին-Գանձակը տես «Արցախ» եր. 416—417։

2) «Արցախ» եր. 255 և 428։

3) Կիր. եր. 65 և Վարդ. Բարձր. եր. 162։

4) Սամ. Անեցի եր. 132—133։

Աբաս թագաւորն իւր գերդաստանով այնուհետև բնակւում է Մածնաբերդում իւր եղբայր Դաւիթ թագաւորազնի մօտ։ Երկու եղբարքս վախճանում են և ամփոփւում Հաղբատ վանքում [1])։

Դաւիթ թագաւորազնին յաջորդում է իւր որդի Կիւրիկէ Բ. իշխանն, որի մասին ասում է Կիրակոս, «այր բարեբարոյ և կատարեալ 'ի գործս առաքինութեան քան զհարս իւր»։ Վախճանւում է և Կիւրիկէ Բ-ս ժառանգ թողլով 12 տարեկան Աբասը, որ ամուսնանում է Սպասալար Զաքարէի և Իւանէի քրոջ Նանայի հետ։ Աբաս իշխանս ևս վախճանւում է 2 տարի միայն կենակցելով իւր կնոջ հետ. իշխանիս քոյր Բիւրինան, առնելով իւր եղբօրից ծնուած Աղսարթան մանուկը, սնուցանում է, որ լինում է ժառանգակալ Մածնաբերդին։ Աղսարթանս, որ լինում է աստուածապաշտ և քահանայասէր, Նորբերդի [2]) Բագրատունի Դաւիթ իշխանն խաբէութեամբ ամուսնացնում է իւր դստեր հետ և ինքն տիրում Մածնաբերդին և հանում իւր պսակուած աղջիկը Աղսարթանի մօտից։ Իսկ Աղսարթան՝ իւր կողմն գրաւելով բերդի բնակիչները՝ յանկարծ կալանաւորում են խարդախ Դաւիթ իշխանը և դուրս անում բերդից։ Աղսարթան իշխանս՝ յետոյ իւր կենդանութեան օրով՝ իշխանութիւնը յանձնում է իւր որդի Կիւրիկէ Գ. իշխանին և ինքն կրօնաւորում Գետակից վանքում [3])։ Կիւրիկէ Գ. թողնում է 3 որդի՝ Բահլաւան, Թաղիադին և Աղսարթան [4])։

1163-ին Ելտուզ Աթաբակն շատ զօրքով գալիս է Գա-

---

1) Հնախ. Տեղ. Հաղբ. եր. 22։

2) Տես «Արցախ» եր. 359։

3) Թերևս Ճխմուրատայ վանքում, որ շինուած է Հասան գետակի ձախ ափին «Արցախ» եր. 334—335։ Յետածին է Ճխմուրատ անունս, որ գուցէ առաջ Գետակիցք եղած լինի։

4) Կիր. եր. 89—90։

գայ դաշտն և կամենում է այրել Գագայ սարի գլխին այն սուրբ և հռչակաւոր խաչը, որը Ս. Մեսրոպ [1]) կանգնած էր յանուն սրբոյն Սարգսի զօրավարին: Աստուծոյ ահեղ բարկութիւնից բանակի մէջ եռում են անհամար մահաթոյն և սպանիչ օձեր, օձահարների ճիչն և աղաղակն չէ դադարում գիշեր և ցերեկ: Ելտկուզ թողնելով գերիները և կարասին՝ փախչում է. հասնում է Վրաց Գէօրգի թագաւորին, հաւաքում է ամենը և տանում [2]):

Վախճանում է Աղուանից Տէր Գրիգորիս Բ. որին յաջոր-
53 դում է Տէր Բժգէն, բայց յետոյ թողնելով կարգը՝ ամուսնա-
նում է և մերժում հայրապետութիւնից: Այս ընտրում և
54 օծում է Տէր Ստեփաննոս Գ.:

Կարևոր է յայտնել որ այդ միջոցին Աղուանից ողորմելի հայրապետներն չունէին հաստատ աթոռանիստ, այլ ապրում էին աստանդական ամենամեծ նեղութեամբ և հեռուից հովուում իւրեանց բանաւոր հօտը: «Բնաջինջ եղաք 'ի թագաւորաց և յիշխանաց. կաթուղիկոսունք Աղուանից այսր անդր յածելով վասն ոչ ունելոյ հաստատուն տեղի աթոռոյ: Դէպ եղև նոցա գալ 'ի Քարայր (Քարահերձ) մի 'ի սահմանս բերդին՝ որ կոչի Չարեք [3]) և անդ դադարել և անդուստ հովուել զհօտ իւրեանց (Կիր. եր. 103):

Գանձակ քաղաքի Կուրճի Բատրատին ամիրայից հրաւիրուում է Աղուանից Տէր Ստեփաննոս Գ. որ կատարէ ջրօրհնեաց տօնը Գանձակում: Կաթողիկոսն իւր եպիսկոպոսներով և վարդապետներով իջնում է Քարահերձից Գանձակ և փառաւոր հանդիսով կատարում ջրօրհնեաց արարողութիւնը՝ քաղաքի մօտով հոսող գետում: Մոլեռանդ պարսիկ բնակչաց՝ որ ջուրը

[1]) Տես Ս. Սարգսի Ձարականի «Խաչաչար տան» մէջ:

[2]) Սամ. Անեցի եր. 138. Վարդ. Բարձր. 166—167 և 161:

[3]) «Արցախ» եր. 326, այժմ կոչուում է Մամռուտ:

խմում էր նոյն գետից, խաչը գետ ձգելն թուում է անարգանք իւրեանց կրօնին. կալանաւորում և բանտարկում են հանդիսատես ամիրան և կաթուղիկոսը: Վերջինս ազատուում է դրամ տալով և գնում Խաչենի կողմերն և չէ վստահանում մտնել Գանձակի սահմաններն, այլ այսպէս աստանդական մնալով ողորմելի Տէր Ստեփաննոս հայրապետն վախճանում է Հերդ գաւառում:

Աղուանից եպիսկոպոսներն և վարդապետներն երբ տես-
նում են, որ վերջացաւ Աղուանից թագաւորութիւնն, և չկայ
կաթուղիկոսական ցեղից եպիսկոպոս կամ վարդապետ բացի
մի փոքրահասակ սարկաւագից, առնելով սարկաւագը տանում
են Բջնի և Հայոց Վրդանէս եպիսկոպոսի ձեռնով ձեռնադրել
տալիս վարդապետ և բերելով Գանձակում օծում կաթուղիկոս՝
Տէր Յովհաննէս անուն, որն Գանձակի Օմար Ամիրայից ստա- 55
նում է մեծ յարգանք և պատիւ և հաստատում իւր աթոռը
Քարահերձում [1]): Տէր Յովհաննէս Զ. նեղուելով պարսիկնե-
րից՝ դիմում է Զաքարէ և Իւանէ իշխաններին, որք ընդունում
են մեծ պատուով և բնակեցնում իւրեանց սահմանում—Միա-
փոր գաւառում, որ ազատ լինի կաթուղիկոսն նեղութիւնից:
Հայրապետս հիմնարկում է Խամշի նոր վանքը, բայց մնում
է կիսատ Ջալալադին Սուլդանի արշաւանքի պատճառաւ, սա-
կայն վերջացնում է շինութիւնը յետոյ:

1153—1154 պարսիկ մի Գանձակում աւագ ուրբաթի օրն պարսպի վերայ խաչում է Խաչենցի Սարգիսը, որ «առնոյր խաւրաճ» ասելով «խաչակից լեր Քրիստոսին քում»: Ինքն խաչողն ևս չարաչար սպանուում է Խաչենցի իշխաններից [2]): Սարգիս Բ. իշխանի որդիքն՝ Զաքարէ և Իւանէ մտնում են Վրաց զինուորական ծառայութեան մէջ. Զաքարէն կար-

[1]) Կիր. եր. 103—105:

[2]) Վարդ. Բարձր. եր. 173.

գուում է Սպասալար—զօրավար Վրաց և Հայոց։ Իսկ Իւանէ աթաբակութեան պաշտօնով։ Զաքարէն լինելով քաջ, պատերազմասէր և յաղթող, վրացի և հայ զօրքով հետզհետէ յետ է առնում Պարսից և Թիւրքաց իշխանութիւններից Գեղարքունեաց, Շիրակայ, Արարատեան, Մեծ-Սիւնեաց բոլոր գաւառները և բերդերը և հարկատու անում Կարնոյ սուլթանը։ Ապա արշաւում է Վանայ և Խլաթի վերայ, նուաճելով անցած տեղերը, Ճահի-Արմէնը զարկելուց յետոյ՝ պաշարում է Խլաթը։ Իւր եղբայր Իւանէն անզգուշութեան պատճառաւ ընկնում է թշնամու ձեռքն, վասն որոյ Զաքարէ զօրավարն ակամայից հաշտուում է Խլաթի իշխող Մելիք-Աշրաֆի հետ և ազատում իւր եղբայրը։ Այնուհետև Զաքարէ զօրավարն գումարում է Անի քաղաքում երկու անգամ հոգևորականաց ժողով, որպեսզի ընդունել տայ Սսոյ 1205-ի ժողովի ութ կանոնները, բայց չէ յաջողում [1])։

Ապա Զաքարէն և Իւանէն արշաւում են իւրեանց զօրքով և գրաւում Մարանդը և Արտաւիլը իւրեանց շրջականերով, աւարում և կոտորում շատ մարդիկ։ Բայց դարձին հիւանդանում է Զաքարէն, վախճանում և թաղուում Սանահին վանքում, թողնելով իւր Թամթա անուն կնոջից Շահանշահ անուն մի որդի, որ մեծանալով տիրում է հայրենի ժառանգութեան [2])։

Իսկ Բլու Զաքարէն, որ ազգական էր Սպասալար Զաքարէի և Իւանէի, որոց ձեռնտուութեամբ հետզհետէ գրաւում է Արցախի Գարդման, Քարահերձ, Երգեվանք, Տաւուշ, Տէրունական (այժմ Դուրկեան) Կածարեթ և Գագ ամուր բերդերը [3]) և յետոյ Բլու-Զաքարէիս որդի Վահրամ իշխանն առնում է Շամքոր քաղաքը և որոց վերայ իշխում։

---

[1]) Եկեղ. Պատ. Մ. վ. Մուրատեանց եր. 462—465։
[2]) Կիր. եր. 94—103. Վարդ. Բարձր. եր. 181—183։
[3]) Բերդերիս նկարագրութիւնները տես «Արցախ» եր. 357—359։

ՎԵՐՋԻՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԾԶ. ԳԼ.

Արցախի մնացեալ իշխաններն և իւրեանց իշխանանիստ վայրերն.— Արցախի վանքերն և նշանաւոր հոգևորականներն.—Մնացեալ և կորուսեալ մատեանք։

Արցախի մնացեալ իշխաններից Հաղբակեան կամ Խաղբակեան իշխողներից Ջաջուռ բնակում էր Գետառնաքարի ձորում իւր ապարանում։ Վախթանգի որդի Ջալալ-Դօլա-Հասան իշխանն բնակում էր իւր ապարաններում, որ կայ Գանձասարի հարաւային հանդէպ։ Վախթանգեանց Վախթանգ թագաւորազն բնակում էր Հաթերքում։ Այս երեք իշխաններն Ներքին Խաչենում։ Առանշահիկ տոհմից Գրիգոր Թոփի որդին բնակում էր Վերին-Խաչենի Ծար գիւղաքաղաքում և մերթ Հանդաբերդ և Հաւքախաղացում։ Աղսարթան և եղբարք-Կիւրիկէ Գ.-ի որդիքն բնակում էին Արցախի Գարդման գաւառի Մածնաբերդում։ Վասակեան Դաւիթ Վահրամ իշխանն բնակում էր Շամքորում. Վասակեան Դաւիթ Բագրատունի իշխանն՝ (Աղսարթի անեղն) Նոր բերդում, Հա-

սան իշխանն՝ Կայենի բերդում և Սպալասար Զաքարէի որդի Ճահանշահն՝ Լօռիում։

Չնայելով քաղաքական արհաւրալից տագնապներին, չընայելով պարսիկ ամիրաների և Սելճուկեանների արիւնահեղ պատերազմներին, քստմնելի նահատակութեանց և ծանրաբեռն ճնշմանց, այդ իշխանական տոհմերն ԺԱ—ԺԳ. դարում կառուցանել են տալիս 'ի պահպանութիւն քրիստոնէութեան, 'ի լուսաւորութիւն մանկանց և 'ի մտաւոր կրթութիւն իբրև ուսումնավայրեր, թէև յանուն դամբարանի իւրեանց ցեղի, հետեւեալ վանքերը։

Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսներն, որ Աբու-Մուսէ Եսայի քաջ իշխանի ցեղիցն էին, իւրեանց տոհմի հարստութեամբ կառուցանում են Գտչայ վանքը Դիզակ գաւառում։ Ներքին-Խաչէն գաւառում Հաղբակեան կամ Խաղբակեան Ջաջուռ իշխանն կառուցանել է տալիս Հաւապտուկ վանքը, Ջալալ-Դօլա-Հասանն շինել տալիս հրաշալի Գանձասար վանքը և Վաճառ գիւղի Ս. Ստեփաննոս մատուռը, իւր մայր Խորիշահն վերստին շինում է Ս. Յակովբայ վանքը և Ջալալիս ամուսին Մամքանն՝ Վաճառ գիւղի վանքը, իսկ ինքն Ջալալ-Հասանն շինել է տալիս Վաղահասի մայրաքաղաք վանքը, որ լինում է ուսումնավայր։ Վերին-Խաչէնում Եռանշահիկ ցեղից՝ Դոփեան Գրիգոր իշխանի հրամանաւ իւր եղբայր Յովհաննէս եպիսկոպոսն շինում է Խաթրայ և Գետամիջի վանքերը և Ծարի և սորա ստորոտի վանքերը։ Վախթանգ թագաւորազնի ամուսին Արզու խաթունն Ըռստատակ գաւառում շինել է տալիս Դադի[1] նոր, հրաշալի վանքը և գաւիթը և իւր երկու դստերաց հետ այծի կակղագոյն մազից գործում է հիանալի վարագոյրներ,

[1]) Դադի եօթանասնից մին էր, որ Թադէոս առաքեալի հրամանաւ քարոզում էր Հայաստանում, յետոյ գալիս է և վանքիս տեղում վախճանում, որի վերայ շինում են հին վանքը (Մխք. Ասոլի եր. 33 «Յաղ. քահանայութեան»)։

մին Դադի, միւսն՝ Գօշայ և երրորդը Մակարայ և չորրորդն Հաղբատայ վանքերին համար։ Եղիշ-առաքեալ և Գլխոյ վանքերը շինել տուած էին Ճիրանշահանց տոհմի իշխաններն Ջրաբերդում Յովհաննէս եպիսկոպոսի ձեռնով, որ նոյն ցեղից էր։ Միջի և Երի վանքերը Մեծ-կողմանց կամ Կիւլստան գաւառում. Եղնասար, Երմոլեայ, Պանդալիոնի, Ս. Աստուածածնայ, Ս. Սարգսի, Քարխանայ, Թարգմանչաց, Ամենափրկիչ և Հոռոմաշէն և հրաշալի Քարահերձ վանքերն Արցախի Գարդման գաւառում շինուած Գարդմանի իշխաններից։ Փառիսոսի, Խամշի, Խորանաշատի վանքերն շինուած են Փառիսոս գաւառի իշխանների ձեռնտուութեամբ։ Կապտայ, Ճիմուրատայ, Վարագայ, Սրվեղի, Մորոյ-Ձորոյ վանքերն Քուստի գաւառում՝ շինուած են հոմանուն գաւառի իշխանների նիւթականով, իսկ Գօշ-Մխիթարի վանքն՝ ձեռնտուութեամբ Վախթանգեան թագաւորազն Հաթերքեցի եղբարց։ Ջաւէ (այժմ Ղազախ) գաւառի Ջօխտակ վանք, Հաղարծին, Մակարայ, Ս. Գրիգորի (Լուսաւորչի) Առաքելոց, Կիրանց, Դեղձուտի և Ս. Աստուածածնայ վանքերն և Գագայ Ս. Սարգիսն շինուած են վերջապէս իշխանների արդեամբ։

Այդ վանքերից շատերն իւրեանց ժամանակին եղած են լուսաւորութեան բոյներ, Քրիստոնէութեան ջեռուցիչ վառարան, հաւատոյ, յուսոյ և սիրոյ զօրեղ պաշտպան, ազգութիւնը, լեզուն և գրականութիւնը և միանգամայն Հայաստանեայց եկեղեցւոյ ինքնուրոյնութեան և ուղղափառ դաւանութեան պահպանող սրբավայրեր։

Վերյիշեալ դարերում—ԺԱ-ԺԳ—նշանաւոր էին Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսներն Գտչայ, Սարգիս և Վարդան եպիսկոպոսներն՝ Ս. Յակոբայ, Գրիգոր և Եղիա վարդապետներն՝ Գանձասարի, Մարգարէ եպիսկոպոս Մայրաքաղաքի (Վաղահասի մօտ), Յովհաննէս, Սարգիս և Գրիգոր եպիսկոպոսներ Դոփեանց Խաթրայ և Գետամիջի և Աւագ եպիսկոպոս, Գրի-

գոր եպիսկոպոս, Մանուէլ աբեղայ և Աժանաս եպիսկոպոսն Դադի վանաց, Փառխոսցի Սարգիս և Յովհաննէս-Սարկաւագ վարդապետներն, Գանձակեցի Գօշ-Մխիթար, Կիրակոս, Դաւիթ և Գրիգոր Թորակերի որդին, Տաւուշեցի կամ Տուեցի Յովհաննէս եպիսկոպոսն և միւս Վանական կոչեցեալ Յովհաննէս վարդապետն Վարագայ և Խորանաշատի շինողներն. Յովհաննէս և Գրիգոր վարդապետներն Մորոյ-Ձորոյ, Գրիգոր եպիսկոպոս Ճխմուրատի, Երեմիա-Անձրևիկ, Անանիա, Վարդան Բարձր. Խաչատուր Տարոնացի Հաղարծին վանքում, Յովհաննէս եպիսկոպոս Մակարայ վանուց, Գրիգոր վարդապետ Ս. Աստուածածնայ վանքում։

Այս ս. հայրերից շատերն թողած են երկասիրութիւններ, զորս տեսնել ցանկացողներն կարող են ականել Եկեղ. Պատ. Մ. Մուրատեանցի։ Բայց ցաւօք սրտի յայտնում ենք որ կորած են շատերի հեղինակած պատմութիւններն, ինչպէս են Վանական վարդապետի և Սարկաւագ վարդապետի պատմութիւններն. դաւանաբանական, մեկնական, խրատական և պատմական գրուածքները, մանաւանդ Մայրաքաղաքի և Քաղաքատեղի մատենադարանների ձեռագիրներն։

1222-ին Գանձակի վերայ արշաւում է Սև-Հոնաց զօրքն[1]), որից յաղթւում է Սպասալար Իւանէն, սպանւում են շատ վրացի և հայ զինուորներ, ձերբակալւում են շատ իշխաններ, որոց մէջ են լինում և Խաչենցի Հաղբակայ որդի Վասակ իշխանի եղբայր Գրիգոր իշխանն և նոյն Վասակի որդի Պապաքն. «Զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաք, Մկրտէմ և Հասան, զոր Պռօշն կոչէին, արք քաջք և անուանիք, որ յաճէ նոցա դողայր ամենայն զօրն Տաճկաց»։

[1]) Վարդ. Բարձր. եր. 187 «՚ի Հոնաց, զոր Խբախ անուանեն» Կիր. եր. 119—120. «Խուչախ»։

ԾԷ. ԳԼ.

ԹԱԹԱՐՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔՆ

Ծագումն և աշխարհակալութիւն Թաթարաց. Չինկիզ-խան.—Ջալալադդին Սուլթան Խորասանի և իւր աւերմունքներն.—Թաթարների բարբարոսութիւնները.—Տէր Ներսէս Բ. և Գանձասարի օծումն.—Տէր Ներսէս Բ.-ի Չարմաղանի կնոջ ներկայանալը.—Հայաստան արիւնլուայ. —Հռովմա Պապի առաջարկութիւնն ու մերժումն.—Աշխարհագիր և գլխահարկ.—Հոգևորականք և իշխանք Բաթու կուսակալին մօտ.—Հուլաւուի շինած քաղաքն.—Ջալալ-Դօլայի նահատակուիլն —Տէր Ստեփաննոս Գ.

Չինաստանի, Հնդկաստանի, Թիւրքեստանի և Սիբերիայի միջավայրում բնակւում էին այլևայլ թափառող ցեղեր Մուղալ-Թաթար անուն, որոց առաջնորդ Չինկիզ-խանն՝ ԺԳ. դարի Ա. քառորդում միաբանելով այդ թափառական ցեղերը՝ նախ արշաւում և նուաճում է Չինաստանը և գահագուրկ անում նորա իշխանները. ապա նուաճում է Հնդկաստանը, Խորազմները, Սմրղանդ, Բուխարա, Բահլ-Դուռնը և Պարսկաստանը, ուր և մեռնում է Չինկիզ-խան՝ իշխանութիւնը իւր որդւոց թողլով։

Թաթարների երեսից փախած Խորասանի Ջալալադդին-Սուլթանն իւր զօրքով, 1226-ին աւերակ դարձնելով Մեծ-Սիւնիքը, Հին-Նախիջևանը, Գառնին, Կոտէից գաւառում ճակատում է Սպասալար Իւանէի բանակին, կոտորում շատ վրացի և հայ զինուոր, գրաւում Տփխիսը և Գանձակը կոտորած անելով, անցնում Հայաստան և սպանուում Տիգրանակերտ քաղաքում [1]։

1235—1265 բարբարոս Թաթարներն՝ Չարմաղան, Բաթու, Հուլաւու և այլ զօրավարների առաջնորդութեամբ Դարբանդից մինչև Ս. երկրի սահմաններն և Պարսկաստանից մինչև Կոստանդնուպոլիս՝ ներկում են երկիրը անմեղ մարդոց արիւնով և հարկատու անում Ասիոյ պետութիւնները։ Հետզհետէ գրաւում են Դարբանդ, Պարտաւ, Շամախի, Շաքի, Գանձակ, Շամքոր և Տփխիս քաղաքները իւրեանց բոլոր գաւառներով, բայց մեծ արիւնհեղութեամբ։ Փութով գրաւում են Երզեվանք, Տէրունական, Մածնաբերդ, Գարդման, Չարեք, Գետաբակ, Տաւուշ, Կածարեթ, Նոր-բերդ, Գագ, Գաւարզին[2] Ականայ, Հաթերք, Լոռի և Կաչաղակաբերդ ամրոցները, թափում շատ արիւն, յափշտակում, կողոպտում եկեղեցեաց, վանօրէից և անապատաց զարդերը և անօթները, բանտարկում և չարչարում իշխաններ և հարուստներ, վարդապետներ և քահանաներ և պահանջում մեծամեծ փրկանք։ Վարդապետաց մէջ են լինում Վանական և իւր աշակերտն Կիրակոս [3]։ Այնուհետև որսական բարակների պէս հետախուզում են դժուարատար խոռոչներ, մութ մութ քարայրեր և թաքնուած ծերպեր, գտնում պահուած մարդիկ, որը սպանում և որը գերում։ Գագտագողի մտնում են Հաւքախաղաց ամրոցն, հաւաքուած բազ-

1) Վարդ. Բարձ. եր. 188—189 և Կիր. եր. 131—135։
2) « « « 190։
3) Կիր. եր. 143—146։

մութեան կէսը ճարակ տալիս սրերի և միւս կէսը գահավէժ անում բարձր քերծից, որոց ոսկերքն դեռ շատ ժամանակից յետոյ մնում են դիզուած քարակոյտի նման։ Պաշարում են և Խոխանաբերդը—անառիկ ամրոցը, որի մէջ ամրացած էր Խաչենի մեծ իշխան Հասան-Ջալալ-Դօլան, որ Վախթանգ իշխանի որդին է և Զաքարէ ու Իւանէ Սպասալար եղբարց քրոջ որդին։ Խոհեմ Ջալալս մեծ ընծաներով իջնում է ամրոցից, որով ազատում կոտորածից զինքը և իւրայինները և իւր ժողովուրդը [1]։

Այս դառնութեամբ լի օրերում 40 տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում է Տէր Յովհաննէս Զ.[2] որին
յաջորդում է իւր եղբայր Տէր Ներսէս Բ. կաթուղիկոսն։ 56

1240-ին վերջանում է Գանձասար վանքի հրաշալի շինութիւնն և օծուում մեծ հանդիսով Տէր Ներսէս Բ.-ի ձեռնով վարդավառի օրում, ուր ներկայ են լինում շատ եպիսկոպոսներ, վարդապետներ և 700 քահանայք և իշխաններ։

Թաթարներն իւրեանց հետ պատերազմի են տանում այնուհետև և հայ իշխաններ կամ հասած իշխանորդիներ հայ զինուորների մի մասով և արշաւում դէպի Հայաստան։ Տանում են Ճահանշահի որդի՝ Աւագը, Օրբելեան Էլիկումի որդի՝ Սմբատը, Թոփեանց Գրիգորի որդի՝ Սևադան[3]. Կիւրիկէ Գ.-ի որդի՝ Թաղիադին[4], Պռօշի որդի Հասանը, Ճիրանշահանց Ուզի որդի՝ Հասանը[5] Լիպարիտի եղբօրորդի Բուրթէլը և Սաթունը, ևայլն, ևայլն։

1) Կիր. եր. 157—159։
2) Տէր Յովհաննէս Զ.-ի անունն յիշուած է նաև մի յիշատակարանում «Արցախ» եր. 263։
3) Սևադաս սպանուում է Տիգրանակերտում. Վարդ. եր. 199։
4) Սա Տիգրանակերտից բերում է Հաղբատ Ս. Բարդուղիմէոս Առաքեալի աջը. Մաղաք. Աբեղ. եր. 28։
5) Սա Կեսարիայից բերած է մի Աւետարան «Արցախ» եր. 226—227 ։

Տէր Ներսէս Բ. Խամշի վանքից հրաւիրուում է Մուղանի դաշտն ներկայանալ Ելթի խաթունին–Չարմաղանի կնոջ, որ ազգաւ Ասորի էր։ Ելթինա իւր պատուաւոր հիւրը մեծապէս պատուելուց վերջն՝ տալիս է ուրիշ ընծաների հետ և Էլտամղա (հրամանաթուղթ) և ոմն Թաթար առաջնորդ, որ տանի և շրջեցնէ հայրապետը Աղուանից բոլոր քաղաքներում և գիւղերում անվնաս և ոչ ոք չնեղէ կաթուղիկոսը։ Ներսէս Բ. իւր հօտը մխիթարելուց յետոյ դառնում է Խամշի վանքն։

1243 և 1249 թուականներում արիւնլուայ է դառնում Հայոց և Վրաց դաշտերն և լեռներն անհամար մարդոց արիւններով, «ոչ միայն բանականաց, այլև անբանից, լերանց և դաշտաց, որք ոռոգեցան արեամբ և արտասուօք... անթիւ կոտորեցին և գերեցին զեղս և ագարակս.. 'ի Հայս և աւելի յաշխարհս Վրաց [1])»։ Գերուածներից գնում և ազատում են Խաչենցի իշխաններն եպիսկոպոսներ, քահանաներ, սարկաւագներ, աշխարհականներ և գրեանք [2])։

Մինչդեռ Հայոց, Ասորոց, Աղուանից և Վրաց և Յունաց երկիրներն այսպէս ներկուում էին անթիւ նահատակաց արիւնով և արտասուօք, Հռովմայ ս. Պապն, փոխանակ մխիթարական գրութիւններով մխիթարելու Հայաստանեայց եկեղեցին, Քրիստոսի ծննդենից 1251 տարի անցնելուց յետոյ յարուցանում է Հոգւոյն Սրբոյ 'ի Հօրէ եւ յՈրդւոյ բղխման խնդիր և իբրև մի կռուածաղիկ խնձոր գլորում Հայոց, Ասորոց և Աղուանից ու Վրաց արիւնոտ դաշտերում։ Սակայն սոյն եկեղեցիներից մերժուում է այդ առաջարկութիւնն «Եւ ոչ եղև հաճոյ Ասորոց և Յունաց և Հայոց և Վրաց (և Աղուանից) որք քննեցին զդաւանութիւն առաջնոցն սրբոց 'ի ձեռն

1) Վարդ. Բարձ. եր. 193—194։

2) Կիր. եր. 164 և 167։

աստուածամերձ վարդապետին Վանականի [1]) (զոր) և գտին համախոհ երևելի արանց փառաւորաց—Աթանասի, Գրիգորի աստուածաբանին.. և Գրիգորի Լուսաւորչին և այլոց սրբոց» (Վարդ. Բարձ. եր. 194—195)։

1253—1255 Թաթարաց Մանկու խանի հրամանաւ աշխարհագիր է անում Արղունն բոլոր նուաճուած ազգերը։ Բացի 60 տարեկան ծերերից, երախաներից, հոգևորականներից և իգական սեռից, սահմանում են գլխահարկ իւրաքանչիւր հարկատու անձի համար 21 [2]) արծաթ դրամ, 100 լիտր ցորեն, 50 լիտր գինի, 2 լիտր բրինձ, 3 տոպրակ, 2 չուան, 1 նետ, 1 պայտ և 20 անասուններից մինը անխափան վճարել։ Հարկեր են սահմանում նաև ձկնորսների համար ծովերի, լճերի և գետերի և մինչև հանքերի վերայ։ Բաց յայդցանէ անտանելի է լինում կաշառակերութիւնն և հարկահանների տուած նեղութիւններն [3])։

Չափազանց ծանրանում են հարկերն, յափշտակուում են կարասիներ և կալուածներ, վասն որոյ դիմում են Բաթու մեծ իշխանին, որ գրաւելով Կովկաս մեծ սարի հիւսիսային կողմի ցեղերը՝ բնակում էր այժմեան Հաշտարխանի տեղում, եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և իշխաններ, որոց մէջ են լինում Խաչենի Գրիգոր եպիսկոպոսն, Մարկոս վարդապետն, Ջալալ-Դօլան, Վերին-Խաչենի Գրիգոր իշխանն և Փառիսոսի Գեսում պատանի պարկեշտ իշխանն։ Բաթուն հրամանագրերով յետ է դարձնում իւրաքանչիւրի յափշտակուած իրաւունքները։ Ազատութեան հրամանաթուղթ է տալիս Ջալալի միջոցաւ և Աղուանից Ներսէս հայրապետին վանքապատ-

1) Վանական վարդապետի այս քննութիւնը համեմատելով նախնի հարց դաւանութեան հետ համաձայն են գտնում, որով մերժում են Ս. Պապի առաջարկութիւնը։

2) Ըստ Մաղ. աբեղայի 60 դրամ։

3) Կիր. եր. 218 և 225։

կան գոյից և ստացուածոց մասին, որ և կարողանայ համարձակ շրջել իւր վիճակի ամեն տեղերում [1]։

1259 Հուլաւու-էլ-խանն Մուղանում [2]) շինել է տալիս ձմերանոց քաղաք և պալատ իւր համար։ Մեծ Սիւնեաց-Սմբատ իշխանի վերակացութեամբ փայտեղէնը բերել է տալիս Բասենի (այժմեան Սողանլուի) անտառի մայրի փայտերից [3])։

1261-ին հարկահան Արղունի անողորմ հրամանաւն Ղազւինում նահատակւում է Ջալալ-Դօլա իշխանն, որի մարմինը բերել տալով իւր որդի Աթաբակն՝ ամփոփել է տալիս Գանձասարի գաւթումն։ Ջալալս թողնում է 2 որդի՝ Աթաբակ և Ուքան և 2 դուստր՝ Ռուզուքան և Մինա։ Իշխանութիւնը շարունակում է Աթաբակն [4])։

1262-ին ջրգողութեան ցաւով վախճանւում է Աղուանից
Տէր Ներսէս Բ. հայրապետն 27 տարի պաշտօն վարելով, որին
57 յաջորդում է Տէր Ստեփաննոս Գ. պատանի հասակաւ (Կիր.
եր. 236)։

---

[1]) Կիր. եր. 214—216։

[2]) Դառին կամ Դարան դաշտում, որի աւերակներն երևում են այժմ Լանքարանի կողմերում։

[3]) Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 161 և Վարդ. Բարձ. եր. 199։

[4]) «ՉԹ. (1260)... յիշխանութեան Ուքանին»։ Երևում է որ Ուքանս փոքր ժամանակ գահակալած է Աթաբակի բացակայութեան պատճառաւ («Արցախ» եր. 222)։

ԾԸ. ԳԼ.

Թաթարաց տարեմտի պատճառաւ.—Վախճան Աղուանից բազմարդիւն մշակաց.—Աւերմունք և փախուստք.—Ներքին պատերազմ, Բայտու-խան յաղթող և գրաւումն Ամարասի թանկագին հնութեանց.—Գահակալութիւնք Ջալալեան և Թոփեան և Զիրանշահանց իշխանների.—Գահակալութիւնք Տէր Սարգիս և Տէր Պետրոս Բ. կաթուղիկոսաց.—Գահակալութեան սաստիկ կռիւ խաների և զօրաց մէջ և արիւնհեղութիւն։

—∞—

Թաթարաց տարեմտի պատճառաւ 1264-ին Տփխիսեցի Շնորհաւոր անձի ձեռնով՝ Հոլաւու—Էլխանից հրաւիրւում է Վարդան Բարձրբերդցին, որ Սարգիս և Գրիգոր վարդապետների և Տփխիսու Աւագ-երիցու հետ ներկայանում է նոյն խաների և Տփխիսու Աւագ-երիցու հետ ներկայանում է նոյն խանին, ուր լինում է նաև Հեթում Հայոց թագաւորն և Դաւիթ Վրաց թագաւորն։ Վարդան վարդապետն, թէև բաւական խօսակցութիւն է ունենում Էլխանին հետ, սակայն ասում է. Ցարմար միջոց չեղաւ, որ խնդրէի Էլխանիցն հարկերը թեթևացնելու [1])։

1213-ին վախճանւում է բազմարդիւն Գօշ-Մխիթար վարդապետն և ամփոփւում իւր շինած Ս. Հոխփսիմէ մատրան մէջ [2])։ 1263-ին վախճանւում է խորին ծերութեան մէջ Տուեցի կամ Տաւուշեցի Յովհաննէս արքեպիսկոպոսն, որ առաջին վարժապետն եղած էր Գօշ-Մխիթար և Վանական վարդապետաց և ամփոփւում իւր շինած Վարագ վանքում [3])։ 1267-ին վախճանւում է ս. եկեղեցւոյ բազմաշխատ մշակն՝ Վանական Յովհաննէս Տաւուշեցի վարդապետն և ամփոփւում իւր շինած

---

[1]) Վարդ. Բարձ. եր. 204—213։

[2]) «Արցախ» եր. 355։

[3]) « եր. 336—338։

Խորանաշատ վանքի արևելեան հանդէպ արտաքուստ[1]. 1271-ին վախճանում է պատմաբան Կիրակոս վարդապետ Գանձակեցին և Վարդան վարդապետ Բարձրբերդցին, որք Վանական վարդապետի աշակերտներն էին[2]։

Ս. Օրբելեան, եր. 178—179, ասում է. Այն ժամանակ (1290-ին) աներմամբ ապականուած էր բոլոր երկիրն, խափանուած էին վանքերն իւրեանց պաշտամունքներից և ամենքն առհասարակ դիմելով այստեղ (Մեծ-Սիւնիք) գտնում էին հանգիստ. եկն և Աղուանից Տէր Ստեփաննոս կաթուղիկոսն և բնակեց այստեղ։ Եկին և ուրիշ եպիսկոպոսներ և վարդապետներ և իշխաններ։

Խանութեան պահակալութեան պատճառաւ ծագում է Թաթարաց մէջ ներքին խռովութիւն, կոտորում են մէկզմէկ գահի հետամուտներն. սպանւում են շատ զօրք և զօրապետ, կողոպտւում են գիւղերն և աւաններն և վնասւում բնակիչներն։ Վերջապէս զէնքի զօրութեամբ խան է նստում Բայդուն Սարովի դաշտում[3]. և Մեծ-Սիւնեաց Տարսայիճ իշխանի որդի՝ Ջալալի և Թաթար զօրականների ձեռնով բերել է տալիս Ամարասից Ս. Լուսաւորչի թոռն Գրիգորիս Աղուանից կաթուղիկոսի գաւազանը և 36 պատուական քարերով զարդարուած համակ ոսկի ձեռաց խաչը։ Յետոյ այդ թանկագին իրերը Դսպինան ուղարկում է Կ. Պօլիս իւր հօր—Յունաց կայսեր, որ Ապաղախանի կինն էր և Բայդուն-խանիս մայրակիրն[4]։

Ջալալեան Աթաբակ իշխանն գահակալեց 1261-ին. Գան-

1) «Արցախ» եր. 324 Երրորդ Մատուռն։

2) Մաղ. աբեղայ.

3) Այժմ ևս Սարով է կոչւում գիւղն, որ գտնւում է Ուտի-Առանձնակ գեղեցիկ դաշտում։

4) Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 217—218։

ձասարի արձանագրութիւնից պարզ երևում է՝ որ չլա=1282-ին[1] տակաւին իշխում էր սա, բայց ոչ սորա վախճանն յայտնի է մեզ և ոչ սորա գերեզմանն։ Սակայն ակներև երևում է Մեծ-Իրանաց Ս. Յակովբայ վանքի արձանագրութիւնից, որ չխբ=1292-ին[2] Ջալալ Բ. արդէն տեղակալած էր իւր հօր՝ Աթաբակ Ա-ոյն, նոյնպէս անյայտ է մեզ և սորա վախճանն։ Թոփեան Գրիգոր Գ.-ին յաջորդում է իւր որդի Վահրամն և Վահրամին իւր որդի Աղբուղէն. իսկ Մեծ-Կողմանց Հասան իշխանին յաջորդում է իւր որդի՝ Համբեր Ճիրանշահանց[3]։

1323-ին վախճանում է Աղուանից Տէր Ստեփաննոս, որին
յաջորդում է Տէր Սուքիաս։ Հարկ է յայտնել որ Տէր Սուքիա- 58
սիս և սորա յաջորդ Տէր Պետրոս Բ-իս անուններն միայն 59
կան 'ի շարս կաթուղիկոսացն Աղուանից. սակայն անյայտ են սոցա գահակալած և վախճանուած տարեթիւերն և գործերն. թերևս այն պատճառաւ, որ այդ ժամանակամիջոցներում տեղի են ունեցել արիւնահեղ պատերամներ և արհաւրալից օրեր, որոց մէջ արդէն վախճանուած են եղել Աղուանից պատմիչներն, և այս ու այն կողմերն փախած իշխաններն և հասկացող մարդիկ, որպէս տեսանք վերև և կըտեսնենք ստորև։

Աղուանից, Հայոց, Ասորոց, Պարսից, Թուրքեստանի և Ռուսաստանի իշխող Թաթար և Թիւրքման խաների և կառավարիչների և խանզադաների և զօրքի մէջ յաճախակի տեղի են ունենում արիւնահեղ կռիւներ և սոսկալի ճակատամարտներ։ Սպանւում են շատ թաթար խաներ և խանզադաներ, կոտորւում են և վիրաւորւում չափազանց զօրք և զօրապետ, վասն որոյ աստիճանաբար քայքայւում է Թաթարաց ներքին կազմակերպութիւնն և օր ըստ օրէ տկարանում զինուորական

1) «Արցախ» եր. 178 վերջին հատուած։

2) « « 170 և 178 երկրորդ հատուած։

3) « « 227։

ուժն ու զօրութիւնն, մանաւանդ Մահմետական կրօնը ընդունելուց յետոյ։ Զօրք և զօրապետ շփուելով Պարսից, Թիւրքմանաց և Արաբացւոց և Թիւրքաց հետ, ընդունում են նոյա կրօնը և վարւում Քրիստոնէից հետ խիստ թշնամաբար և սրածութեամբ, մանաւանդ Հայոց և Աղուանից հետ։ Այս ներքին երկպառակութեամբ և հանրածաւալ խռովութեամբ և գահակալութեան բուռն ձգտմամբ քայքայւում էր Չինկիզ-խանի ստեղծած հզօր տիեզերակալութիւնն նոյն իսկ իւր ծնած տեղից սկսեալ մինչ Ռուսաստան [1])։

ԾԹ. ԳԼ.

Լանկ-Թամիրի ծագումն և զօրանալը.—Ղրիմի Թոխտամիշ-խանի ջանքերն և Ջանիբէկի գերեվարութիւնն.—Լանկ-Թամիրի արշաւանքներն Բաբելոնի, Արարատեան, Մեծ Սիւնեաց, Վրաց, Աղուանից, Դամասկոսի, Վանայ, Ռուսաստանի և Հնդկաստանի վերայ և նորա մահն.—Այտին բէկ.—Տէր Կարապետ.—Տուրսուն։

—∞—

1335-ին Մահանայում, որ Սմրղանդից հեռի չէ, ծնում է Թամիրն, որ մօր կողմից Չինկիզ-խանի ցեղից էր և կրօնքով մահմետական։ Թամիր, իւր հօրեղբօր՝ Սերֆ-էդդին-խանի մահից յետոյ ներքին խռովութեանց ժամանակ, 1357-1358 անցնում է Բերլան ցեղի գլուխն, միանում Հիւսէյին-խանի հետ, գահընկեց անում Թաթարաց Չաղաթայի որդի Թուղլուք-Թէմիւր-խանը, բայց ինքն էլ ոտից վիրաւորուելով մնում է կաղ, վասնորոյ կոչւում է Լանկ-Թամիր[2])։ Վեց տարուց յե-

---

[1]) Ս. Օրբէլ. Բ. Հատ. եր. 219—225։

[2]) Սա կոչւում է Լանկ-Թամուր, Լանկ-Թամիր, Թամիւր-Լանկ, Տամուր-Լանկ, Թէմուր-Լանգ, այս է Կաղ-Թամիր։

տոյ գահընկեց է անում նաև Հիւսէյին-խանը և միակ բացարձակ տէր դառնում Բահլ-Դրան և Բահլ-քաղաքին։ 1370-ին Լանկ-Թամիր իւր աթոռանիստը փոխում է Սմրղանդ. ապա հետզհետէ տիրում Խորազմին, Կաշկարին, Խորասանայ և Պարսկաստանին և Բաբելոնին։

Ղրիմի Սարայ քաղաքում նստող Թաթար Թօխտամիշ-խանն, Ջանի-բէկ ամն զօրավարի առաջնորդութեամբ 1386-ին զօրք է յղում Պարսկաստան։ Ջանի-բէկ մտնելով Թաւրիզ աւերում է քաղաքը և գերում 200,000 հոգի. ապա մտնելով Հին-Նախիջևան և Մեծ-Սիւնիք գերում շատ մարդիկ. բայց ձմրան խստութեան պատճառաւ թողնում է գերիները և հեռանում։

Իսկ Լանկ-Թամիրն միևնոյն 1386 ի գարնան Բաբելոնից դառնում է Թաւրիզ. ապա արշաւում Մեծ-Սիւնեաց վերայ, կրակում Տաթևի զանգակատունը, կործանելով Արարատեան նահանգի գիւղերը, աւանները, բերդերը, եկեղեցիները, կոտորում և գերեվարում շատ մարդիկ և շատ ձեռագրեր, սպանում Բջնու եպիսկոպոսը, անցնում Հաղբատի ձորով Վրաստան, տաճկացնում Վրաց Բագարատ թագաւորը, գերեվարում և Աղուանքից 75,000 (ըստ այլոց 25,000) գերիներ և ձեռագրեր և այսպէս անցած տեղերը *աւերակոյտ* և *աւերակ* թողլով տաճկացնում է գերիներից շատերը, կոտորում մի մասը և բնակեցնում Սմրղանդում մնացեալները. իսկ ձեռագիրները լցնել տալիս մի մեծ բուրգի մէջ Սմրղանդում։

Մարդկութեան այս հրէշն-Լանկ-Թամիր այնուհետև արշաւում է Դամասկոսի վերայ. կոտորել տալիս 700,000 մարդ, շինել տալիս կոտորուածների գլուխներից 7 բուրգ, նոյնպէս և Բաբելոնում. գերեվարում Սեբաստիա քաղաքի և գաւառների աղքատ դասակարգը, չարչարում հարուստները, ժողովում թագցրած գանձերը, ձիերի ագիներից կապոտել տալիս կիները, ժողովել տալիս մի դաշտի մէջ անհամար տղաներ և աղջիկներ, իբրև *մարդաշան* կասել տալիս ձիերի ոտից տակ և կենդա-

նի թաղել տալիս 4000 զինուոր։ Գրաւում է Վանայ ամրոցը, որի բարձր ժայռից թափել տալիս այնքան մարդիկ, որ վերջին ձգուածներն մնում են կենդանի. այնպէս որ ոչ սպանուածների թիւն իմացուած է, ոչ ձգուածների և ոչ Հայաստանից գերուածների։ Աղուանքից և Վրաստանից ևս տանում է կրկին անգամ շատ գերիներ Սմրղանդ։ Ժամանակակից Թովմայ Մեծոփեցի պատմիչն, եր. 32, ասում է. «'ի յԱրճիշոյ մինչև 'ի տունն Վրաց և մինչև 'ի Կուր գետն Աղուանից չարախեցաւ արևամբ անմեղաց երկիր ամենայն չարչարանօք, սպանմամբ և գերութեամբ։ Եւ յետ երթալոյ նորա (Լանկ-Թամիրի) յաշխարհէս մերմէ, եկն սով սաստիկ… զի ջնջեցաւ մարդկութիւնս, մանաւանդ Հայկազեան»։

Լանկ-Թամիրն 1396-ին արշաւում է Ռուսաստանի վերայ, սպանում Թօխտամիշ-խանը, աւերում Սարայ քաղաքը, աւերում Դօնից մինչև Մոսկվա, թագաւորեցնում Ռուս խանի որդին և շատ գերիներով դառնում Սմրղանդ։ Ապա 1398-ին արշաւում է Հնդկաստանի վերայ, յաղթում Սէյկաց և Աֆղաններին, հիմն 'ի վեր տապալում Դիլլի և Միւլթէ և ուրիշ քաղաքներ և գիւղեր… վերջապէս մեռնում է Սիհուն գետի մօտ։ (Թով. Մեծոփ. եր. 13-ից մինչև գրքի վերջն և Ս. Անեցի եր. 171—172)։

Ջալալ Բ.-ին յաջորդում է իւր որդի Ախթարակ Բ. [1]). Աղբուղէին յաջորդում է Տուրսունն և Տուրսունիս՝ Այտինն, որի մասին ասում է՝ Աղուանից Եսայի Ջալալեան կաթուղիկոսի ժողոված արձանագրութիւնն՝ «Ի ժամանակի սորա (Այտնի) 'ի զաւրանալ Իսմայէլացւոցն և 'ի տանս Հայոց, ցիր և ցան լինիլ իշխանացն Հայոց, յարեան այլազգիքն և զմուլքն (կալուածները) մեծ իշխանին Հասանայ պէթմալմալ արարին. գնաց պարոն Այտինն 'ի դիւան և երեք ամ աշխատեաց, և բազում ինչս

¹) «Արցախ» եր. 177, հատուած երրորդ։

տուեալ՝ ազատեաց 'ի ձեռաց այլազգեացն զվանորայքս և զշինարէքն» [1])։

1406-ին Տէր Պետրոս Բ-ին յաջորդում է Տէր Կարապետ, 60
չգիտենք ինչ պատճառաւ Գանձասարից, որ կաթուղիկոսարան եղած էր, անցնում է Կապաղակ գաւառն և Ճալէթում 'ի հիմանէ կառուցանում Ճալէթի վանքը, ինչպէս վկայում է արձանագրութիւնն. «Յանուն Աստուծոյ ես Կարապետ կաթուղիկոս շինեցի զեկեղեցիս 'ի թվին պկ. (1411)-ին յիշատակ հոգւոյ իմոյ. յաղաւթս յիշեցէք» [2]), և իւր աթոռը դնում է այդ վանքում և նեղութեամբ ապրում։

Կ. ԳԼ.

Լանկ-Թամիրի ցեղի ջնջուիլն.—Սքանդարի արշաւանքն.—Եռնջակ բերդի պաշարումն.—Ջահան-Շահի աշխարհակալութիւնն.—Օսմանցւոց ծագումն և զօրանալն.—Աթոռակալութիւն Տէր Դաւիթ, Տէր Մատթէոս, Տէր Աթանաս և Տէր Գրիգոր կաթողիկոսաց.—Ծագումն մէլիքութեան և իւզբաշիութեան հրամանաւ Ջահան-Շահի.—Մէլիք-Պապի, Հատիր-Մէլիք, Մէլիք-Ուլուխան։

—∞—

Դարձեալ ծագում է ներքին արիւնահեղ պատերազմ մեռած Լանկ-Թամիրի որդւոց և թոռանց մէջ 1404-ին, որք յարձակելով միմեանց վերայ կոտորում են մէկզմէկ նախապահութիւնը յափշտակելու համար. գրեթէ մնում է միայն Շահ-Ռուհ՝ որդին Լանկ-Թամիրի։

Սելջուկեան Մահմուտի որդի Ղարա-Իւսուփն, որ Սասնոյ ամիրան էր, տալիս է Հայաստանին և Պարսկաստանին մե-

¹) Տես «Արցախ» եր. 207։

²) «Աղ. երկ. և Դր.» եր. 249։

ծամեծ վնասներ։ Իսկ սորա որդի Սքանդարն աւերում է երկիրը, անում շատ կոտորած Վանայ կողմերում. փոխադրում իւր գերդաստանը Երնջակ ամրոցն, արշաւում Ճամախու վերայ, անում կոտորած և գերեվարութիւն. անցնում Դարբանդի դռնով, կոտորում անհամար թաթարներ և դառնում Երնջակի ամրոցն։

Շահ-Ռուհն, լսելով Սքանդարի պատճառած չարիքները, գալիս է Խորասանից և պաշարում Երնջակ ամրոցը։ Սքանդարիս կինն և որդին՝ Շահուբաթ, տեսնելով որ ազատում չկայ Շահ-Ռուհի ձեռքից ուրիշ որևէ միջոցաւ, լաւ արբեցնում են Սքանդարին, կտրում նորա գլուխը և յղում Շահ-Ռուհին 1436-ին։

Գլխատուած Սքանդարիս եղբայր Ջահանն, որ Շահ-Ռուհից կուսակալ կարգուած էր Թաւրիզի նահանգին, (թերևս այդ սպանման դէպքի պատճառաւ) Շահ է հաստատւում յիշեալ շահից Պարսկաստանի վերայ և այնուհետև կոչւում Ջահան-Շահ (Թով. Մեծ. եր. 99—107)։

Ջահան-Շահս տիրում է Արարատեան և Մեծ-Սիւնեաց և Աղուանից նահանգներին. ապա օր աւուր զօրանալով 1440-ին առնում է Շամշուլտէ քաղաքը, կոտորում 3000 մարդ և գերեվարում 9000 վրացի և հայ. 1444-ին գրաւում է Ախալցխա քաղաքը և գերի տանում շատ մարդիկ։ Այնուհետև հետզհետէ նուաճում է Շիրազ, Քիրման, Ասպահան, Խորասան և Հրէ քաղաքները, Ճօղբէկ կոչուած թաթարները և սպանում Հրէ քաղաքի տիրող Պուսայիտ-խանը, որ Լանկ-Թամրի ցեղից էր. և հեռացնում Թաթարները Աղուանքից, Վրաստանից և Հայաստանի իւր մասից և իւր որդի Հասան-Ալի-խանը կուսակալ կարգում Հին-Նախիջևանում [1])։

Օսմանցիք ծագած են Գեօգ (Երկինք) խանի սերնդից։

[1]) Ս. Անեցի եր. 172—174. Պատ. Առաք. վ. եր. 485։ Ջահան-Շահս կոչւում է Արաքացւոց պատմութեան մէջ Ջահան-Ամիրա, Ջահան-Սօլթան և Ջահան-Փաթիշահ։

Գայալփայի որդի՝ Սուլէյման-խանն, որ իւր 5000 ծուխերով Սելջուկեաններին հետ եկած և բնակած էր Եկեղեաց Երզնկայ գաւառում, Չինկիզ-խանի մեռնելուց յետոյ՝ դառնում է իւրայիններով գնալ իւր երկիրն Թիւրքեստանի Մահանայ գաւառն, բայց խեղդւում է Եփրատ գետում, որի մարմինը հանելով թաղում են իւր չորս որդիքն Ճամպեր ամրոցի մօտերքում։ Չորս եղբայրներից երկու մեծերն դառնում են Խորասան, իսկ երկու փոքրներն—Դունդար և Էրդօղուլն բնակում են Բասենի դաշտումն։ Էրդօղուլն իւր քաջութիւններով գրաւում է Ալահադդին-Սուլթանի ուշադրութիւնը, որից բնակութեան տեղ է ստանում Գարաջա անուանեալ սարը, որ կայ Անկիւրիա գաւառի արևմտեան կողմում։ Էօրդօղուլն մերձակայ Յոյներից պատերազմաւ առնում է Գարաջա-Հիսարը և Կուդինայի ու Քեօթահիայի մօտերքում ուրիշ տեղեր և մեռնում թողլով երեք որդի—Օսման, Կինդիւզալփ և Սաւճի, որք թաղում են իւրեանց հայրը Սէօկիւթ աւանում [1])։ Հետզհետէ յառաջադիմելով հիմնում են պետութիւն, որ *Օսմանի* անուամբ կոչւում է Օսմանեան Պետութիւն, Օսմանեան տոհմ, Օսմանցիք, Թիւրք և Տաճիկ սուննու աղանդով։

1406—1442 գահակալում են Աղուանքում.

Տէր Կարապետին յաջորդում է Տէր Դաւիթ. 61

Է [2]) Տէր Մատթէոս Գ. 62

Տէր Աթանաս [3]) և 63

Տէր Գրիգոր Ա. [4])։ 64

Թիւրքերն պատերազմաւ առնում են Կ. Պօլիսը և սկսում աջ ու ձախ ընդարձակել իւրեանց Պետութիւնը։

[1]) Պատ. Օսման. Ա. Հատ. եր. 3—21։

[2]) «Այս է հանգիստ Դաւիթ Կաթուղ. ՊԿ. (1441) թվին»։

[3]) Աթանասիս անունն կայ, նոյնպէս և գերեզմանն Դադի վանքում, «Արցախ» եր. 157 և 206։

[4]) Գրիգոր կաթ. գերեզմանն նոյնպէս կայ նոյն վանքում։

Ջահան-Շահն, հեռատեսելով վտանգը և տեսնելով Օսմանցւոց օր աւուր յառաջանալը, սկսում է զօրեղացնել իւր տէրութեան ներքին քայքայուած ուժերը և մէն մի գաւառում վերանորոգել և կեդրոնացնել նոյն գաւառի սեպհական ոյժը, որ նուազած էր Թաթարաց և Սելջուկեանց երկարատև պատերազմներով, մանաւանդ Արարատեան, Մեծ-Սիւնեաց, Արցախեան և Աղուանից գաւառներում։ Այս պատճառաւ այդ նահանգների գաւառներում եղած Հայոց բէկութեան իշխանութիւնները փոխում է Մէլիքութեան և ժամանակակից բէկերը անուանում է Մէլիք և իրաւունք է տալիս իւրաքանչիւր Մէլիքի, որ պարտաւորեալ պահէ ըստ կարողութեան զօրք և մի զօրավար իւզբաշի տիտղոսով, բայց ծանրացնում է հարկերը։

Արժան համարեցինք զետեղել այստեղ հետևեալ հատուածը մի գրչագրից. «'Ի թուականութեան Հայոց ՋԴ. (1455) 'ի կաթուղիկոսութեան Տեառն Գրիգորի (Աղուանից) 'ի զանութեան Տաճկաց (Պարսից) Ջիհան-Շահի 'ի դառն և 'ի նեղ ժամանակիս, որ 'ի խստութենէ այլադաւան սեռի, որ յահէ և յերկիւղէ նոցա մաշեալ և հալածական լինէաք, փախստեայք և մոլորեալք, գերեալք և տատանեալք։ 'Ի յառաւել խստութենէ հարկապահանջութեան և հոլովութենէ գերելոյն և չքաւորութենէ ընչից ոչ կարէր օգնել եղբայր եղբօր և ոչ ողորմէր ազգս ազգիս...։ Եւ ես... տառապեալ ծերունիս Գրիգոր՝ երկրուն տատանեալ շրջեցայ...[1])

Ահա այսպիսի դառն ժամանակում ծնունդ է առնում Մելիքութիւնն։

Դիզակ և Վարանդայ գաւառների վերայ իշխում է Ախիջան կամ Հախիջան իշխանի որդի Մէլիք-Պապին [2]). Խաչէն և

[1]) «Արցախ» եր. 281։

[2]) « եր։ 107։

Ջրաբերդ գաւառների վերայ՝ Ջալալեան Սայտուն իշխանի որդի Մէլիք-Հատիր կամ Հատիր-Մէլիքն. Ծար և Սօդ գաւառների վերայ՝ Շահանշահ իշխանի որդի Մէլիք-Ուլուբէկն, յորոց իւրաքանչիւրն իւր հարիւրապետ զօրավարով։

Ամենապատիւ Սրբազան Տէր

Այս տեղ դասաւորում եմ *իշխողների* անունները առանձնապէս. նոյնպէս և մի քանի իշխանական տոհմերի **ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**, խիստ կարևոր համարելով. որովհետև ծանր երևեցաւ ինձ ընդհատել պատմութեան շղթան, ծանրաբեռնել պատմութիւնը խճողուած ծանօթութիւններով և պատճառել տաղտուկ և ձանձրութիւն և Ձեզ և բանասիրաց և ընթերցողաց։ Հարկ է յայտնել թէ դասաւորում եմ այնքան, որքան կարողացայ ձեռք բերել պատմութիւններից. արձանագրութիւններից և յիշատակարաններից։ **ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՍ** կարող է աւելի լուսաբանել պատմութիւնը, մանաւանդ Արցախի նկատմամբ։

Կասկած չկայ որ սկզբից մինչև այս շարքն Աղուանքում և Արցախի բոլոր գաւառներում իշխած են շատ նախարարներ, թագաւորազուններ, իշխաններ և տանուտէր նահապետներ։ Բայց դժբախտաբար անյայտ են այժմ նոցա անուններն և գործերն։

Պատմութեանս մէջ արդէն շարքով նշանակուած են Արշակունի Վաչականեան թագաւորաց և Սասանեան Միհրանի իշխող տոհմի և Դարբանդի վերջին թագաւորների անուններն և գործերն կարելւոյն չափ։ Հետևապէս սկսում եմ շարել միայն յայտնի եղածները։

«Ես Վաչական՝ Աղուանից արքայ... և նահապետք Արցախայ և Բակուր Կաղանկատուց նահապետ և բազումք...

Մուծիկ արքայի հրամանատար, Միրհաւրիկ հազարապետ. ազգապետք-Մարութ, Տիրազգ, Ասպրակոս, Ճամայ, Բակուր, Առատան, Արշէս, Վարդան քաջ Գարդմանատէր (Ճամախու) Խուրս, Գերմանոսան, Խոսգեան, Փիրոզ նահապետ և ամենայն ազատք Աղուանից» (Կաղ. Ա. Հատ. ԻԶ. գլ.)։

Ճիրոյ Աղուանից իշխան, Ջուանքոյ Աղուանից Սպարապետ, Վարդան պատրիկ և նորին եղբայր Գագիկ (վերջին եղբարքս որդիք Վարազ-Տրդատայ) Բաբ 'ի Հրահատեան (ազգէ) Կապաղակ և Կողթ գաւառի, Վախտանգ Վարազմանեան, Պատրիկ 'ի Քարոյեան յազգէ թագաւորաց, Վահան 'ի Վարազ-Յոհանեան Կապլճանի, Թէոդորոս 'ի Ցանաստոյեան, Ռոստամ Վարազ-Աքոյեան Կաղանկատուց, Ջարմիհր 'ի Վարազ-Քուրդակեան ազգէ թագաւորաց, Մահմատ 'ի Ճերոյեան և ամենայն ազատք աշխարհիս» (նոյն Գ. Հատ. Ը. և Ժ. գլ.)։ Եռանշահիկ Արմիհր. «Թագաւորազն Կողթայ տեառն տուն... յԱրշակաշէն գաւառի երեք տունք—դաստակերայն, Ճնշմիայն և Մամշեղուն... Հեջերւոյ 'ի Գիւն Վարազ-Պերոժի տունն. Արաժանու (Արաշի) Վարաժնու տունն» նոյն Բ. Հատ. ԼԲ. գլ. և ձեռ. Մատ. Թ. 58 և 100 և Սամ. Անեց. եր. 286)։

Համամ իշխան Գանձակի
Գագիկ իշխան որդի Համամայ } Վարդ. Բարձ. եր. 135։

Ջաւէ-Ղազախ-գաւառի

Սևուկ իշխան,
Գէորգ Նահապետ,
Արուես՝ եղբայր Գէորգայ
Ստեփաննոս-Կոն, } Յով. կաթ. եր. 235—236 և 162։

Հասան իշխան՝ շինող բերդին Կայենոյ (Վարդ. Բարձր. եր. 184)։

Կողթ գաւառի

Պապ կամ Բաբ Հրահատեան,
Վախտանգ Վարազմանեան,
Վարազոյ որդի Վախտանգայ,
. . . .։
Բլու-Զաքարէ
Վահրամ որդի Բլու-Զաք. } Կիր. եր. 95։
Աղպուղէ որդի Վահրամայ

Փառիսոս եւ Քաւս գաւառների

Գեսում իշխան Առանշահիկ տոհմից,
Սենեքերիմ իշխանաց իշխան և ապա թագաւոր,
Գրիգոր թագաւոր՝ եղբայր Սենեքերիմայ,
Հասան՝ իշխան Գեսումեանց,
Գրիգոր փառաւոր իշխան որդի Հասանայ,
Փիլիպէ՝ որդի Գրիգորի (Վարդ. Բարձ. եր. 134—135)։
Խորէն { թվ. ՉԻ.=1271
Հայրապետ
Սասնայ { թվ. ՋԼ.=1481 } Արցախ եր. 307 և 335։
Սարգիս՝ որդի Սասնայի
Սադորնոյ մեծ իշխան
. . . .
Վասակ իշխանաց իշխան Բագրատունի
Դաւիթ՝ որդի Վասակայ (Արցախ եր. 337)։
Վասակ՝ որդի Դաւթի։

Գարդմանի Արցախայ

Խուրս,
Կորիճ, } Յով. կաթ. եր. 377
Մովսէս կուրացեալ Աշոտ թագաւորից } —379։

Ազգաբանութիւն Կիւրիկեանց

Այս տոհմն բնակած է Ճամշուլտէ, Չորագետ, Լօռի, Տաւուշ և Մածնաբերդ ամրոցներում և իշխած Գարդման, Փառիսոս, Քաւս, Կողթ և Ձաւէ և Լօռի գաւառների վերայ։
Գուրգէն թագաւոր՝ որդի Աշոտ-Ողորմածի։
Դաւիթ-Անհողին՝ որդի Գուրգէն թագաւորի։ Անհողինս շինում է Լօռի բերդաքաղաքը, որի մէջ և հաստատում իւր բնակութիւնը։
Կիւրիկէ թագաւոր՝ որդի Դաւթի-Անհողնի, որի ամուսինն է Թամար թագուհի, Աբաս, Դաւիթ, Մարիամ, Ռուսուդան և Բաւրինայ՝ որդիք և դստերք Կիւրիկէի։
Աբաս թագաւոր՝ որդի Կիւրիկէի և իշխող Տաւուշ բերդի. իսկ Դաւիթ թագաւորազն իշխում է Մածնաբերդի։ Վախճանում են երկու եղբարքս և ամփոփւում Հաղբատ վանքում։ Դաւթից մնում է մի որդի
Կիւրիկէ անուն։ Կիւրիկէ Բ. իշխանիցս ծնուում է
Աբաս Բ. որի կինն է Նանայ, որ քոյր էր Սպասալար Զաքարէի։ Երկու տարուց յետոյ վախճանում է Աբաս Բ. թողլով մի որդի
Աղսարթան անուն, որ ամուսնանում է Բագրատունի Վասակեան Դաւիթ[1]) իշխանի դստեր հետ. Դաւիթ նենգու-

---

1) Սա և իւր հայր Վասակ իշխանն, որ նստում էին Նոր բեր-

թեամբ գրաւում է Մածնաբերդը, բայց հալածւում է բերդի բնակիչներից, կրկին նստում և իշխում է Աղսարթան։ Կիւրիկէ Գ. որդի Աղսարդանայ, կինն Թամար, որոց որդիքն են Փահլաւան, Թաղիադին և Աղսարթան (Վարդ. Բարձ. եր. 141—142. Կիր. եր. 89—90 և 142)։

Մեծ-կողմանց իշխաններ-Կիւլստանի

Ճիրանշահ.
Ուզ.
Հասան.
Հասմբեր.
Սասնայ եղբայր Հասմբերի. (Արցախ եր. 227)։
Վահրամ-Ճահ «Թիւ ՉԹ... ես Խուռում (Հախփախմէ... եղբայր իմ Վահրամ-Ճահ» (Արցախ եր. 222)։

Ազգաբանութիւն Հաթերքի իշխանաց

Այս տոհմն ծագած է Առանշահիկ իշխաններից, որոց իշխողներն հետզհետէ Ծարից իջած են մինչև Հաթերք։ Սակայն անկարելի եղաւ գտնել շղթայի առաջին օղակը, վասն որոյ սկսում եմ գտնուած օղակից։
Վախտանգ Ա.
Հասան Ա. և Սակռ որդիք Վախտանգայ Ա-ոյ.
Վախտանգ Բ. որդի Հասանայ Ա-ոյ. հայր Ջալալ-Դօլայի.
Վախտանգ Գ. որդի Սակռա կամ Սակառայ.
Հասան Բ. և Գրիգոր որդիք Վախտանգ Գ.-ի։ Հասանս հրա-

գում, շինել են տալիս Տուուչեցի Յովհաննէս ճգնազգեաց եպիսկոպոսի ձեռնով Վարագայ գեղեցիկ վանքը (Արցախ եր. 336—338 և Վարդ. Բարձ. եր. 201—204)։

ւիրում է Մեծ-Սիւնեաց Բաղաբերդի Սմբատ իշխանից և Գրիգոր Թագաւորից, որք անզաւակ էին. Գրիգոր Թագաւորն ունէր միայն մի աղջիկ Կատայ անուն։ «Ետ ածել 'ի Խաչենոյ իշխանաց մանուկ մի Հասան անուն 'ի Գեռաքարեցեացն և ետ զդուստր իւր Կատայն նմա 'ի կնութիւն և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ. և ինքն և եղբայր իւր Սմբատ յառաջ քան զառնուլն բերդին մեռանին։ Մինչ զբերդն կամէին առնուլ՝ Հասան կացոյց բերդապահս, և ինքն առեալ զկին իւր և զընտանիս՝ 'ի գիշերի ել 'ի բերդէն և անց գնաց 'ի գաւառ իւր և 'ի տունն 'ի Խաչէն» (Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 79—81)։
Հասան թագաւորս Կատայից ունենում է երեք որդի—Վախտանգ թագաւորազն, Սմբատ թագաւորազն և Վասակ թագաւորազն։ Վախճանւում է Կատան և Հասան թագաւորս կրկին ամուսնանում է Կիւրիկէ թագաւորի Մամա անուն դստեր հետ, որից ծնում է երեք որդի՝ Գրիգոր, Խոյդան և Գրիգորիս [1])։ Թագաւորս արձանագրած է իւր համար. «Կամաւն Աստուծոյ ես Հասան որդի Վախտանգայ, տէր Հաթերքոյ և Հանդաբերդոյ, Խաչենաբերդոյ և Հաւքախաղացին կացի յաւագութեանս ամս Խ. (40), շատ պատերազմս յաղթեցի թշնամեաց իմոց աւգնականութեամբն Աստուծոյ. և եղեն ինձ Զ. (6) որդի. զբերդս և զգաւառս ետու նոցա և ես եկի 'ի վանս (Դադի) մօտ իմ եղբայր

---

